ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՏՈՒՀԱՆ

(EUROPEAN WINDOW)

«168 ժամ» թերթի ամսական ներդիրի հոդվածների ժողովածու

Սույն հոդվածների ժողովածուն պատրաստվել և հրատարակվել է Եվրոպական Միության աջակցությամբ: Ժողովածուի բովանդակության համար պատասխանատվություն է կրում միայն «168 ժամ» թերթը:
Այն որևէ ձևով չի արտահայտում Եվրոպական Միության տեսակետները:

Ֆինանսավորվել է Եվրոպական միության կողմից

Իրականացվել է «Ինտերնյուս Եվրոպա» կոնսորցիումի կողմից

Նյութերը պատրաստել է «168 ժամ» թերթը

Service Contract # 171.327

ENPI Info & Communication-Regional East-Caucasus-TV, radio, press and internet activities

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

ԱՇԽԻ ԵՎ ՊՈՂՊԱՏԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԻՑ՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ 5

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ՝ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՃԱՆԱՊԱՐՀ 7

ԹԻՎ ՄԵԿ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐԸ 9

ԱՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ 12

ՏԻՄ-Ը ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՉԷ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ 15

ԼՈՆԴՈՆ-ՓԱՐԻԶ-ԵՐԵՎԱՆ 17

ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՍԻՆԴՐՈՄԸ 19

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՈՒԼՂԱՐԻԱՅՈՒՄ 21

ԵՄ-Ի ԾՐԱԳՐԵՐԸ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՉԵՆ ԿՐԻ 23

ԼԵՀԱՍՏԱՆԸ ԳՆԱՑ ԴԵՊԻ «ԱԶ»՝ ՔԻՉ ՃԱՅՆԵՐՈՎ 26

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԾԵՐԸ 28

ԻՐԱԿԱՆ ԵՎ ԻՄԻՏԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ 31

ԲՈԼՈՆՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ՝ ԻՆՉՊԵՍ ՈՐ Է 33

TEMPUS. ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ 35

ԴԵՊԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԱԾՔ 38

ԱԿՏԻ՞Վ, ԹԵ՞ ՊԱՍԻՎ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ 41

«ԵՄ-Ն «ԳԱՂՏՆԻ ՊՈՏԵՆՑԻԱԼ» ՈՒՆԻ» 44

«ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ՝ ԴԵՊԻ ՀԱՇՏԵՑՈՒՄ» 46

Հարավային Տիրոլ. ԵՂԱՆԱԿԸ ԼԵՌՆԵՐՈՒՄ 48

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՃԵՎՈՎ 50

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՈՐԾԻՔ՝ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ 52

ԵՄ-Ի ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՕԳՆՈՒՄ Է 54

ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐԸ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՍՂՈՒԹՅՈՒՆՆ Է 57

«ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ» 60

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ, ԱՅՆՈՒԱՄԵՆԱՅՆԻՎ, ՊԱՏՐԱՍՏ Է 61
ԱՐԺԵՔՆԵՐԸ ՉԿԻՐԱՌՎԵԼՈՎ՝ ԴԱՌՆՈՒՄ ԵՆ ՀԱԿԱԱՐԺԵՔՆԵՐ 64
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ԵՆ 66
ՆԱԵՎ «ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ» 68
ԱՄԵՆ ԻՆՉ ԿԱՐԵԼԻ Է ՍԿՍԵԼ ՀԵՆՑ ԷԿՈԼՈԳԻԱՅԻՑ 70
ԲԱՐԵԿԵՑԻԿ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ 74
ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ 76
ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐՆ ԱՍՏԻՃԱՆԱԲԱՐ ԿՈՏՐՎՈՒՄ ԵՆ 78
ՇԵՆԳԵՆՅԱՆ ՎԻԶԱ 81
ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ՝ ԴԵՊԻ ՎԻԶԱՅԻՆ ՌԵԺԻՄԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՈՒՄ 83
ԲԻԶՆԵՍՆ ՈՒ ՎԻԶԱՆ 85
ԴԵՊԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 88
ԱՌԱՅԺՄ՝ ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ 92
«ԱՐԴԵՆ ԻՍԿ ՊՏՈՒՂՆԵՐ ՏՎԵԼ Է» 93
ԵՄ-Ն ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ՈՒՆԵՆԱԼ ՀԱՎԱՍԱՐ ԳՈՐԾԸՆԿԵՐ 95
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿԱՐԵՎՈՐ ԴԵՐԱԿԱՏԱՐ 98
ԵՎՐՈՊԱՅԻՆ ՄՈՏԵՆԱԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ 101
ՀԱՅԱՍՏԱՆՆ ԱՌԱՋԻՆՆ Է ԼԻՆԵԼՈՒ 103
ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՃՈՒՄ Է 106
«ՄԵՐ ԵՎ ԵՎՐՈՊԱՑԻՆԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԸՆԿՆՈՒՄ ԵՆ» 108
«ԵՎՐՈՊԱԿԱՆ ՎԵԿՏՈՐԸ ՃԻՇՏ Է ԸՆՏՐՎԱԾ» 111
ԵՎՐՈՊԱՆ ԼԱՎ ՕՐԻՆԱԿ Է ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ 113
Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ 115

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գտնվելով երկու քաղաքակրթությունների՝ Արևելքի ու Արևմուտքի խաչմերուկում, այսօր մենք մեզ ավելի շատ համարում ենք եվրոպացի ու ձգտում ենք ինտեգրվել եվրոպական ընտանիքին: Եվրոպացիներն իրենք էլ սկզբունքայնորեն դեմ չեն, որ մենք մաս կազմենք իրենց ընտանիքին: Եվրամիությունը սկզբում մեզ հետ պարզապես համագործակցում էր, օգնում, հետո պաշտոնապես դարձանք Եվրոպայի հարևան, ավելի ուշ՝ նաև գործընկեր-հարևան: Այսօր քննարկվում է ավելի խորը գործընկերության հնարավորության հարցը, և անգամ ամենահոռետեսները չեն կարող բացառել, որ թեկուզ տարիներ անց, բայց մենք էլ կդառնանք ԵՄ լիիրավ անդամ: Եվրոպացիները դրան էլ դեմ չեն: Այս դեպքում ամեն ինչ կախված է հենց մեզանից՝ որքանո՞վ ենք մենք պատրաստ ընդունել եվրոպական չափանիշները ու իրական քայլեր կատարել այդ չափանիշներին մոտենալու համար:

Ի թիվս մտածելակերպի ու ավանդույթների որոշ տարբերությունների, տնտեսական զարգացման աստիճանի և նման այլ դժվարությունների՝ գլխավոր խնդիրներից մեկը մնում է տեղեկացվածության պակասը: Հայաստանցիների մեծամասնությունը շատ քիչ բան գիտի Եվրոպայի վերաբերյալ՝ նրանց պետական համակարգի, օրենսդրության, ինստիտուտների մասին: «Եվրոպական պատուհանի» հիմնական նպատակը այդ բացը լրացնելն է:

«Եվրոպական պատուհանը» Հայաստան-Եվրամիություն հարաբերություններին նվիրված հավելվածների շարք է, որը 2009 թվականի մարտից մինչև 2010 թվականի հունիսը տպագրվել է «168 ժամ» թերթում՝ ԵՄ «Եվրոպական հարևանության քաղաքականություն» ծրագրի շրջանակներում: Իսկ այս ժողովածուն ներկայացնում է «Եվրոպական պատուհանում» ընդգրկված հրապարակումները:

Տեղեկատվություն և վերլուծություն, հայ և արտասահմանյան փորձագետների կարծիքներ, պաշտոնական տեսակետներ ու գնահատականներ՝ Հայաստան-Եվրամիություն հարաբերությունների վերաբերյալ: Հրապարակումներում ներկայացվել են պետության և հասարակության կենսագործունեության տարբեր բնագավառներում Եվրոպական Միության կողմից իրականացվող ծրագրերը և ընդհանրապես Եվրոպայի դերը ՀՀ-ի կյանքում: «Եվրոպական պատուհանի» էջերում վեր հանված խնդիրներն ու քննարկված թեմաները ներկայացված են «Եվրոպական հարևանության քաղաքականություն» ծրագրի լույսի ներքո: Հոդվածների շարքում տեղ են գտել հրապարակումներ՝ նվիրված քաղաքացիական հասարակության, պետական կառավարման, տեղական ինքնակառավարման համակարգերի, տնտեսության, կրթության, սոցիալական ապահովության, բնապահպանության, հակամարտությունների կարգավորման և բազմաթիվ այլ բնագավառներում եվրոպական փորձին: Ներկայացվել են նաև Եվրամիության կողմից այդ ոլորտներում Հայաստանում իրականացվող ծրագրերը: Հրապարակումներում հարուստ տեղեկատվական նյութ կա նաև եվրոպական կառույցների վերաբերյալ: Այս ժողովածուն կարող է օգտակար լինել ընթերցողների լայն շրջանակի համար՝ լրագրողներ ու քաղաքական գործիչներ, ուսանողներ ու վերլուծաբաններ, պարզապես մարդիկ, ովքեր անտարբեր չեն Հայաստանի եվրահնտեգրման հեռանկարների հարցում: «Եվրոպական պատուհանի» հոդվածների ժողովածուի հրապարակումը նպատակ ունի նաև շարունակել Հայաստան-Եվրոպա հարաբերություններին վերաբերող քննարկումներն ու բանավեճերը:

ԱԾԽԻ ԵՎ ՊՈՂՊԱՏԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԻՑ՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Չնայած եվրոպական տարբեր կառույցների ու կազմակերպությունների հետ Հայաստանի անդամակցությունը սկսել է ՀՀ-ի անկախացումից գրեթե անմիջապես հետո, մինչև օրս էլ մեր հասարակության մեջ միասնական Եվրոպայի մասին պատկերացումները միասնական չեն: Դա արտահայտվում է նույնիսկ տեղեկացվածության հարթությունում. այսօր կարելի է հանդիպել շատերին, ովքեր չգիտեն, ասենք, Եվրամիության և Եվրոպայի խորհրդի տարբերությունները: Իսկ դա հանգեցնում է նաև այս կառույցներից յուրաքանչյուրի, արդյունքում՝ Եվրոպայի հասարակական ոչ միանշանակ ընկալման: Այդ առումով, կարծում ենք, արդարացված է մեր առաջին թողարկումը սկսել Եվրամիության մասին տեղեկատվությամբ: Եվ ուրեմն՝ ի՞նչ է Եվրամիությունը:

Եվրոպական Միությունն իր տեսակի մեջ յուրահատուկ տնտեսական և քաղաքական համագործակցություն է, որը միավորում է եվրոպական 27 ժողովրդավարական պետությունների: Դրանք այն երկրներն են, որոնք ստորագրել են Եվրոպական Միության մասին համաձայնագիրը (Մասաթրիխթյան համաձայնագիր): ԵՄ-ն ինքնատիպ միջազգային կառույց է, այն իմաստով, որ նրանում ներդաշնակված են թե՛ միջազգային կազմակերպության, թե՛ պետության բնորոշ գծեր: Սակայն ֆորմալ առումով ԵՄ-ն չի հանդիսանում ո՛չ մեկը, և ո՛չ էլ մյուսը: Եվրոպական ինտեգրացիայի գործընթացի մեկնարկային կետ է համարվում Ֆրանսիայի արտգործնախարար Ռոբեր Շումանի հռչակագիրը (1950թ. մայիսի 9), որով առաջարկվում էր ստեղծել Ածխի և պողպատի եվրոպական միավորում (ԱՊԵՄ): Այս կառույցի հիմնադրման պայմանագիրը ստորագրեցին 6 երկրներ՝ Ֆրանսիան, Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունը, Բելգիան, Նիդեռլանդները, Լյուքսեմբուրգը և Իտալիան, 1951թ. ապրիլի 18-ին: Սա համարվում է ներկայիս Եվրամիության ստեղծման պատմության առաջին փուլը: Ածխի և մետալուրգիայի ոլորտի ինտեգրացումը ճանապարհ հարթեց տնտեսության մյուս ճյուղերի զարգացման և ինտեգրացիայի համար, ինչի արդյունքում՝ 1957թ. մարտի 25-ին, ԱՊԵՄ անդամ երկրները ստորագրեցին Եվրոպական տնտեսական համագործակցության (ԵՏՀ) հիմ-

նադրման և Ատոմային էներգիայի եվրոպական ընկերակցության մասին պայմանագրերը: Վերը նշված երեք կառույցներից ամենամեծ դերակատարությունն ունեցավ ԵՏՀ-ն, որի գլխավոր նպատակն էր՝ մաքսային միության և ընդհանուր շուկայի ստեղծում՝ անդամ երկրների տարածքում մարդկանց, ապրանքների, կապիտալի և ծառայությունների ազատ տեղաշարժն ապահովելու համար: Պայմանագիրը ստորագրած երկրները պարտավորվեցին ներդաշնակեցնել իրենց տնտեսական քաղաքականությունը և օրենսդրությունը: ԵՏՀ-ի հաջող զարգացմանը զուգահեռ՝ եվրոպական մյուս պետությունները սկսեցին մեկը մյուսի ետևից անդամակցել նրան հետևյալ ժամանակագրական հաջորդականությամբ՝ 1973թ.՝ Մեծ Բրիտանիա, Դանիա, Իռլանդիա, 1981թ.՝ Հունաստան, 1986թ.՝ Իսպանիա, Պորտուգալիա, 1995թ.՝ Ավստրիա, Ֆինլանդիա, Շվեդիա, 2004թ.՝ Հունգարիա, Կիպրոս, Լատվիա, Լիտվա, Մալթա, Լեհաստան, Սլովակիա, Սլովենիա, Չեխիա, Էստոնիա, 2007թ.՝ Բուլղարիա, Ռումինիա: Իսկ ըստ էության, այս գործընթացի հիմքը համավող ԵՏՀ-ի կայացումը տեղի է ունեցել մի քանի փուլերով:

1957-1968: Ազատ առևտրի գոտու ստեղծում: Վերացվեցին անդամ-պետությունների միջև մաքսային տուրքերը, քվոտաները և այլ սահմանափակումները:

1968-1987: Մաքսային միություն: Միասնական մաքսային ռեժիմ և առևտրային քաղաքականություն՝ երրորդ երկրների հետ հարաբերություններում:

1987-1992: Միասնական ներքին շուկա: Աշխատուժի, կապիտալի և ծառայությունների ազատ տեղաշարժ:

1992-2002: Տնտեսական և արժութային միություն: Միասնական դրամավարկային քաղաքականություն և միասնական արժույթ՝ եվրո:

Եվրոպական համայնքի ընդլայնման ընթացքում՝ 1992թ. փետրվարի 7-ին, հոլանդական Մասաթրիխթ քաղաքում ստորագրվեց կարևոր մի համաձայնագիր, որը սկիզբ դրեց այժմյան Եվրոպական Միությանը:

Ներկայումս էլ ԵՄ-ն գտնվում է որոշակի վերափոխումների գործընթացում: Մի կողմից կատարելագործվում են ԵՄ անդամ պետությունների և հարևան երկրների միջև տնտեսական համագործակցության մեխանիզմները, մյուս կողմից՝ ԵՄ-ի, այսպես ասած, քաղաքական համակարգը: Խոսքը մասնավորապես Եվրոպական Սահմանադրության մասին է: «Եվրոպայի համար Սահմանադրության ընդունման մասին պայմանագիր» պաշտոնական անվանումով այդ փաստաթուղթը ստորագրվել է Հռոմում՝ 2004 թ. հոկտեմբերի 20-ին:

Բ. ԹՈՒՆՅԱՆ

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ՝ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՃԱՆԱՊԱՐՀ

Եվրոպայի հետ Հայաստանի համագործակցությունը բավական տարողունակ է և իրականացվում է բազմաթիվ ուղղություններով:

Այդ համագործակցության քաղաքական բաղադրիչներից մեկը ՀՀ-Եվրոպայի խորհուրդ (ԵԽ) հարաբերություններն են, ինչը պայմանականորեն կարելի է համարել ՀՀ-ին՝ դեպի միասնական Եվրոպա տանող միջանկյալ ճանապարհ: ՀՀ-ում հաճախ կարելի է հանդիպել մարդկանց, ովքեր ՀՀ-Եվրոպա համագործակցությունը նույնացնում են ՀՀ-ԵԽ հարաբերությունների հետ: Ընդ որում, դա երբեմն նաև դառնում է շահարկումների առարկա: Օրինակ, ՀՀ-ում արդեն թևավոր է դարձել այն արտահայտությունը, թե «Եվրախորհուրդը մեզ համար Պոլիտբյուրո չէ»: Նման գնահատականներ են հնչում հիմնականում այն ժամանակ, երբ ՀՀ-ն թերանում է ԵԽ-ի առաջ ստանձնած պարտավորությունների կատարման մեջ: ԵԽ-ն այն եվրոպական կազմակերպություններից է, որին ՀՀ-ն 2003թ. անդամագրվել է որպես լիիրավ անդամ: Անդամագրվելով ԵԽ-ին, Հայաստանը ստանձնել է մի շարք պարտավորություններ՝ ժողովրդավարական ազատությունների ամրապնդման, համապատասխան ինստիտուտների և ենթակառուցվածքների ձևավորման, ԼՂ-ի հակամարտությունը խաղաղ ճանապարհով հանգուցալուծելու և մի շարք այլ հարցերի վերաբերյալ: Այսինքն՝ 2003թ. ի վեր ԵԽ-ի կողմից ՀՀ-ն գտնվում է մոնիտորինգի ռեժիմում: Այդ ընթացքում ՀՀ-ում կատարվել են բազմաթիվ օրենսդրական և ինստիտուցիոնալ փոփոխություններ, որոնց մի մասը հասարակական հնչեղություն է ստացել (օրինակ՝ մահապատժի վերացումը, այլընտրանքային զինծառայության ամրագրումը և այլն): Բացի այդ, ՀՀ հասարակությունը շատ քաղաքականացված է, ինչն առաջին հերթին արտահայտվում է համապետական ընտրությունների ժամանակ, երբ եվրոպական տարբեր կառույցներ իրականացնում են մոնիտորինգներ, որոնց արդյունքները դառնում են հասարակական-քաղաքական քննարկումների օրակարգի անբաժանելի մաս (օրինակ՝ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելությունների զեկույցները): Դրանք անդրադառնում են նաև ՀՀ-ԵԽ հարաբերությունների վրա: Այդ փոխկապակցվածությունը կրկին արդիական դարձավ 2008թ. ՀՀ նախագահի ընտրություններից և դրան հաջորդած իրադարձություններից հետո: Նման խնդիրներ էին առաջացել նաև 2003թ. նախագահի ընտրություններից հետո, երբ կրկին քննարկվում էր ԵԽ ԽՎ-ի կողմից ՀՀ-ի նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու հարցը, ինչը տեղի չունեցավ միջանկյալ լուծումների շնորհիվ: Սակայն 2008թ. փետրվարի 19-ի ընտրություններից և հայտնի մարտյան իրադարձություններից հետո ԵԽ ԽՎ-ում տեղի ունեցած զարգացումները ամենաբարդն էին 2003թ. ի վեր ՀՀ-ԵԽ հարաբերություններում: 2008թ. փետրվարի 19-ից հետո ԵԽ ԽՎ-ն ՀՀ-ի վերաբերյալ ընդունեց 3 հիմնական բա-

նաձևեր (1609, 1620, 1643), որոնցում լուծումներ էին առաջարկում ՀՀ-ում ստեղծված ճգնաժամը հաղթահարելու համար: Այդ բանաձևերի պահանջների ոչ բավարար կատարման արդյունքում 2008թ. դեկտեմբերին ԵԽ ԽՎ Մոնիտորինգի հանձնաժողովն առաջարկեց ԵԽ ԽՎ-ին՝ հունվարյան նստաշրջանում ՀՀ-ին զրկել ձայնի իրավունքից: Սակայն դա տեղի չունեցավ, և ՀՀ-ին հնարավորություն տրվեց մինչև ապրիլյան նստաշրջան համապատասխան քայլեր կատարելու համար: Այս օրինակը լավագույնս ապացուցում է, որ ԵԽ-ն որոշակիորեն միջանկյալ դեր է խաղում ՀՀ-Եվրոպա հարաբերություններում:

Լ. ՍԵՅՐԱՆՅԱՆ

ԹԻՎ ՄԵԿ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐԸ

Հայաստանում «շենգենի վիզա» արտահայտությունը համարվում է Եվրոպա մուտք գործելու առաջին նախապայմանը: Հասարակության շրջանում դրա առկայությունը ընկալվում է որպես երկրներում ազատ տեղաշարժի, հետևաբար նաև՝ բիզնեսով զբաղվելու հնարավորություն: Սակայն նույնիսկ գործող «վիզային ռեժիմի» պայմաններում, Եվրամիությունը տնտեսական առումով առաջնային նշանակություն ունի Հայաստանի առևտրային հարաբերություններում:

Եվրոպայի հետ Հայաստանի տնտեսական հարաբերությունները և համագործակցությունը սկիզբ են առել 1991 թ. Հայաստանի անկախացումից անմիջապես հետո: Պետք է նշել, որ այդ հարաբերություններում գերիշխող է եղել ֆինանսական, տեխնիկական և մարդասիրական օգնության դերակատարությունը. 1991թ. ի վեր Եվրոպական հանձնաժողովի աջակցությունը ՀՀ-ին կազմել է ավելի քան 380 միլիոն եվրո: Մարդասիրական աջակցությունը կազմել է մոտ 120 միլիոն եվրո և նպաստել է 1990-ականների կեսերին ՀՀ-ում ստեղծված դժվարին իրավիճակի մեղմացմանը: Միայն Եվրամիության TACIS ծրագրի ազգային հատկացումների և Պարենի ապահովության ծրագրի կողմից ՀՀ-ին տրամադրված միջոցների ծավալը կազմել է շուրջ 200 միլիոն եվրո: ՀՀ անկախացումից ի վեր TACIS-ը նպաստել է Հայաստանի անցմանը շուկայական տնտեսությանը՝ հիմնականում իրավական և կարգավորիչ դաշտերում աջակցության, ՀՀ օրենսդրությունը ԵՄ-ի հետ մերձեցման և Հայաստանի՝ Առևտրի Համաշխարհային Կազմակերպությանը անդամակցելու աջակցության միջոցով:

Իրավական կարգավորում

ՀՀ-ԵՄ հարաբերությունների (այդ թվում՝ տնտեսական) իրավական կարգավորումը սկսվել է ՀՀ անկախացումից 5 տարի անց՝ 1996թ. ապրիլի 22-ին Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Համայնքների ու դրանց անդամ պետությունների միջև կնքված և 1999թ. հուլիսի 1-ին ուժի մեջ մտած Գործընկերության և համագործակցության մասին համաձայնագրով (ԳՀՀ), որը հանդիսանում է ԵՄ-Հայաստան հարաբերությունների իրավական հիմքը և համագործակցության լայն բնագավառներ է սահմանում քաղաքական երկխոսության, առևտրի, ներդրումների, տնտեսական, օրենսդրական և մշակութային համագործակցության համար: Կողմերը համաձայնվել են միմյանց տալ Ամենանպաստավոր Պետության կարգավիճակ: Նշենք նաև, որ մինչև վերջերս ՀՀ-ն օգտվում էր ԵՄ-ի Արտոնությունների Ընդհանրացված Համակարգից (GSP), որը վերջերս փոխարին-

վեց ավելի մեծ հնարավորություններ ընձեռող GSP+ համակարգով:

Հարևանության օգուտները

2004թ. մայիսի 1-ին Եվրամիությունն ընդլայնվեց՝ իր կազմում ընդունելով տասը նոր անդամ-պետությունների: Դա փոփոխություններ մտցրեց ԵՄ-ի քաղաքական աշխարհագրությունում՝ նոր հնարավորություններ ընձեռելով միության և իր հարևանների միջև գոյություն ունեցող հարաբերությունների ամրապնդման համար: 2004թ. հունիսին Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանն ընդգրկվեցին Եվրոպական հարևանության քաղաքականության ծրագրի շրջանակներում: ԵՄ նախաձեռնությամբ ՀՀ-ի ընդգրկումը Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում ՀՀ-ԵՄ հարաբերությունները տեղափոխեց որակական նոր մակարդակ. գործընկեր և համագործակցող կարգավիճակ ունեցող երկրից Հայաստանը դարձավ ԵՄ հարևան երկիր: 2006թ. նոյեմբերի 14-ին Բրյուսելում հաստատվեց և ստորագրվեց ՀՀ-ԵՄ համատեղ Գործողությունների ծրագիրը (ԳՕ)՝ նպատակ ունենալով նպաստել ՀՀ օրենսդրության, իրավական նորմերի և ստանդարտների ներդաշնակեցմանը ԵՄ չափանիշերին, ամուր հիմքեր ստեղծել հետագա տնտեսական ինտեգրման համար՝ հիմնվելով տնտեսության և առևտրի բնագավառում այնպիսի կանոնների և դրույթների ընդունման և կիրառման վրա, որոնք կխթանեն առևտուրը, ներդրումները և տնտեսական աճը: 2005թ. մայիսի 1-ին ստեղծվեց ԵՄ-ում ՀՀ առևտրային ներկայացուցչությունը, և նշանակվեց ներկայացուցիչ, որի նստավայրը Բրյուսելն է:

GSP+

Ինչպես արդեն նշվեց, ՀՀ-ն օգտվում էր ԵՄ-ի «Արտոնությունների Ընդհանրացված Համակարգ» (GSP) առևտրային ռեժիմից: 2009թ. հունվարի 1-ից GSP-ն փոխարինվեց «Արտոնությունների Ընդհանրացված, Համալրված Համակարգ» (GSP+) առևտրային ռեժիմով: GSP+ ռեժիմը հնարավորություն է տալիս համակարգից օգտվող երկրներին շուրջ 6400 ապրանքատեսակներ ԵՄ շուկաներ արտահանել զրոյական կամ զգալիորեն նվազեցված մաքսատուրքերով: ԵՄ-ում ՀՀ առևտրային ներկայացուցիչ Գարեգին Մելքոնյանի խոսքերով, սա կնպաստի ՀՀ-ԵՄ առևտրի ծավալների աճին և հայկական արտադրանքի՝ ԵՄ երկրներում ճանաչում ձեռք բերելուն: Ռեժիմը գործելու է մինչև 2011թ. ավարտը, սակայն այժմ առևտրի ոլորտում նոր բանակցություններ են ընթանում ազատ առևտրի ռեժիմի անցնելու վերաբերյալ: Նման բանակցությունները սովորաբար տևում են 1-2 տարի, և բանակցային գործընթացի բարեհաջող ավարտից հետո ՀՀ-ն կարող է ընդգրկվել ԵՄ երկրների հետ առևտրի զրոյական մաքսատուրքի համակարգում:

Ամենամեծ տեսակարար կշիռը

Եվրամիությունը ներկայումս հանդիսանում է ՀՀ թիվ 1 առևտրային գործընկերը: Ասվածի ապացույցն է այն, որ 2008թ. ՀՀ արտաքին առևտրաշրջանառության 35.3%-ը բաժին է ընկնում ԵՄ երկրներին (գծապատկեր 1): Այդ միտումը շարունակվել է նաև հաջորդող տարիներին:



Գծ. 1. ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը 2008թ., տեսակարար կշիռ, %

Ընդ որում, ՀՀ-ԵՄ արտաքին առևտրաշրջանառությունը աճել է նախանձելի տեմպերով: Եթե 2003թ. առևտրաշրջանառության ծավալը կազմում էր ընդամենը 687.4 միլիոն դոլար, ապա 2008-ին այդ ցուցանիշը կազմել է 1.698 միլիարդ: Այսինքն՝ 5 տարվա ընթացքում ՀՀ-ԵՄ առևտրաշրջանառությունը աճել է 2.5 անգամ: Նշենք նաև, որ ԵՄ-ն ՀՀ-ի համար, այսպես ասած, ավելի շահավետ գործընկեր է՝ այն առումով, որ ՀՀ-ի ընդհանուր արտահանման շուրջ 54%-ը բաժին է ընկնում հենց ԵՄ երկրներին (առաջին հերթին՝ Գերմանիային և Նիդեռլանդներին):

ԲԱԲԿԵՆ ԹՈՒՆՅԱՆ

ԱՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

2009 թվականի մարտի 20-ին Բրյուսելում կայացած գագաթաժողովի ընթացքում Եվրամիության անդամ 27 երկրների ղեկավարները հավանություն տվեցին Արևելյան գործընկերության ծրագրին, որը նախատեսում է սերտացնել ԵՄ ռազմավարական համագործակցությունը հետխորհրդային վեց պետությունների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի, Ուկրաինայի և Բելառուսի հետ:

Հայաստանյան լրատվամիջոցներով տարածված այս տեղեկատվությունը հայաստանցիներին կարծես այնքան էլ չհետաքրքրեց: Պատճառները տարբեր են. նախ՝ Հայաստանի հասարակությունը (այդ թվում՝ հասարակության ակտիվ հատվածը) կենտրոնացած է մեր ներքին խնդիրների վրա, և երկրի սահմաններից դուրս կատարվող զարգացումները մեզ այնքան էլ չեն հետաքրքրում: Երկրորդ պատճառը տեղեկատվության պակասն է: Գաղտնիք չէ, որ անգամ պետական պաշտոնյաների մի ստվար մասը չգիտի՝ որն է Եվրամիության և Եվրոպայի խորհրդի տարբերությունը: Իսկ այդ բնագավառում արձանագրված վերջին զարգացումների, եվրոպական կառույցների, նրանց հետ համագործակցության և այդ համագործակցության ընձեռած հնարավորությունների մասին շատերը նույնիսկ պատկերացում չունեն: Մինչդեռ, եթե ուղղակի հայտարարվեր, որ Հայաստանի քաղաքացիները կարող են հեշտությամբ Եվրամիության երկրների մուտքի թույլտվություն՝ վիզա ստանալ, մեկնել, օրինական կարգով աշխատել ԵՄ ցանկացած երկրում, այդ լուրը առավոտից երեկո կլիներ բոլորի ուշադրության կենտրոնում՝ սկսած թոշակառուներով, վերջացրած ուսանողներով: Մինչդեռ նույն «Արևելյան գործընկերության» ծրագիրը նման հնարավորություն նախատեսում է…

Առաջին քայլերը

Ժամանակագրական կտրվածքով Եվրամիություն-Հայաստան հարաբերություններն անցել են զարգացման մի քանի փուլերով: 1999 թվականից ուժի մեջ մտավ ԵՄ-Հայաստան գործընկերության և համագործակցության համաձայնագիրը: Այն նպատակ ուներ նպաստել ժողովրդավարության, օրենքի իշխանության և մարդու իրավունքների ոլորտում առաջընթացին, ինչպես նաև՝ տնտեսական բարեփոխումներին և առևտրի ազատականացմանն ուղղված քայլերին: Ավելի ուշ Եվրամիությունը սկսեց իրականացնել «Եվրոպական հարևանության քաղաքականություն» ծրագիրը, որը նպատակաուղղված էր թվով 17 երկրների հետ (այդ թվում՝ Մերձավոր Արևելքի և աֆրիկյան երկրների) գործընկերության զարգացմանը: Երկրներից յուրաքանչյուրի հետ կնքվեց Գործողությունների ծրագիր: Հայաստանի գործողությունների ծրագիրն ընդունվեց 2006թ. նոյեմբերին: Այդ ժամանակվանից ի վեր ԵՄ-ն նյութական և տեխնիկական աջակցություն է ցուցաբերել մեր Հայաստանին՝ տնտեսական, իրավական, կրթական, սոցիալական և այլ ոլորտներում:



Արևելյան գործընկերության մասին

Եվ այսպես, ինչպես արդեն նշեցինք, Եվրոպան Հայաստանին առաջարկեց հարևանից վերածվել գործընկերոջ: «Արևելյան գործընկերության ծրագիրն» ավելի սերտ համագործակցություն է ենթադրում, և շրջանակն էլ ավելի նեղ է: Կարելի է ասել, այն նախատեսված է այն երկրների համար, որոնք հետագայում կարող են դառնալ ԵՄ անդամ (նշենք, որ ԱԳԾ նախաձեռնողներից մեկը՝ Լեհաստանը, ինքն էլ ԵՄ համեմատաբար նոր անդամ է): Իհարկե, դա հազիվ թե տեղի ունենա մոտ ապագայում: Ասվածի ավելի պատկերավոր վկայությունն է Եվրահանձնաժողովի հարևանության եվրոպական քաղաքականության բաժնի տնօրեն Ջոն Օ'Ռուրկեի հայտարարությունը, ըստ որի՝ «Արևելյան գործընկերության» նախաձեռնությունը «հետնամուտք» չէ ԵՄ թափանցելու համար: Ինչպես նշված է Բրյուսելի գագաթաժողովի հայտարարության մեջ, ծրագրում ընդգրկված երկրները «ռազմավարական կարևորություն» ունեն ԵՄ-ի համար: ԵՄ-ն մտադիր է խթանել տարածաշրջանում կայունության և բարեկեցության հաստատումը և հեռանկարում ավելի սերտ քաղաքական և տնտեսական ինտեգրման հասնել: Ապագայում նախատեսվում է գործընկերության պետությունների հետ ստորագրել ասոցիացիոն պայմանագրեր, որոնք էլ կսահմանեն համագործակցության հիմնական սկզբունքներն ու մեխանիզմները: Այս ամենի դիմաց Եվրոպան իր հարևաններից ակնկալում է

բարեփոխումներ ժողովրդավարության և շուկայական տնտեսության բնագավառներում: Հարկ է նշել, որ այս նախաձեռնությունը դուր եկավ ոչ բոլորին: Առաջին հերթին՝ Ռուսաստանին: Իսկ ի՞նչ է շահում Եվրոպան՝ գործընկերային հարաբերություններ հաստատելով անցումային փուլում գտնվող, ամենևին ոչ հասուն ժողովրդավարությամբ երկրների հետ: Ներկայումս Եվրամիության նախագահող երկրի՝ Չեխիայի ԱԳ նախարար Կարլ Շվարցենբերգի կարծիքով՝ լավ գործընկերներ: «Սա հաղթանակ է ոչ միայն շահագրգիռ պետությունների, այլև, ամենից զատ, Եվրամիության համար»,- հայտարարել է նա: ՌԴ-ն գտնում է, որ Եվրոպան այս նախաձեռնությամբ փորձում է թուլացնել իր ազդեցությունը տարածաշրջանում՝ ստեղծելով, այսպես կոչված, «Եվրոպայի Անկախ պետությունների համագործակցություն»:

Հայաստանը՝ գործընկերոջ կարգավիճակում

Հայաստանն արդեն ընդունել է ԵՄ առաջարկը, ինչպես առաջարկ ստացած մյուս երկրները: Իսկ ի՞նչ ենք ստանում մենք դրանից: Թվում է՝ պատասխանը պարզ է: Ինչպես արդեն նշեցինք՝ արտոնյալ պայմաններ՝ կապված անցագրային ռեժիմի, աշխատանքի և ապրանք-ծառայությունների եվրոպական շուկա դուրս գալու հետ: ԵՄ-ն գործընկեր երկրների համար սահմանել է մի շարք պայմաններ, որոնք բխում են հենց մեր շահերից: Խոսքը վերաբերում է թե՛ ժողովրդավարության ամրապնդմանն ուղղված բարեփոխումներին, թե՛ տնտեսական հարաբերություններին: Այսինքն, այս հարցում հաջողություններ արձանագրելու հարաբերությունները մեծապես կախված են նաև մեզանից՝ քանի որ, ձևական քայլերի դեպքում, ոչ մի արդյունք չի լինի: Սա շատ նման է, երբ ծնողն իր երեխային խոսք է տալիս կիսամյակը գերազանց ավարտելու դեպքում հեծանիվ գնել: Երեխայի համար այդ պահին կարևորը հեծանիվն է, սակայն տարիներ անց հանուն հեծանիվի ստացած գիտելիքներն են նրան պետք գալու:

ԲԱԲԿԵՆ ԹՈՒՆՅԱՆ

ՏԻՄ-Ը ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՉԷ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հարցազրույց Ֆրանսիայի Պլեսի-Ռոբինսոն քաղաքի քաղաքապետ, Օ-դը-Սեն նահանգի խորհրդի փոխնախագահ Ֆիլիպ Պեմեզեկի հետ

- Ինչպե՞ս են Ֆրանսիայում ձևավորվում տեղական ինքնակառավարման մարմինները: Որքանո՞վ է Ֆրանսիական տեղական ինքնակառավարման համակարգը համահունչ եվրոպական մյուս երկրների համապատասխան մարմինների հետ:

- Տեղական ինքնակառավարման մարմինները՝ ՏԻՄ պետության վարչարարությունից տարբեր վարչական կառույցներ են, որոնք պետք է իրենց պատասխանատվության տակ վերցնեն որոշակի տարածքի բնակչության շահերը: ՏԻՄ-ն ունի որոշում կայացնելու հնարավորություն, որն իրականացվում է ընտրված ներկայացուցիչների խորհրդում քննարկման միջոցով: ՏԻՄ-երը կազմված են համընդհանուր ընտրական իրավունքով ընտրված որոշում կայացնող ասամբլեայից և իր ներսում ասամբլեայի կողմից ընտրված գործադիր իշխանությունից (քաղաքապետ և իր տեղակալներ, ընդհանուր և շրջանային խորհուրդների նախագահներ):

- Ինչպե՞ս է կոնկրետ ձեր համայնքում ձևավորվում համայնքային բյուջեն և որքա՞ն է այն կազմում ըստ հոդվածների:

- Վերին Սենայի դեպարտամենտի վերջին բյուջեն, որի փոխնախագահներից եմ ես, հետևյալն է՝ Գործունեության եկամուտներ՝ 609 միլիոն եվրո՝ ուղղակի հարկում, 281 մլն եվրո՝ գրանցման իրավունքներ, 267 մլն եվրո՝ գործունեության ընդհանուր դոտացիա, 90 մլն եվրո՝ ներքին հարկ նավթային արտադրանքների վրա, 68 մլն եվրո՝ հարկ ապահովագրական պայմանագրերի վրա, 10.5 մլն եվրո՝ հարկ էլեկտրաէներգիայի վրա: Բացի այդ, ունենք նաև ներդրումային եկամուտներ՝հետևյալ կառուցվածքով. 240 մլն եվրո՝ փոխառություն, 28 մլն եվրո՝ ԱԱՀ-ի փոխհատուցման հիմնադրամ, 7 մլն եվրո՝ քոլեջների կահավորման դեպարտամենտալ դոտացիա:

- ՏԻՄ Ձեր համակարգը կատարո՞ւմ է իշխանության ապակենտրոնացման ֆունկցիան: Ինչպե՞ս են կարգավորվում և գործադիր իշխանության և ՏԻՄ-երի հարաբերությունները, եթե ՏԻՄ-երը ներկայացված են ընդդիմությունից:

- Ֆրանսիայում ապակենտրոնացման առաջին օրենքներն իրենց սկիզբը դրել են 1871թ. օգոստոսի 10-ին և 1884թ. ապրիլի 5-ին: Այդ ժամանակաշրջանում դեպարտամենտների և կոմունաների ընդհանուր պարտավորությունները շատ սահմանափակ էին: 1982թ. մարտի 2-ին հաստատված

Դեֆերի օրենքը համարվում է որպես ապակենտրոնացման առաջին ակտ և նրան տալիս է ամբողջական հասանելիություն: Ի պատասխան Դեֆերի օրենքի, 1983թ. հունվարի 7-ի և 1983թ. հուլիսի 22-ի օրենքները բաշխում են պարտավորությունները պետության և ՏԻՄ-երի միջև և հաստատում ռեսուրսների փոխանցումը: Այս տարբեր օրենքները հաջորդեցին ապակենտրոնացում հիմնելու գեներալ դը Գոլի ձախողված առաջին փորձին: Ժան-Պիեռ Ռաֆարենի կառավարությունը 2002-2004թթ. ապակենտրոնացման բարեփոխումը քաղաքական առաջնային խնդիր դարձրեց, մասնավորապես ապակենտրոնացված կազմակերպման վերաբերյալ 2003թ. մարտի 28-ի սահմանադրական օրենքով: Այդ օրենքը առաջ քաշեց ՏԻՄ-երի ֆինանսական ինքնավարության սկզբունքը և Սահմանադրության մեջ ներառեց շրջան և ապակենտրոնացում տերմինները: Այն նաև սահմանեց տեղական վճռական հանրաքվեն և հանրագրի իրավունք: Տեղական ինքնավարման, ընդհանուր և շրջանային խորհուրդները ընտրվում են համընդհանուր ընտրական ուղղակի իրավունքով, իսկ այդ կազմավորումների գործադիր մարմիններն ընտրվում են իրենց ներսում որոշում կայացնող անդամների կողմից: Սահմանադրության 72 հոդվածում կա վարչական ինքնավարության սահմանադրական հիմնավորում. «Օրենքով նախատեսված հանգամանքներում այդ կազմավորումները ազատ կերպով յուրացվում են ընտրված խորհուրդների կողմից և կանոնակարգային իշխանություն ունեն՝ իրենց պարտավորության իրականացման համար»: Ապակենտրոնացման հիմնական արժանիքներից մեկն է՝ հնարավորինս հարմարեցնել հանրային քաղաքականությունները բնակչության կարիքներին: Ամեն դեպքում դա կարող է տարածքում առաջ բերել նոր անհավասարակշռություններ՝ տարբեր քաղաքական գործիչների ընտրության և տեղական ինքնակառավարման մարմինների ռեսուրսների անհավասարության հետ կապված: Ոմանք այն ռիսկ են համարում, ոմանք էլ՝ որպես գործունեության ազատություն՝ տեղական մակարդակով հարմար առիթն օգտագործելու համար:

- *Ձեր կարծիքով՝ տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի, ասենք՝ քաղաքապետի ուղղակի ընտրությունը բնակիչների կողմից, որքանո՞վ է նպաստում նրա գործունեության արդյունավետությանն ու հաշվետվողականության սկզբունքի պահպանմանը:*

- Բոլոր ընտրություններում կապը քաղաքացիների և ընտրվողների միջև պետք է լինի միևնույնը, հատկապես հայտարարված նպատակների և արդյունքների հանդեպ վստահությունը (նախընտրական ծրագիրը): Ակնհայտորեն, երբեմն միայն մեկ մանդատը բավարար չէ՝ մի ամբողջ ծրագիր կիրառել կարողանալու համար: Ուրեմն, հաղորդակցումը պետք է լինի շատ զարգացած ձևով, որպեսզի յուրաքանչյուրին բացատրվի ծրագրի առաջխաղացումը: Դրա շնորհիվ, պաշտոնում ընտրվածը կարող է հուսալ, որ իրեն կվերընտրեն, որ բարեհաջող կերպով ավարտի այն բարեփոխումները, որոնց համար ինքն ընտրվել է:

ԼԻԼԻԹ ՍԵՅՐԱՆՅԱՆ

ԼՈՆԴՈՆ-ՓԱՐԻԶ-ԵՐԵՎԱՆ

Կարո՞ղ է արդյոք մայրաքաղաքն ունենալ ընդդիմադիր քաղաքապետ: Եթե այս հարցը մեզանում քննարկվում, անգամ՝ շահարկվում է, եվրոպական երկրներում հարցն ինքնին անհեթեթ կթվար: Ավելին՝ եթե եվրոպական քաղաքներում, անգամ մայրաքաղաքներում, միշտ քաղաքապետ ընտրվեր իշխանության ներկայացուցիչը, եվրոպացիները հաստատ կանհանգստանային՝ ուրեմն ինչ-որ բան այնպես չէ:

Մեզ՝ հայերիս համար դա անհավանական է թվում, սակայն աշխարհի շատ երկրներում մայրաքաղաքների քաղաքապետերը ներկայացնում են ընդդիմությունը: Օրինակ՝ Փարիզի քաղաքապետ Բերտրան Դելանոն ներկայացնում է ընդդիմադիր Սոցիալիստական կուսակցությունը: Այդ պաշտոնը նա զբաղեցնում է 2001 թվականից ի վեր: Մինչդեռ երկրի գործադիր իշխանությունը՝ նախագահից սկսած, պատկանում է Ժողովրդական շարժման միությանը: Բերտրան Դելանոն 2012թ. Ֆրանսիայի նախագահական ընտրություններին ՍԿ-ի ամենահավանական թեկնածուն է:

Հետաքրքրասերների համար նշենք, որ մինչև Ֆրանսիական հեղափոխությունը Փարիզի մունիցիպալիտետը գլխավորում էին, այսպես կոչված, պրովոստները: 1789թ. հուլիսի 14-ին, Բաստիլի գրավումից հետո, Փարիզի վերջին պրովոստ Ժակ դե Ֆլեսսելը սպանվեց: Իսկ հաջորդ օրն ընտրվեց Փարիզի առաջին քաղաքապետը՝ Ժան Սիլվեն Բալին:

Ավելի թարմ օրինակ՝ Մեծ Բրիտանիայի մայրաքաղաք Լոնդոնը ղեկավարում է Բորիս Ջոնսոնը, որը ներկայացնում է ընդդիմադիր Պահպանողական կուսակցությունը (իշխող կուսակցությունը Մեծ Բրիտանիայում Լեյբորիստականն է): Լոնդոնի քաղաքապետի պաշտոնում նա ընտրվել է 2008թ. մայիսի 8-ին: Մինչ այդ, քաղաքապետի պաշտոնը զբաղեցնում էր անկուսակցական Քեն Լիվինգսթոնը՝ 2000 թվականից ի վեր: Լիվինգսթոնն, ի դեպ, Լոնդոնի առաջին ընտրովի քաղաքապետն էր: Մինչ այդ քաղաքը ղեկավարվում էր քաղաքային խորհրդի կողմից, որի նախագահը սահմանափակ լիազորություններ ուներ: Սակայն 2000թ. մայիսի 4-ին կատարված օրենսդրական փոփոխություններից հետո լոնդոնցիներն ուղղակի ընտրությամբ են ընտրում քաղաքապետին:

Նշենք նաև, որ Լոնդոնի քաղաքապետից (Mayor of London) բացի, կա նաև մեկ այլ պաշտոն՝ Լոնդոնի Լորդ քաղաքապետ (Lord Mayor of London): Շատերը շփոթում են այս երկու պաշտոնները, մինչդեռ դրանք լիովին տարբեր են: Լոնդոնի քաղաքապետը ընտրվում է բնակչության կողմից և ղեկավարում է, այսպես կոչված, Մեծ Լոնդոնը՝ 7.5 միլիոն բնակչությամբ: Լորդ քաղաքապետի պաշտոնն ավելի արարողակարգային, խորհրդանշական է: Ընտրվում է պառլամենտում, ներկայացնում Լոնդոնի Սիթին (քաղաքի կենտրոնական մասը, որը հայտնի է ֆինանսական հաստատություններով): Լորդ քաղաքապետն ապաքաղաքական դեմք է (պաշտոնապես չի անդամակցում որևէ կուսակցության), և նրա հիմնական ֆունկցիան, ինչպես դարեր առաջ, եղել և մնում է՝ ներկայաց-

նել, աջակցել և զարգացնել Լոնդոնի Սիթիի գործարարների և բնակիչների շահերը: Լոնդոնի ներկայիս Լորդ քաղաքապետն է Ալդերման Յան Լյուդերը:

Վերադառնալով բուն թեմային, նշենք, որ այս երկու օրինակները ցույց են տալիս, թե ինչպես կարելի է ունենալ արդյունավետ քաղաքային իշխանություններ, որոնք ներկայացնում են ընդդիմադիր քաղաքական ուժերը: Կարծում ենք՝ քչերը կառարկեն, որ Փարիզն ու Լոնդոնը աշխարհի ամենակարևոր քաղաքներից են, հետևաբար՝ նրանց կառավարումը բավականին դժվար գործ է, որը հաջողությամբ իրականացնում է ընդդիմադիր քաղաքապետը:

ԲԱԲԿԵՆ ԹՈՒՆՅԱՆ

ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՍԻՆԴՐՈՄԸ

2009 թվականի հունիսի սկզբին Եվրամիության անդամ 27 երկրներում տեղի ունեցան Եվրոպական խորհրդարանի՝ Եվրամիության բարձրագույն օրենսդիր և վերահսկողական մարմնի ընտրությունները:

Ընտրությունների գլխավոր արդյունքն այն էր, որ աջակողմյան կուսակցությունները (պահպանողականներ) կարողացան պահպանել մեծամասնությունը Եվրոպառլամենտում: Աջ ցենտրիստական Եվրոպական ժողովրդական կուսակցությունը, կամ, ինչպես նրանց ընդունված է անվանել՝ եվրոպական դեմոկրատները, ստացան 736 պատգամավորական մանդատներից 264-ը: Երկրորդ տեղում սոցիալիստներն են՝ 161 մանդատներով: Եվրոպառլամենտում մանդատներ ստացան նաև լիբերալները՝ 80 մանդատ, «կանաչները»՝ 53, միավորված ձախերը՝ 32, Եվրոպայի ազգերի միությունը՝ 35, և անկախ պատգամավորները՝ 18 տեղ: Այսպես կոչված, «մյուսները», որոնց թվին են դասվում ծայրահեղ աջ ուղղվածության կուսակցությունները, ստացան 93 մանդատ:

Փաստորեն, ընտրությունների արդյունքներով՝ Եվրոպառլամենտում կտրուկ, շրջադարձային փոփոխություններ չեղան: Դա վկայում է այն մասին, որ Եվրոպառլամենտը սկզբունքորեն կպահպանի գործունեության հիմնական ուղղություններն ու գերակայությունները:

Ընտրություններում արձանագրված բազմաթիվ հետաքրքիր փաստերից մեկն էլ այն էր, որ պահպանողականներն ավելի շատ քվեներ են ստացել, քան սոցիալ-դեմոկրատները: Վերլուծաբանների կարծիքով, դա նշանակում է, որ նույնիսկ համաշխարհային ֆինանսական ճգնաժամի պայմաններում Եվրոպայի երկրների մեծ մասում քաղաքացիները հավատում էին գործող ֆինանսատնտեսական համակարգին և նրա «վերածննդի» հնարավորությանը:

Այդուհանդերձ, այդ ընտրությունների սենսացիան, դիտորդների մեծամասնության կարծիքով՝ այն էր, որ պատմության մեջ առաջին անգամ աջ ծայրահեղական Բրիտանական ազգային կուսակցությունը (որը հանդես է գալիս կառավարության իմիգրացիոն քաղաքականության դեմ) Եվրոպառլամենտում մանդատ ստացավ: Այն դեպքում, երբ Մեծ Բրիտանիայի իշխող՝ լեյբորիստական կուսակցությունը ընտրություններում ստացած քվեների քանակով ընդամենը երրորդ տեղն է գրավել: Առաջատարը ընդ-

դիմադիր պահպանողական կուսակցությունն է, իսկ երկրորդ տեղը գրավել է Անկախության բրիտանական կուսակցությունը, որը հանդես է գալիս Մեծ Բրիտանիայի՝ ԵՄ կազմից դուրս գալու գաղափարի օգտին: Եվրոպառլամենտի վերջին ընտրությունների հաջորդ կարևոր նրբերանգը, որի մասին խոսում են բոլորը, պատմության մեջ արձանագրված ընտրողների ամենացածր մասնակցությունն է. ընտրությանը մասնակցել է ընտրության իրավունք ունեցող 375 միլիոն քաղաքացիների 43.2%-ը: Սա յուրօրինակ ռեկորդ է: Համեմատության համար նշենք, որ 30 տարի առաջ ԵՊ ընտրություններին մասնակցել է ընտրողների երկու երրորդը: Իսկ 2009 թ. ընտրություններին մասնակցել է ընտրողների կեսից պակաս հատվածը, որոշ երկրներում՝ նույնիսկ մեկ երրորդից էլ պակաս:

Ամենացածր մասնակցությունը գրանցվել է Լիտվայում՝ ընդամենը 15.7%: Լիտվայի նորանկախ պատմության 18 տարիների ընթացքում սա առաջին դեպքն է, որ ժողովուրդը, փաստորեն, արհամարհել է ընտրությունները:

Ընդհանուր առմամբ, ողջ Եվրոպայում է նկատվում ընտրողների անտարբերության աճի միտում: Վերլուծաբանների կարծիքով՝ գլխավոր պատճառը համաշխարհային ճգնաժամն է: Այն ազդում է մարդկանց տրամադրությունների վրա, և նրանք չեն կարողանում կողմնորոշվել՝ ո՞ր քաղաքական հոսանքը ի վիճակի կլինի դրսևորել լավագույն ինտելեկտուալ և կազմակերպչական ունակություններ և դիմակայել ներկայիս մարտահրավերներին:

ԲԱԲԿԵՆ ԹՈՒՆՅԱՆ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՈՒԼՂԱՐԻԱՅՈՒՄ

Նախերգանք՝ համապետական ընտրություններից առաջ

2009 թվականի հունիսի 7-ին Բուլղարիայի քաղաքացիները ընտրեցին Եվրոպական պառլամենտի 17 բուլղարացի անդամներին, որոնք առաջիկա 5 տարիներին կներկայացնեն երկիրը Եվրամիության միակ ընտրովի մարմնում: Սա Բուլղարիայում անցկացվող երկրորդ եվրոպական ընտրությունն էր՝ 2007թ. ընտրություններից հետո:

Եվրոպառլամենտի ընտրությունները սովորաբար ավելի պակաս հետաքրքրություն են ներկայացնում ԵՄ երկրների ընտրողների համար, քան ազգային ընտրությունները, և Բուլղարիան այդ առումով բացառություն չէր: Իհարկե, 2007թ. ընտրողների 29% մասնակցության համեմատ երկու տարի անց քաղաքացիներն ավելի ակտիվ էին՝ 39%, սակայն դա զգալիորեն զիջում էր ԵՄ-ում արձանագրված միջին ցուցանիշին՝ 43%: Նշենք նաև, որ մասնակցության ԵՄ միջին ցուցանիշն էլ իր հերթին պատմականորեն ամենացածրն էր. 1979թ. Եվրոպառլամենտի ընտրություններին մասնակցել է ընտրողների 62%-ը: Մյուս հատկանշական կողմ այն է, որ ԵՊ բուլղարացի անդամների ընտրությունները երկրի ազդեցիկ կուսակցությունների համար ավելի շատ նախապատրաստական փուլ էր՝ 2009 թվականի հուլիսի 5-ին կայանալիք Ազգային ժողովի ընտրությունների համար: Կուսակցությունները, բացառությամբ մի քանիսի, ավելի քիչ ջանքեր ու էներգիա էին ներդրել քարոզարշավի ընթացքում, որը սովորականից ավելի կարճ տևեց (ընդամենը 21 օր): Ընդ որում, ուշադրության կենտրոնում ոչ թե համաեվրոպական հարցերն էին՝ ինչպիսիք են, ասենք, ԵՄ ապագա դերը գլոբալ զարգացումներում, Լիսաբոնյան համաձայնագիրը կամ Թուրքիայի անդամակցությունը, այլ ներքաղաքական խնդիրները՝ կոռուպցիան և տնտեսական վիճակը: Իսկ ընտրության արդյունքները կուսակցությունների համար ոչ այլ ինչ էին, քան քաղաքական տրամադրությունների ընդարձակ և ներկայացուցչական հետազոտություն՝ իրենց համար շատ ավելի մեծ նշանակություն ունեցող ԱԺ ընտրություններից առաջ:

Երրորդ. ակնհայտ դարձավ, որ հաղթող կուսակցության՝ Սոֆիայի քաղաքապետ Բոյկո Բորիսովի ԳԵՐԲ-ի աջակիցների թիվն ավելի քիչ է, քան սպասվում էր: Այն ստացավ ձայների 24.4%-ը: Երկրորդ տեղում ԳԵՐԲ-ի հիմնական մրցակից, վարչապետ Սերգեյ Ստանիշևի՝ Բուլղարիայի Սոցիալիստական կուսակցությունն էր (ԲՍԿ)՝ 18.5%, որին հաջորդում էին էթնիկ թուրքերի՝ Իրավունքների և ազատությունների շարժումը (ԻԱՇ)՝

14.1%, ծայրահեղ աջ Հարձակողական կուսակցությունը (11.96%), նախկին թագավորի NDSV կուսակցությունը (7.96%) և Կապույտ կոալիցիան (7.95%), որը Բուլղարիան դուրս բերեց 1996-97թթ. տնտեսական ճգնաժամից: Նշենք, որ ձայներ գնելու մեխանիզմներն այս անգամ ավելի էին կատարելագործվել, և կանխիկ վճարումների դեպքերը նվազել էին: Բացի այդ, ի հայտ եկան 2 նոր ֆենոմեններ՝ կորպորատիվ քվեարկություն (corporate voting) և քվեների «փոխներարկում» (vote transfusion): Նորաստեղծ «Լիդեր» կուսակցությանը պատկանող մի քանի մեծ ընկերությունների և հանքերի աշխատակիցներին զգուշացրել են, որ պետք է իրենց քվեն տան այդ կուսակցությանը, եթե չեն ուզում աշխատանքից ազատվել կամ ավելի քիչ աշխատավարձ ստանալ: Արդյունքում «Լիդերը», այն վայրերում, որտեղ հանքեր և ընկերություններ ունի, հավաքեց 50% ձայն: Ինչ վերաբերում է ձայների փոխներարկմանը, ապա այս երևույթը նկատվեց թուրքական Իրավունքների և Ազատությունների շարժման դեպքում: Այս ուժի ընտրազանգվածը շատ կարգապահ է և ենթարկվող, սակայն այս անգամ նրանց ձայների մի մասը գնաց «Լիդերին» կամ NDSV-ին, որը նախընտրական սոցհարցումների համաձայն՝ գրեթե շանսեր չուներ ԵՊ-ում ներկայացուցիչ ունենալու: Մեկնաբանների կարծիքով, այս ամենը իշխող կոալիցիայի (ԲՍԿ, ԻԱՇ և NDSV) ռազմավարությունն էր, որը ցանկանում է ամեն գնով գոյատևել:

ՍՏԵՖԱՆ ՌԱԼՉԵՎ
Անկախ լրագրող, Սոֆիա

ԵՄ-Ի ԾՐԱԳՐԵՐԸ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՉԵՆ ԿՐԻ

Եվրախորհրդարանի 2009 թվականի հունիսի 4-7-ը կայացած ընտրությունները Հայաստանում քչերին էին հետաքրքրում: Նույնիսկ շատ քաղաքական գործիչներ կամ ընդհանրապես տեղյակ չէին այդ իրադարձության մասին, կամ էլ ուղղակի անտարբեր էին: Այդուհանդերձ, հետաքրքիր էր՝ ինչպես են գնահատում ՀՀ քաղաքական որոշ ուժերի ներկայացուցիչները Եվրախորհրդարանի այդ ընտրությունները, և նրանց կարծիքով՝ ինչպե՞ս կարող են դրանք անդրադառնալ ԵՄ-ի կողմից իրականացվող Նոր հարևանության քաղաքականության վրա, որն ուղղակիորեն առնչվում է նաև Հայաստանին:

Նաիրա Զոհրաբյան, ԱԺ Եվրոինտեգրման հարցերով մշտական հանձնաժողովի նախագահ. «Եվրախորհրդարանի ընտրության հանդեպ տոտալ պասիվությունը շրջանառության մեջ դրեց նոր տերմին՝ «չմասնակցության նիշ», որը, օրինակ, Ֆրանսիայում հասավ ռեկորդային ցուցանիշի՝ 57 տոկոս: «Չմասնակցության ցուցանիշի» որոշակի տատանումներով վիճակը նույնն էր գրեթե ամենուր: Ի՞նչ արձանագրեցին ԵԽ ընտրությունները: 2004թ. ընտրություններից հետո ԵՄ-ում աճում է «ապաքաղաքականության տենդենցը»: Եթե մեկ ձևակերպմամբ ամփոփենք Եվրախորհրդարանի ընտրության ողջ պատկերը, ապա այն հետևյալն էր՝ սոցիալ-դեմոկրատական ուժերի պարտություն, աջ-պահպանողականների հաղթանակ: Ինչը նշանակում է, որ ըստ էության, ուժերի դասավորությունը Եվրախորհրդարանում էական փոփոխություններ չի կրի: Ինչ վերաբերում է հարցին՝ կարո՞ղ են արդյոք Եվրոպական նոր հարևանության ծրագրի վրա ազդեցություն ունենալ այս ընտրությունները, ապա ռազմավարական առումով որևէ փոփոխություն, վստահ եմ, չի լինի: Քանզի ԵՄ-ի քաղաքականությունը մեր տարածաշրջանում հստակ է և այն չի կարող կախված լինել խորհրդարանի կազմից: Ուստի, միանշանակ է, որ եվրոպական քաղաքականությունը մեր տարածաշրջանում գնալով ակտիվանալու է: Այնպես որ, կարծում եմ, թե՛ «Եվրոպական հարևանության քաղաքականություն» ծրագիրը, և թե՛ «Արևելյան գործընկերություն» նախաձեռնությունը, որը ԵՄ-ի և մեր տարածաշրջանի միջև համագործակցության բավականին լուրջ հեռանկար է խոստանում, որևէ ռազմավարական փոփոխություն չեն կրելու»:

Ստեփան Սաֆարյան, ԱԺ «Ժառանգություն» խմբակցության պատգամավոր. «Նման ընտրությունների արդյունքները, ճիշտն ասած՝ այնպիսի մեծ պետություններում կամ ուժային կենտրոններում, ինչպիսիք ԱՄՆ-ը կամ ԵՄ-ն են, որպես կանոն, շատ քիչ ազդեցություն կարող են ունենալ ԵՄ-ի կողմից վարվող արտաքին քաղաքականության վրա: Որովհետև ԵՄ կառուցվածքները բավականին կոշտ են, և անկախ նրանից, թե ովքեր կընտրվեն, կան արդեն իսկ ըն-

դունված, հավանության արժանացած փաստաթղթեր, ինչպիսիք, օրինակ, Եվրոպական հարևանության քաղաքականությունն է և «Արևելյան գործընկերության» ծրագիրը, որոնք անկախ ամեն ինչից՝ իրականացվելու են: Խնդիրը այն է, թե՝ կախված այս կամ այն քաղաքական հոսանքի դոմինանտությունից, ինչ թափով և ինչ եղանակներով կիրականացվեն այդ ծրագրերը և ինչ հետևողականությամբ:

Այդուհանդերձ, այդ ընտրությունների արդյունքները, մեծ ազդեցություն, որպես այդպիսին, չեն կարող թողնել արդեն իսկ ընդունված ծրագրերի իրականացման վրա:

Տիգրան Թորոսյան, ԱԺ Եվրոինտեգրման հարցերով մշտական հանձնաժողովի անդամ, անկախ պատգամավոր. «Եվրախորհրդարանի ընտրության արդյունքների ազդեցությունը ԵՄ քաղաքական կյանքի վրա գնահատելու համար անհրաժեշտ է հաշվի առնել մի քանի հանգամանք: Նախ, Եվրախորհրդարանի ազդեցությունը քաղաքական կյանքի վրա բավական թույլ է, քանի որ այդ կառույցի որոշումներն առաջին հերթին խորհրդատվական նշանակություն ունեն: Հեշտ է նկատել նաև, որ Եվրախորհրդարանի քաղաքական խմբակցությունների տեսակետները միմյանցից տարբերվում են ոչ թե արմատական հարցադրումներով, այլ այս կամ այն խնդրի վերաբերյալ դիրքորոշումների նրբություններով: Ավելին, հատուկ ջանքեր են գործադրվում առկա տարբերությունների վերացման ուղղությամբ անգամ այնպիսի մասնավոր հարցում, ինչպիսին պատգամավորների աշխատավարձն է: Եթե մինչ այժմ նրանց աշխատավարձերը որոշում էին իրենց երկրները, ապա այսուհետև սահմանված է միասնական աշխատավարձ: Այս պարագայում ակնհայտ է, որ չպետք է սպասել որևէ լուրջ քաղաքական փոփոխություն այս ընտրությունների հետևանքով: Անգամ դժվար է հիշել, թե վերջին անգամ երբ է նման բան տեղի ունեցել:

Իսկ ինչ վերաբերում է հարցին՝ ընտրության արդյունքները կազդե՞ն Նոր հարևանության ծրագրի իրագործման ընթացքի վրա, թե՞ ոչ, ապա՝ իհարկե չեն ազդի: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ չկա որևէ քաղաքական նախադրյալ այդ ծրագրում արմատական փոփոխություններ անելու համար, առավել ևս, որ ծրագրի զգալի մասն արդեն ետևում է: Առավել ևս, որ Եվրամիությունը ընդլայնում է նման բնույթ ունեցող ծրագրերը, մասնավորապես, սկսել է նոր ծրագիր՝ «Արևելյան գործընկերություն», դրանում ընդգրկված երկրների համար ավելի հետաքրքիր հեռանկարներով:

Հովհաննես Իգիթյան, Հայ Ազգային կոնգրեսի ներկայացուցիչ. «Ես ուղղակի ձևով չէի կապի Եվրոպառլամենտի ընտրությունները Նոր հարևանության ծրագրի հետ: Ընդհանրապես մենք կարող ենք մեկնաբանել Եվրոպառլամենտի այդ ընտրությունները և տեսնել, որ ընդհանուր մոտեցումն է փոխվում: Որոշ ուժեր, որոնք կենտրոնամետ են մի երկրում, ավելի շատ ձայներ են ստանում մեկ այլ երկրում և հակառակը, ազգայ-

նական ուժերը մեկ այլ երկրում ավելի շատ ձայներ են ստանում, քան իրենց երկրում: Սա մի գործընթաց է, որը պետք չէ կապել Հայաստանի հետ, դա կապենք այն հանգամանքի հետ, որ ԵՄ-ն ինքը փնտրում է այն բանաձևը, որով ինքը պետք է էֆեկտիվ աշխատի: Սա մի գործընթաց է, որը ես ոչ մի ձևով չեմ կապում Նոր հարևանության և «Արևելյան գործընկերության» ծրագրերի հետ: «Արևելյան գործընկերության» ծրագիրն այն սկզբունքներն են, մոտեցումն է, որը արդեն արտահայտել է ԵՄ-ն: Բայց այստեղ կան գործընկերներ՝ 6 երկիր, ահա այստեղ ամեն երկիր ինքը պետք է որոշի՝ ինչ չափով է տեղավորում այստեղ, այդ ծրագրի մեջ, կամ ինչ չափով ինքը կուզենար այդտեղ տեղավորվել: Եվ այդ ծրագրի էֆեկտիվ գործունեությունը մեր դեպքում կախված է միայն ու միայն մեր իշխանություններից: Ինչքանով նրանք անկեղծ են, երբ ասում են՝ մենք մեր երկիրը կառուցում ենք նույն չափանիշներով, ինչ չափանիշներով կառուցում է ԵՄ-ն»:

ԼԻԼԻԹ ՍԵՅՐԱՆՅԱՆ

ԼԵՀԱՍՏԱՆԸ ԳՆԱՑ ԴԵՊԻ «ԱՋ»՝ ՔԻՉ ՁԱՅՆԵՐՈՎ

2009 թվականի հունիսի 7-ին կայացած Եվրոպառլամենտի ընտրություններում Լեհաստանում վստահ հաղթանակ տարավ իշխող աջ-ցենտրիստական «Քաղաքացիական պլատֆորմը»՝ ստանալով քվեների 45%-ը:

1989թ. ի վեր սա ՔՊ-ի ամենամեծ հաղթանակն էր, որը ոգևորեց իշխող կուսակցությանն ու վարչապետ Դոնալդ Տուսկին: «Կառավարությունը ստացավ վստահության նոր քվե»,- հայտարարել էր Տուսկը ընտրություններից հետո: Մինչդեռ իշխանության հաղթանակը ԵՊ ընտրություններում արձանագրվեց աննախադեպ ցածր մասնակցության ֆոնին:

Եվրոպառլամենտի ընտրություններում Լեհաստանում մասնակցեց ընտրողների ընդամենը 24%-ը: Ո՞րն է նման ցածր մասնակցության պատճառը: Միանգամից նշենք, որ ընտրողների անտարբերությունը չի կարող բացատրվել նրանով՝ իբր լեհերը դժգոհ են ԵՄ քաղաքականությունից: Հակառակը, Եվրամիությունը շարունակում է գրավիչ մնալ լեհերի համար, հատկապես՝ լայնամասշտաբ ֆինանսական աջակցության առումով: 2007-2013թթ. Լեհաստանը ԵՄ-ից կստանա ընդհանուր առմամբ 87 միլիարդ եվրո, որը կուղղվի ենթակառուցվածքների զարգացմանը, մարդկային կապիտալի, շրջակա միջավայրի պահպանությանը, գյուղատնտեսությանը, փոքր և միջին բիզնեսին աջակցությանը: Լեհաստանը համեմատաբար ավելի քիչ է տուժել համաշխարհային ճգնաժամից: Բացի ֆինանսական օգնությունից, ԵՄ-ին անդամակցությունը Լեհաստանին այլ հնարավորություններ է տալիս, մասնավորապես՝ ապրանք-ծառայությունների, աշխատուժի և կապիտալի ազատ տեղաշարժի իրավունք: Լեհերը կարող են առանց անձնագրի շրջել ԵՄ երկրներում, սովորել՝ առանց լրացուցիչ թույլտվությունների, և աշխատել՝ հիմնականում առանց սահմանափակումների: Այս ամենի հետ մեկտեղ՝ լեհերի մեծամասնությունը չի մասնակցում այն կառույցի խորհրդարանի ձևավորմանը, որն իրենց տալիս է նման հնարավորություններ: Ցածր մասնակցության վրա ազդում են 4 հիմնական գործոններ.

1. Վստահության պակասը, որ քաղաքական գործիչները կարող են ինչոր բան փոխել դեպի լավը կամ կատարել իրենց խոստումները,

2. ԵՄ քաղաքացիների ցածր տեղեկացվածությունը Եվրոպառլամենտի ընտրությունների և ընդհանրապես՝ այդ կառույցի դերի մասին՝ ԵՄ-ում որոշումների կայացման գործընթացում:

3. Ընդհանուր մոտեցումը, որ ԵՄ նոր անդամների դերը Եվրամիության քաղաքականության մշակման հարցում շատ փոքր է:

4. Քաղաքական գործիչների անգործությունը՝ եվրոպական կառույցների, արժեքների, ժողովրդավարության մասին տեղեկացվածությունը բարձրացնելու հարցում:

Ցավոք, Լեհաստանում ԵՊ ընտրությունը պարզապես գեղեցկության և PR ստրատեգիաների ցուցադրություն է, և ոչ մի ընդհանուր բան չունի իրական քաղաքական ծրագրերի հետ: Նկատվում է խնդիրները շարքային քաղաքացիների հետ քննարկելու պակաս: Մտահոգիչ է նաև այն, որ քաղաքական գործիչները կարծես ցանկություն չունեն շտկել վիճակը, ինչը վտանգի տակ է դնում ժողովրդավարությունը և ժողովրդի մասնակցությունը քաղաքական գործընթացներում: Նույն երևույթը նկատվում է ոչ միայն Լեհաստանում, այլև ԵՄ և աշխարհի մյուս երկրներում: Այդ իսկ պատճառով, Լեհաստանում և ամենուր, քաղաքականությունը պետք է դառնա ավելի թափանցիկ, իրատեսական, հաշվետու և վերջին հաշվով՝ հասցեագրված լինի ժողովրդին: Այլապես մենք կունենանք ժողովրդավարություն՝ առանց արմատների՝ առանց ժողովրդի վստահության:

ՊՅՈՏՐ ՍԿՈՒԲԻՇԵՎՍԿԻ
Սոցիալական և տնտեսական հարցերի ինստիտուտ
Վարշավայի քաղաքապետարանի ավագանու անդամ
Վարշավա

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԾԵՐԸ

Եվրոպայի ժողովուրդները կարևոր դեր են խաղացել մարդկության պատմության մեջ: Սկսած ուշ շրջանի միջնադարից և հատկապես 18-րդ դարի վերջից, եվրոպական երկրներում տնտեսական և մշակութային զարգացումը սկսեց շատ արագ ընթանալ:

Բավական է նշել, որ որպես տնտեսակարգ՝ հենց Եվրոպայում է ծնվել շուկայական տնտեսությունը: Եվրոպայի տնտեսական զարգացմանը մեծապես նպաստել է կապիտալի կուտակումը երկրների ներսում, ինչպես նաև՝ միջոցների ներհոսքը գաղութներից: Հսկայական դեր է խաղացել նաև այն հանգամանքը, որ Եվրոպայում է ձևավորվել որակյալ աշխատողների աշխարհում ամենամեծ բանակը: Դրան նպաստեց պարտադիր տարրական կրթության համակարգի ներդրումը (առաջինը աշխարհում), իսկ հետագայում նաև՝ միջնակարգ կրթության համակարգի ներդրումն ու համալսարանների թվի կտրուկ աճը: 16-րդ դարում Եվրոպան համաշխարհային արդյունաբերության առաջատարն էր, սակայն 20-րդ դարում իր դիրքերը զիջեց ԱՄՆ-ին: Եվրոպայի տնտեսությունը բուռն զարգացում ապրեց հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: 1950 թվականից մինչև 2006 թվականը եվրոպական երկրների ընդհանուր ՀՆԱ-ն աճեց ավելի քան 6 անգամ՝ 2 տրիլիոնից հասնելով ավելի քան 12 տրիլիոն դոլարի: Մյուս կողմից, սակայն, Եվրոպայի տեսակարար կշիռը համաշխարհային ՀՆԱ-ում զգալիորեն նվազեց՝ 37%-ից հասնելով 21%-ի: Սակայն 21%-ն էլ, մեղմ ասած, փոքր ցուցանիշ չէ, եթե հաշվի առնենք, որ Եվրոպան զբաղեցնում է երկրագնդի ցամաքի ընդամենը 4%-ը (10.8 մլն քկմ): Աշխատանքի արտադրողականության մակարդակը եվրոպական երկրներում չափազանց բարձր է, ինչն արտահայտվում է մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշով: Միջինում այն կազմում է շուրջ 30 հազար դոլար: Օրինակ՝ 2006թ. տվյալներով, Գերմանիայում մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն կազմում էր 31.400 դոլար, Ֆրանսիայում՝ 30.100 դոլար, Մեծ Բրիտանիայում՝ 31.400 դոլար, Իտալիայում՝ 29.700 դոլար:

Տնտեսական քաղաքականությունը

Եվրոպական երկրների տնտեսական քաղաքականությանը հատուկ է պետության առավել ակտիվ դերակատարությունը՝ ԱՄՆ-ի և Ճապոնիայի

համեմատ: 1980-90 ական թթ. Եվրոպայում պետական հատվածը նկատելիորեն կրճատվեց, սակայն այժմ էլ նրա դերը շարունակում է մեծ մնալ: Օրինակ՝ Ֆրանսիայում արդյունաբերական արտադրանքի 15%-ը թողարկում են պետական ընկերությունները: Համեմատության համար նշենք, որ Ճապոնիայում այդ ցուցանիշը կազմում է 8%, իսկ ԱՄՆ-ում՝ 5-6%: Եվրոպայում բավականին զարգացած է նաև տնտեսության պետական ծրագրավորումը: Արևմտյան աշխարհում առաջին անգամ հենց Եվրոպայում է ձևավորվել և լայն տարածում գտել համազգային տնտեսական պլանավորման տեսությունը և պրակտիկան, ստեղծվել են հատուկ մեխանիզմներ: Այսպես, Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ընկած ողջ ժամանակահատվածում Ֆրանսիայում գործել են սոցիալ-տնտեսական զարգացման 13 պլաններ, որոնք մեծ դեր են խաղացել տնտեսության առանձին ոլորտների ձևավորման և տնտեսական զարգացման տեմպերի արագացման հարցում: Ավելացնենք նաև, որ եվրոպական տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման մոդելը առանձնանում է փոքր և միջին բիզնեսի ակտիվությամբ և տեսակարար կշռով: Փոքր և միջին բիզնեսը ապահովում է ՀՆԱ-ի և զբաղվածության շուրջ 50%-ը:

Ճյուղային կառուցվածքը

Եվրոպայի տնտեսության ճյուղային կառուցվածքը վերջին տարիներին մեծ փոփոխությունների է ենթարկվում: Առավել զարգացած երկրներում գյուղատնտեսությանը բաժին է ընկնում համախառն ներքին արդյունքի ընդամենը 1-3%-ը, իսկ արդյունաբերությանը՝ 20-25%: ՀՆԱ-ի առյուծի բաժինը՝ 70%-ը, ապահովում է ծառայությունների ոլորտը (որոշ երկրներում՝ անգամ 70%-ից ավելին): Չնայած գյուղատնտեսության փոքր տեսակարար կշռին, Եվրոպայում գյուղատնտեսական արտադրությունը աչքի է ընկնում բարձր արդյունավետությամբ՝ ապահովելով բնակչության պարենային ապրանքների պահանջարկը: Ինչ վերաբերում է արդյունաբերությանը, ապա Եվրոպան ապահովում է արդյունաբերական արտադրանքի համաշխարհային ծավալների մեկ երրորդը: Զարգանում է ատոմային էներգետիկան և նավթագազային տնտեսությունը, աճում են ավտոմոբիլային, ավիացիոն, էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը, ռոբոտաշինությունը, քիմիայի և էլեկտրոնիկայի նորագույն ճյուղերը, թեթև և սննդի արդյունաբերությունը: Եվրոպայում զարգացած է տրանսպորտային համակարգը, այստեղ է գտնվում աշխարհի խոշորագույն նավահանգիստը (Ռոտերդամում):

Արտաքին տնտեսական կապերը

Եվրոպան միշտ եղել է միջազգային տնտեսական հարաբերությունների ամենաակտիվ մասնակիցը: Եվրոպական երկրներին, հաշվի առնելով իրենց իսկ միջև եղած կապերը, բաժին է ընկնում համաշխարհային առևտրի ծավալների կեսը, աշխարհի արժութային ռեզերվների և կապիտալի արտահանման ծավալների կեսից ավելին: Ընդհանրապես, ներտարածաշրջանային կապերը Եվրոպայում շատ զարգացած են: Ներկայումս, եվրոպական երկրների արտաքին տնտեսական կապերի երկու երրորդը

բաժին է ընկնում հենց ներեվրոպական հարաբերություններին: Սա պայմանավորված է ինտենսիվ ինտեգրացիոն գործընթացներով, և դրանում մեծ դեր է խաղացել մասնավորապես Եվրամիության ձևավորումը: Եվրամիությունը ներկայումս էլ մեծ դեր է խաղում տարածաշրջանի տնտեսական զարգացման հարցում՝ վարելով միասնական տնտեսական, ֆիսկալ և դրամավարկային քաղաքականություն: Եվրամիության դերը մեծ է նաև ինտեգրացիոն պրոցեսների հարցում, ոչ միայն՝ Եվրոպայի ներսում, այլև՝ դրա սահմաններից դուրս: Ներկայումս ԵՄ երկրների գլխավոր առևտրային գործընկերներն են ԱՄՆ-ը, Ճապոնիան, ինչպես նաև՝ նախկինում եվրոպական երկրների գաղութներ հանդիսացող երկրները: Սակայն ԵՄ-ն փորձում է խորացնել հարաբերությունները նաև իր հարևան երկրների հետ և այդ ուղղությամբ իրականացնում է մի շարք ծրագրեր, օրինակ՝ Նոր հարևանության քաղաքականությունը և 2009 թվականի մայսին մեկնարկած «Արևելյան գործընկերության» ծրագիրը : Ծրագիրը, որին մասնակցում է նաև Հայաստանը, նոր հնարավորություններ է բացում Եվրոպայի հետ հարաբերությունները սերտացնելու համար՝ ամենատարբեր ոլորտներում: Նշենք նաև, որ ներկայումս Եվրամիությունը հանդիսանում է Հայաստանի ամենամեծ առևտրային գործընկերը, որին բաժին է ընկնում մեր արտաքին առևտրաշրջանառության մեկ երրորդից ավելին:

ԲԱԲԿԵՆ ԹՈՒՆՅԱՆ

ԻՐԱԿԱՆ ԵՎ ԻՄԻՏԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հարցազրույց Հայաստանում Եվրամիության Առևտրի պալատի տնօրեն Հովհաննես Իգիթյանի հետ

- Ի պաշտոնե Դուք տեղյակ եք Հայաստան-ԵՄ տնտեսական հարաբերությունների մանրամասներին: Ի՞նչ տնտեսական բաղադրիչներ կառանձնացնեք ԵՄ-ի «Նոր հարևանության քաղաքականություն» և «Արևելյան գործընկերություն» ծրագրերում, որոնք ՀՀ-ի համար կարող են գործնական ազդեցություն ունենալ:

- Հայաստան-ԵՄ հարաբերություններները ես կբաժանեի 4 փուլի: Առաջինը նյութական օգնության փուլն էր, երբ ԵՄ-ն ծրագրերի ձևով ուղղակի օգնում էր ՀՀ-ին: Հետագայում այդ ծրագիրը ստացավ TACIS անվանումը, որը կարելի է համարել երկրորդ փուլ: TACIS-ի ծրագրերը բովանդակությամբ ավելի ընդգրկուն էին և ուղղված էին ոչ միայն օգնությանը, այլ նաև համակարգերի ստեղծմանը: Հայաստան-ԵՄ հարաբերություններում որակապես նոր՝ երրորդ փուլ կարելի է համարել «Նոր հարևանության» ծրագիրը: Այն յուրաքանչյուր երկրի համար պարունակում է գործողությունների առանձին ծրագիր: Եվ յուրաքանչյուր երկիր ձևավորում էր իր հարաբերությունները ԵՄ-ի հետ: Եթե փորձենք կարճ ձևակերպել՝ ինչ է նշանակում «Նոր հարևանության» ծրագիրը, ապա հենց անվանման մեջ առկա է բովանդակությունը: Այսինքն՝ ԵՄ-ն ցանկանում է ունենալ կայուն և բարեկեցիկ հարևաններ: Եվ վերջին՝ չորրորդ փուլը «Արևելյան գործընկերության» ծրագիրն է: Կրկին անվանման մեջ առկա է բովանդակությունը: Կարելի է տեսականորեն նշել, որ ԵՄ-ի ընդլայնումը դեպի Արևելք սահմանափակվում է ծրագրում ընդգրկված 6 երկրներով: Գուցե շատ հեռավոր ապագայում այս երկրները կարող են դառնալ ԵՄ անդամներ: Եվ այս ծրագրում կան այն բաղադրիչները, որոնք անհրաժեշտ են ավելի լայն ինտեգրացիայի համար՝ ազատ առևտրի գոտու ստեղծում այս երկրների միջև, վիզային ավելի բարենպաստ ռեժիմի սահմանում, էներգետիկ համագործակցություն: Արևելյան գործընկերությունը շատ ճկուն համակարգ է: Այսինքն՝ ամեն երկիր կարող է վերցնել այնքան, որքան ինքը կարող է, այսպես ասած, մարսել իր ունակությունների և զարգացման մակարդակի շրջանակներում: Այս ծրագիրը ավելի հստակ ծրագիր է, և իմիտացիոն պրոցեսներով արդեն չես կարող ձևացնել, թե

դու ԵՄ-ի գործընկերն ես, այսինքն՝ երկիրը պետք է կոնկրետ քայլեր անի:

- Ինչպես «Նոր հարևանության», այնպես էլ «Արևելյան գործընկերության» ծրագրերում ներառված են տնտեսական հարաբերություններին վերաբերող կոնկրետ գործիքներ: Ձեր կարծիքով, ե՞րբ գործնականում կկիրառվեն այդ գործիքները, և ե՞րբ կարելի է կոնկրետ արդյունքներ ակնկալել:

- Հայաստանը վաղուց արդեն ընդգրկված է GSP-ի, այսինքն՝ արտոնությունների համընդհանուր համակարգում: Դա հնարավորություն է փոքրինչ արտոնյալ պայմաններով ԵՄ-ի շուկա մուտք գործելու համար: Դա երկու կողմից էլ շահավետ է: Մի կողմից՝ ՀՀ-ի նման երկրներին հնարավորություն էր տրվում կես միլիարդ վճարունակ սպառող ունեցող շուկա մուտք գործել, մյուս կողմից՝ եվրոպական սպառողին ապրանքի և գնի ընտրության հնարավորություն էր տրվում: Դա մեծ հնարավորություն է ՀՀ-ի տնտեսության զարգացման համար: Եթե համեմատենք մեր հարևանների և ռուսական շուկայի հետ, պարզ է, որ ԵՄ-ի շուկան և վարչարարության և օրենսդրական և ոչ կոռումպացված լինելու տեսանկյունից ավելի զարգացած է և վճարունակ: Այդ համակարգը՝ GSP-ն, կարող էր գործել նույնիսկ առանց «Արևելյան գործընկերության» ծրագրի և արդեն սկսում էր արդյունքներ տալ 3-4 տարի առաջ: Բայց այստեղ առաջ են գալիս ներքին տնտեսական և ինչու չէ՝ ներքին քաղաքական խնդիրներ: Խնդիրը միայն այն չէ, որ մեր ապրանքը չի կարող մտնել եվրոպական շուկա, խնդիրն այն է, որ ՀՀ-ի արտահանումը վերջին 3 տարիների ընթացքում նվազել է, և առաջին հերթին դա կապված է դոլարի և եվրոյի նկատմամբ հայկական դրամի արհեստական արժևորման հետ: Ստացվում է, որ ունենալով շատ թանկ տեղական արժույթ, մեր ապրանքի ինքնարժեքը արհեստականորեն բարձրանում է: Դրան գումարվեց նաև համաշխարհային ճգնաժամը: Բացի այդ, Հայաստանը այս 6 երկրների համեմատ ունի տրանսպորտային ավելի մեծ ծախսեր:

- Որքանո՞վ եք հնարավոր համարում երբևէ Հայաստանի անդամակցությունը ԵՄ-ին:

- ԵՄ-ին անդամությունը պետք է դիտարկենք ոչ թե տեխնիկական, այլ արժեքների համակարգի, մենթալիտետի տեսանկյունից՝ այսինքն՝ որքանով ես դու քեզ տեսնում այդ համակարգում: Օրինակ՝ Շվեյցարիան, Նորվեգիան կամ Իսլանդիան ԵՄ-ի անդամներ չեն, բայց լիովին տեղավորվում են այդ համակարգում: Ցավոք, Հայաստանը, հատկապես ՀՀ իշխանությունը, իր գործունեությամբ չի տեղավորվում այդ համակարգում: Եվ հակառակը՝ կարծում եմ՝ իշխանությանը թվում է, որ որքան այդ համակարգը ավելի զարգանա ՀՀ-ում, այդքան իրենք ավելի քիչ շանս կունենան իշխանությունը պահպանելու: Այս տեսանկյունից հենց իշխանական ճամբարում կան բավականին ազդեցիկ շատ ուժեր, որոնք պայքարում են անդամության ուղղությամբ կատարվող գործնական քայլերի դեմ՝ ձևականորեն ցույց տալով, որ հավատարիմ են այդ ուղուն:

Զրուցեց ԼԻԼԻԹ ՍԵՅՐԱՆՅԱՆԸ

ԲՈԼՈՆՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ՝ ԻՆՉՊԵՍ ՈՐ Է

Չնայած վերջին տարիներին շատ է խոսվում «Բոլոնյան գործընթացի» մասին, սակայն հասարակության մեծ մասը պատկերացում չունի՝ ինչ է իրականում այն իրենից ներկայացնում: Հետաքրքիրն այն է, որ կրթական այս գործընթացից շատ դեպքերում անտեղյակ են անգամ կրթական համակարգում անմիջականորեն ներգրավված անձինք՝ հատկապես ուսանողները:

Իսկ «Բոլոնյան» անվանում են Եվրոպայի երկրների կողմից միասնական կրթական տարածություն ստեղծելու գործընթացը, որի մեկնարկը տրվել է 1999 թվականին՝ Իտալիայի Բոլոնիա քաղաքում Բոլոնյան հռչակագրի ստորագրմամբ: Հռչակագրում սահմանվեցին այն հիմնական նպատակներն ու խնդիրները, որոնց լուծման դեպքում Եվրոպայի երկրներում կրթական համակարգերը կդառնան համադրելի, և վերջին հաշվով տեղի կունենա ազգային կրթական համակարգերի ներդաշնակեցում:

Երբ և ինչպես

Բոլոնյան գործընթացի ակունքները հասնում են մինչև 1970-ականների կեսերը, երբ Եվրոպական Միության Նախարարների խորհուրդն ընդունեց «Կրթական համակարգում համագործակցության մասին առաջին արձանագրությունը»: 1988թ. համագործակցության մեխանիզմներն ավելի հստակեցվեցին, երբ Բոլոնիայում եվրոպական համալսարանների ռեկտորները ստորագրեցին, այսպես կոչված, Համալսարանների մեծ Խարտիան (Magna Charta Universitatum)՝ ձևակերպելով այն սկզբունքները, որոնք հետագայում դարձան Բոլոնյան գործընթացի հիմքը: Հաջորդ կարևոր քայլը Սորբոնյան հռչակագրի ստորագրումն է 1998թ. (Հռչակագիրը ստորագրել են Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի և Միացյալ Թագավորության կրթության նախարարները): Դրանից մեկ տարի անց՝ 1999թ., ստորագրվեց արդեն բուն Բոլոնյան Հռչակագիրը:

Մասնակիցները

Բոլոնյան գործընթացը ներկայումս միավորում է 45 երկրներ: Դրանք են՝ Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Իտալիա, Ֆրանսիա, Ավստրիա, Բելգիա, Բուլղարիա, Հունգարիա, Հունաստանը, Դանիա, Իռլանդիա, Իսլանդիա, Իսպանիա, Լատվիա, Լիտվա, Լյուքսեմբուրգը, Մալթան, Հոլանդիա, Նորվեգիա, Լեհաստանը, Պորտուգալիա, Ռումինիա, Սլովակիա, Սլովենիա, Ֆինլանդիա, Չեխիա, Շվեյցարիա, Շվեդիա, Էստոնիա, Կիպրոսը, Լիխտենշտեյնը, Թուրքիա, Խորվաթիա,

Ալբանիան, Անդորրան, Բոսնիա և Հերցեգովինան, Վատիկանը, Մակեդոնիան, Ռուսաստանը, Սերբիան, Չեռնոգորիան, Մոլդովան, Ուկրաինան, Ադրբեջանը, Վրաստանը և Հայաստանը: Հայաստանը Բոլոնյան գործընթացին միացել է 2005թ.:

Խնդիրները

Բոլոնյան հռչակագրում նշված են այն խնդիրները, որոնց լուծումը պետք է նպաստի Եվրոպայի միավորմանը կրթության ոլորտում:

- Բարձրագույն կրթության ոլորտում համընդհանուր, համեմատելի կրթական աստիճանների համակարգի ներդրում,
- Անցում բարձրագույն կրթության երկաստիճան համակարգին (բակալավրիատ, մագիստրատուրա):
- Գնահատման կրեդիտային համակարգի ներդրում,
- Ուսանողների, դասախոսների և ադմինիստրատիվ անձնակազմի շարժունակության բարձրացում,
- Բարձրագույն կրթության անհրաժեշտ որակի ապահովում,
- Որակավորումների և բարձրագույն կրթության համապատասխան փաստաթղթերի փոխադարձ ճանաչում,
- Բուհերի ինքնավարության ապահովում:

Ներկայումս վերը նշված խնդիրներին գումարվել են ևս մի քանիսը.

- ասպիրանտուրայի ներդրում՝ որպես բարձրագույն կրթության երրորդ աստիճան,
- «եվրոպական չափողականության» հաղորդում բարձրագույն կրթությանը (կողմնորոշում՝ դեպի համաեվրոպական արժեքներ):
- եվրոպական կրթության գրավչության և մրցունակության բարձրացում, բարձրագույն կրթության սոցիալական դերի իրականացում, մատչելիության ապահովում,
- լրացուցիչ կրթության համակարգի զարգացում, այսպես կոչված «կրթություն ողջ կյանքի ընթացքում» (LLL-Lifelong Learning) մոդելի զարգացում:

Ինչպես է ղեկավարվում գործընթացը

Բոլոնյան գործընթացի բարձրագույն մարմինը, որը որոշումներ է ընդունում գործընթացի կառուցվածքին և զարգացմանն առնչվող բոլոր հարցերում, հանդիսանում է անդամ-երկրների կրթության նախարարների հավաքը (գումարվում է 2 տարին մեկ անգամ): Հավաքների միջև ընկած ժամանակահատվածում կառավարումն իրականացնում է Բոլոնյան աշխատանքային խումբը (Bologna Follow-up Group), որը կազմված է յուրաքանչյուր երկրի 2-3 ներկայացուցիչներից: Բոլոնյան խմբում նախագահում է այն երկրի ներկայացուցիչը, որը տվյալ ժամանակահատվածում նախագահում է Եվրամիությունում:

TEMPUS. ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

TEMPUS ծրագրին Հայաստանում շատերն են ծանոթ՝ հատկապես բուհական համակարգի ներկայացուցիչները: Արդեն 14 տարի շարունակ Եվրամիության ֆինանսավորմամբ այս ծրագիրը փորձում է մոտեցնել մեր կրթական համակարգը եվրոպական չափանիշներին:

TEMPUS-ը (Trans European Mobility Program for University Studies) Եվրոպական հանձնաժողովի ծրագիր է, որի նպատակն է՝ աջակցել Արևելյան Եվրոպայի, Կենտրոնական Ասիայի, Հյուսիսային Աֆրիկայի և Մերձավոր Արևելքի երկրներում բարձրագույն կրթական համակարգերի բարեփոխումների և արդիականացման համար տարվող աշխատանքներին: Այն նախատեսում է ԵՄ-ի և ծրագրում ներգրավված երկրների միջև ստեղծել փոխշահավետ համագործակցություն բարձրագույն կրթության բնագավառում, մասնավորապես՝ բազմակողմանի գործընկերության հաստատում Եվրոպայի և մասնակից պետությունների բուհերի միջև, համատեղ ծրագրերի իրականացման միջոցով նոր ուսումնական ծրագրերի, դասավանդման նոր մեթոդների կամ նոր ուսումնական նյութերի ստեղծում, բարձրագույն ուսումնական հաստատությունների կառավարման մոդելների արդիականացում և այլն: Ծրագիրն ընդունվել է 1990թ. ԵՄ Նախարարների խորհրդում և այդ ժամանակից ի վեր երկարացվել է 4 անգամ: Ներկայումս գործում է Tempus IV-ը, որը շարունակվելու է մինչև 2013թ.:

TEMPUS-ը Հայաստանում

Հայաստանը TEMPUS-ին մասնակցում է 1995 թ.-ից: Բոլոնիայի գործընթացով առաջադրված նպատակներին հասնելու տեսանկյունից՝ TEMPUS-ի դերը դժվար է գերագնահատել: Այն հնարավորություն է տալիս հայաստանյան բուհերին բարելավել իրենց կրթական ծրագրերը, իրականացնել արդյունավետ կառավարում, տեխնիկապես վերազինվել և այլն: Հայկական բուհերը Tempus-ի միջոցով կարող են համագործակցություն հաստատել լավագույն եվրոպական կրթական հաստատությունների հետ և մեծացնել ուսանողների և դասախոսական անձնակազմի շարժունակությունը: Tempus-ի հայաստանյան ազգային գրասենյակի կոորդինատոր Լանա Կառլովան ասում է, որ կան համագործակցության լավ օրինակներ, որոնք շարունակվում են մինչ օրս՝ ծրագրի ավարտից տարիներ անց: Չնայած՝ «Ոչ բոլոր դեպքերում է համագործակցությունը շարունակվում»,- ասում է տկն Կառլովան:

Tempus-ի ծրագրերը՝ թե քանակով, թե բովանդակությամբ ու մասշտաբներով, իրոք տպավորիչ են: Նախ՝ Tempus-ն իր ծրագրերում հաշվի է առնում գործընկեր երկրի առաջնահերթությունները՝ ինչպես ազգային, այն-

պես էլ տարածաշրջանային առումով: Ազգային առաջնահերթությունները հաստատվում են Եվրոպական հանձնաժողովի պատվիրակության և գործընկեր երկրի Կրթության նախարարության համատեղ քննարկումների արդյունքում: Ինչ վերաբերում է տարածաշրջանային առաջնահերթություններին, դրանք հիմնված են Գործընկեր երկրների հետ՝ ԵՄ գործընկերության քաղաքականության վրա:

TEMPUS-ի նախագծերի և միջոցառումների առաջնահերթությունները 2009թ. համար

	Ազգային առաջնահերթություններ (Հայաստան)	Տարածաշրջանային առաջնահերթություններ, Արևելյան հարևանության տարածքի երկրներ (Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Բելառուս, Մոլդովա, Ռուսաստան, Ուկրաինա)
Կրթական ոլորտ	Եռաստիճան կրթական համակարգի ներդրում, կրեդիտային համակարգ, որակավորման աստիճանների ճանաչում	Եռաստիճան կրթական համակարգի ներդրում, կրեդիտային համակարգ,
Կառավարման ոլորտ	Որակի ապահովում	Համալսարանի կառավարում և ուսանողական ծառայություններ, Բարձրագույն կրթության հավասար և թափանցիկ հասանելիություն, միջազգային կապերի զարգացում
Բարձրագույն կրթություն և հասարակություն	Գիտելիքների եռանկյուն՝ կրթություն-նորարարություն-հետազոտություն, Որակավորման շրջանակներ	Զարգացնել «կրթություն ողջ կյանքի ընթացքում» փիլիսոփայությունը, Որակավորման շրջանակներ

1995-2007թթ. ԵՄ-ի կողմից ֆինանսավորվել են 32 ծրագրեր և 60 անհատական գրանտներ՝ 5.5 մլն եվրո ընդհանուր արժեքով: Լ. Կառլովան ասում է, որ հայաստանյան բուհերի կողմից այս ծրագրերի նկատմամբ հետաքրքրությունը մեծ է՝ հատկապես պետական բուհերի կողմից: Ընդհանուր առմամբ, համատեղ նախագծերին, կոմպակտ նախագծերին և կառուցվածքային միջոցառումներին մասնակցել են 94 եվրոպական բուհեր, 12 պետական բուհեր ՀՀ-ից, 12 ոչ ակադեմիական կազմակերպություններ և 6 համալսարաններ կովկասյան տարածաշրջանից: Ակտիվության մասին է խոսում նաև այն, որ ըստ Լ. Կառլովայի, անցյալ տարի ՀՀ-ն ներկայացրել է 32 ծրագիր: Դրանցից հաստատվել են 4-ը՝ 3.9 մլն եվրո ընդհանուր արժեքով:

Վիճակագրություն

2008թ. ընթացքում ԵՄ-ն հատկացրել է աննախադեպ մեծ ծավալի ֆինանսավորում՝ գրեթե 4 մլն եվրո: Դա պայմանավորված է նրանով, որ չնայած մինչ այժմ կատարված քայլերին՝ անելիքներ դեռ շատ կան: Լ. Կառլովան առկա խնդիրներից առանձնացնում է բարձրագույն կրթական համակարգում առկա անտարբերությունը՝ թե՛ ուսանողների, թե՛ դասախոսների և վարչական անձնակազմի կողմից: «Ուսանողը պետք է իր ուս-

	Pre-JEP	Compact projects	JEP/JP	SCM/SM	IMG	Գումարը
1995	5					231,019
1996	4	1	1			932,175
1997			2			638,000
1998		3				592,178
1999		2				385,096
2000			3			760,000
2001					3	6,965
2002			3		10	347,811
2003					16	45,980
2004			2		22	502,343
2005				1	6	105,470
2006			3	2	3	961,094
2008			4			3,885,400
ԸՆԴԱՄԵՆԸ	9	6	18	3	60	9, 393, 581

- JEP, Joint European Project – համատեղ եվրոպական նախագիծ
- SM, Structural measures – կառուցվածքային միջոցառում
- IMG, Individual mobility grant - անհատական շարժունակության գրանտ

ման պատվիրատուն լինի, ինչը մեզանում բացակայում է: Համալսարանը պետք է լինի ուսանողների համար, ոչ թե ադմինիստրացիայի, ուսանողը պետք է որոշի իր կարիերան»,- նշում է նա: Ըստ Լ. Կառլովայի, լուրջ խոչընդոտ է նաև լեզվի խնդիրը, քանի որ հատկապես ավագ սերնդի դասախոսներն ու ադմինիստրատիվ աշխատողները չեն տիրապետում օտար լեզուների:

Այդուհանդերձ, Լ. Կառլովայի խոսքերով, նոր սերունդն ավելի ճկուն է, այսինքն՝ առաջընթացի հնարավորություն կա: Իսկ 1995-ից ի վեր իրականացված ծրագրերի արդյունքում, նրա համոզմամբ, անգամ ադմինիստրատիվ աշխատողները փոխվում են: Դրան նպաստում են հաճախակի կազմակերպվող այցելությունները, երբ մարդիկ շփվում են, ծանոթանում եվրոպական կրթական լավագույն ավանդույթներին:

ԲԱԲԿԵՆ ԹՈՒՆՅԱՆ

ԴԵՊԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԱԾՔ

Ասում է Երևանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտոր Յուրի Սուվարյանը

- ՀՊՏՀ-ն է առաջին բուհերից մեկն է, որ կիրառել է Բոլոնյան համակարգի մաս կազմող գնահատման կրեդիտային եղանակը: Ինչպե՞ս եք այն գնահատում, արդարացե՞լ են Ձեր սպասելիքները:

- 2006թ. սկսած մեր համալսարանում ակտիվ քայլեր են կատարվել Բոլոնյան գործընթացի պահանջների կատարման ուղղությամբ: Նախ՝ մեր բուհում 2004 թվականից կիրառվում է երկաստիճան կրթական համակարգը՝ բակալավրիատ և մագիստրատուրա, որը ևս Բոլոնյան համակարգի պահանջն է: Իսկ 2006-ից ամբողջ բուհում ներդրվել են ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման, ինչպես նաև՝ առաջադիմության բազմագործոնային գնահատման համակարգերը, և այսօր բակալավրիատի բոլոր կուրսերը սովորում են կրեդիտային համակարգում: Ընդհանուր առմամբ մեր սպասելիքներն արդարացել են, քանի որ համակարգն ապացուցում է իր արդյունավետությունը: Մեզ մոտ ներդրված համակարգը կառուցվել է հիմնականում եվրոպական երկրների փորձի, մասամբ նաև՝ ամերիկյան փորձի վրա: Եվ մեր բուհի հետ համագործակցության ծրագրեր իրականացնող եվրոպական շատ երկրների ներկայացուցիչներ բավական բարձր են գնահատել մեր համակարգը, որն արդեն անցել է չորս տարվա փորձություն: Իհարկե, յուրաքանչյուր տարի փոխել ենք առանձին բաղադրիչներ, սակայն համակարգի տրամաբանությունը մնացել է նույնը: Մենք նախատեսում ենք այս համակարգը ներդնել նաև մագիստրատուրայում: Նշեմ, որ համակարգի ներդրման հարցում մեզ համար չափանիշ են հանդիսացել եվրոպական բուհերում կիրառվող ուսումնական պլանները:

- Ո՞րն է Բոլոնյան համակարգի ներդրման հիմնական նպատակը:

- Բոլոնյան գործընթացի հիմնական խնդիրն է՝ եվրոպական երկրների միջև միասնական կրթական համակարգի ստեղծումը, որպեսզի հնարավոր դառնա ուսանողների ազատ շարժը եվրոպական կրթական տարածքում: Միաժամանակ կարևոր է նաև, որ ապահովվի կրթության բարձր որակը, որը կհամապատասխանի այդ երկրների չափանիշներին: Այսինքն՝ մեր նպատակն է ապահովել ոչ միայն համադրելիությունը, այլ նաև կրթության որակի բարձրացումը: Վերը նշված քայլերից բացի, մենք ակտիվացրել ենք նաև միջազգային կապերը: Եթե մենք չհաղորդակց-

վենք հատկապես եվրոպական երկրների հետ, եթե մեր դասախոսները, ուսանողները չլինեն այդ երկրներում, ապա չենք կարող լուծել կրթության որակի բարձրացման և առհասարակ եվրոպական կրթական տարածքին ինտեգրվելու խնդիրը: Այդ պատճառով, օրինակ, Erasmus Mundus և մի շարք այլ ծրագրերով ինտենսիվացրել ենք միջազգային կապերը և փորձում ենք ավելի ընդլայնել դրանք, որպեսզի մեր կրթական համակարգը լինի ընկալելի աշխարհի համար, և որպեսզի հետագայում լուծվի նաև դիպլոմների փոխճանաչման խնդիրը: Այդ նպատակին հասնելու համար ժամանակային առումով մի քանի փուլեր ունենք անցնելու: Կրթության որակի, ուսումնական պլանների առումով մենք բավական նվաճումներ ունենք: Թերություններ ունենք կատարողների, դասախոսական կադրերի, կրթության տեխնոլոգիայի առումով: Սակայն առաջիկայում փոխճանաչման խնդիրը լուծելու համար մենք պետք է անցնենք ևս մեկ կարևոր փուլ՝ հավատարմագրումը: Մենք ունենք որակի ապահովման հայեցակարգ, որով, ինչպես նաև մեր բուհի հավատարմագրմամբ որոշակի քայլեր կկատարենք դեպի դիպլոմների ճանաչման գործընթացը, և դրան կհաջորդի նաև միջազգային հավատարմագրումը, ապա նաև՝ փոխճանաչումը: Կարծում եմ՝ մենք մոտեցել ենք եզրափակիչ փուլին: Մենք պատրաստ ենք հավատարմագրման պահանջները կատարել, և կարծում եմ՝ շատ ժամանակ չի պահանջվի:

- Ձեր բուհում այդ համակարգի ներդրումից եվրոպական բուհերի հետ համագործակցության կոնկրետ ծրագրեր իրականացվե՞լ են:

- 2007թ. մեր ԵՊՏՀ-ն մասնակցում է Եվրամիության կողմից ֆինանսավորվող Erasmus Mundus ծրագրին, որի շրջանակներում մոտ մեկ տասնյակ ուսանողներ՝ և բակալավրիատի, և մագիստրատուրայի, ինչպես նաև ասպիրանտներ ու դասախոսներ վերապատրաստվել են Ֆրանսիայի, Իտալիայի, Հունաստանի, Լատվիայի համալսարաններում: Ծրագիրը շարունակվել է նաև 2009-2010 թվականներին:

- Որպես կանոն՝ փոփոխությունները հանդիպում են դիմադրության: Հատկապես կրթության ոլորտում, որտեղ դեռ որոշակիորեն պահպանվում են խորհրդային համակարգից մնացած ավանդույթները: Բոլոնյան համակարգի ներդրումն արդյո՞ք նման արձագանք չի ունեցել:

- Այդ դիմադրությունը միշտ կա, և ես փորձել եմ այդ խնդիրը հաղթահարել հենց սկզբից: Կազմակերպել ենք սեմինարների շարք և դա սկսել ենք հենց կրեդիտային համակարգի ներդրման խնդիրներով: 2006թ. հունիսին արդեն մեր կոլեկտիվը պատրաստ էր անցնելու այդ համակարգին, սակայն այդ ընթացքում տարբեր բուհերի առաջարկով մեկ տարով հետաձգվեց կրեդիտային համակարգի ներդրման ժամկետը: Ես մեր կոլեկտիվի առաջ հարց բարձրացրի՝ անցնե՞լ այդ համակարգին, թե՞ սպասել մեկ տարի: Բոլորը միաձայն կողմ էին կրեդիտային համակարգը ներդնելուն: Այսինքն, դիմադրության առաջին ալիքն այսպիսով հաղթահարվեց: Իհարկե, կա նաև խուլ դիմադրություն, քանի որ կրթական համակարգը պահպանողական է: Սակայն դա այնքան ուժեղ չէ, որ խոչընդոտ հանդի-

սանա: Եթե մենք ասեինք, որ մեր կրթական համակարգը պիտանի չէ և պետք է ամբողջությամբ փոխել եվրոպականով, ապա դիմադրությունն ավելի հզոր կլիներ: Սակայն ես բացատրել եմ, որ մեր կրթական համակարգը՝ դրական կողմերի հետ մեկտեղ, ունի նաև թերություններ, և առաջարկել եմ՝ պահպանելով դրականը, թերությունները փոխարինել առավել կատարյալ եղանակներով, ինչի օրինակը Բոլոնյան համակարգն է:

Լ.ՍԵՅՐԱՆՅԱՆ

ԱԿՏԻ՞Վ, ԹԵ՞Ղ ՊԱՍԻՎ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Եվրոպական Հարևանությունը՝ որպես խաղաղության հասնելու գործիք

Խաղաղությունը Հարավային Կովկասում կենսական նշանակություն ունի ԵՄ-ի համար, առաջին հերթին՝ անվտանգության տեսանկյունից: Եվրոպայի համար կարևոր է, որ իր սահմանակից երկրները վտանգ չներկայացնեն՝ կապված կազմակերպված հանցավորության, ահաբեկչության, թմրանյութերի և զենքի վաճառքի հետ: Ինչպես նշում է վերլուծաբան Գեորգի Կամովը իր «ԵՄ դերը հակամարտությունների կարգավորման գործում» աշխատության մեջ, իրավիճակը փոխվեց՝ կապված ԵՄ-ի ընդլայնման հետ: «ԵՄ-ն մոտեցավ տարածաշրջանի երկրներին, հատկապես՝ Բելառուսին, Ուկրաինային և Մոլդովային: Եվ այս երկրների անվտանգության խնդիրներն էլ, իրենց հերթին, մոտեցան ԵՄ-ին»: Հաջորդ կարևոր պատճառը էներգակիրներն են, ավելի ճիշտ՝ դրանց տարանցումը: Կովկասյան տարածաշրջանում կայունությունը անհրաժեշտ պայման է՝ կասպիական նավթի և գազի անընդհատ տարանցման համար:

1990-ականների կեսերին ԵՄ-ն Ռուսաստանի և նախկին ԽՍՀՄ երկրների հետ ստորագրեց, այսպես կոչված, Գործընկերության և համագործակցության պայմանագրեր (Partnership and Cooperation Agreement-PCA)՝ հիմնված երկխոսության և համագործակցության վրա: Սակայն հակամարտությունների կարգավորումը և անվտանգության հարցերը PCA-ներում ներառված չէին: Միության ընդլայնումից հետո իրավիճակը փոխվեց, և Եվրոպական Անվտանգության ռազմավարությունը որպես գլխավոր նպատակ՝ առաջադրեց «անվտանգ հարևանությունը»՝ կառուցված հետևյալ սկզբունքի վրա. «դիտարկվող երկրների հետ հաստատել բազմակողմանի և համագործակցային հարաբերություններ՝ քաղաքական, տնտեսական, մշակութային և անվտանգության ոլորտներում… անվտանգությունը մեծացնելու նպատակով»: Այս նպատակին հասնելու համար ընդարձակ պլատֆորմ հանդիսացավ Եվրոպական Հարևանության քաղաքականությունը (European Neighbourhood Policy- ENP): Կամովը նշում է, որ Եվրոպական հարևանությունը անուղղակիորեն նպաստում է կոնֆլիկտների կանխարգելմանն ու կայունացմանը՝ քարոզելով այնպիսի ստանդարտներ և արժեքներ, ինչպիսիք են՝ օրենքի իշխանությունը, ժողովրդավարությունը և մարդու իրավունքները:

Եվրոպականացումը և հակամարտությունները

Վերլուծաբանները նշում են, որ ԵՄ-ն հարևանության հետ արտաքին քաղաքականության հիմքում դնում է, այսպես կոչված, եվրոպականացման գործոնը (Europeanization):

«Եվրամիությունը հարաբերություններ է հաստատում երկրների հետ այն սկզբունքների հիման վրա, որոնք արտահայտում են հենց իր՝ Միության առաջնահերթությունները: Այլ կերպ ասած, Եվրամիությունը քաջալերում է երկրների ներքին փոփոխությունները՝ առանց առաջարկելու գլխավոր «մրցանակը»՝ անդամակցությունը ԵՄ-ին»,- գրում է Վետչերը՝ ավելացնելով, որ համագործակցության սահմանափակ բնույթը իր հերթին զգալիորեն թուլացնում է այս կառույցի ազդեցությունը երկրների հետ հարաբերություններում՝ ընդհանրապես, և հակամարտությունների կարգավորման գործում՝ մասնավորապես:

ԵՄ դերը՝ ԼՂ հակամարտության լուծման գործում

Ինչպես նշում են մի շարք վերլուծաբաններ, Եվրոպական հարևանության քաղաքականությունը չնայած մեծացնում է այս կառույցի լծակները ԱՊՀ տարածաշրջանում, սակայն նրա ազդեցությունը, մասնավորապես, հակամարտությունների կարգավորման գործում այնքան էլ մեծ չէ: Այժմ ԵՄ-ի ապագա ներգրավվածությունը հակամարտությունների կարգավորման գործընթացներում որոշվում է բացառապես ԵՀՔ-ի շրջանակներում: 2005-ի վերջին ԵՄ-ն բանակցություններ սկսեց երեք երկրների հետ՝ Գործողությունների ծրագրի հետ կապված: Իսկ դրանից առաջ՝ դեռ 2003-ին, ԵՄ-ն Հարավային Կովկասում հատուկ ներկայացուցիչ նշանակեց Հեյկկի Թալվիթիեին, ում 2006թ. փոխարինեց Փիթեր Սեմնեբին՝ ավելի լայն լիազորություններով:

Եվրամիության ներգրավվածությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը համեմատաբար թույլ է և չի կարող համեմատվել, օրինակ, վրաց-աբխազական հակամարտության հետ: ԵՄ-ն տնտեսական աջակցության ծրագրեր չի իրականացրել ԼՂ-ում, և նրա գործունեությունը հիմնականում կապված է Մինսկի խմբի շրջանակներում ընթացող բանակցությունների աջակցության հետ: Միևնույն ժամանակ, վերլուծաբանները նշում են, որ դա պայմանավորված է նաև Հայաստանի և Ադրբեջանի կողմից ԵՄ-ի ընկալմամբ: «Հայաստանի համար ԵՄ-ն աճող կարևորություն ունի, սակայն, ի տարբերություն Վրաստանի, այն կոմպլեմենտար գործընկեր է. Հայաստանն ավելի շատ հետաքրքրված է Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Իրանի հետ հարաբերությունների պահպանմամբ և զարգացմամբ»,- գրում է Միջազգային բարձրագույն կրթության եվրոպական ինստիտուտի գիտաշխատող Գեորգի Կամովը՝ նշելով, որ Ադրբեջանի դեպքում էլ Մոսկվան և Վաշինգտոնը ավելի մեծ կարևորություն ունեն: Այդուհանդերձ, ԼՂ հակամարտությունը տեղ է գտել երկու երկրների Անհատական գործողությունների ծրագրում: Շատ վերլուծաբաններ այն կարծիքին են, որ ԵՄ հետագա ներգրավվածության աստիճանը կախված կլինի ներկայումս ընթացող բանակցությունների արդյունքից: Ոմանք գտնում են, որ ԵՄ-ն կա-

րող էր դիտորդի կարգավիճակ ստանալ բանակցություններում, իսկ դրանց հաջող ավարտից հետո՝ մասնակցել խաղաղապահ առաքելության կազմում ու նաև նյութական աջակցություն ցուցաբերել հակամարտող կողմերին: Թե նշված զարգացումներից որն իրականություն կդառնա, ցույց կտա ժամանակը:

ԲԱԲԿԵՆ ԹՈՒՆՅԱՆ

«ԵՄ-Ն «ԳԱՂՏՆԻ ՊՈՏԵՆՑԻԱԼ» ՈՒՆԻ»

Ասում է Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի տնօրեն Թևան Պողոսյանը

- Ի՞նչ ազդեցություն ունի Եվրամիությունը դարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի վրա:

- ԵՄ-ն այսօր որպես առանձին կառույց ներգրավված չէ, ազդեցության չափը շատ թույլ է: Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցիչ Պիտեր Սեմնեբիի համար նախատեսված այդ դերակատարումը, որ կարող էր ինչ-որ չափով զբաղվել կոնֆլիկտային հարցերով, այդպես էլ տեղի չունեցավ: Նա չկարողացավ գտնել այն ֆորմատը, որով գոնե կայցելի հակամարտության տարածք:

- Խնդիրը Պ. Սեմնեբիի մասնագիտական որակների մե՞ջ է...

- Ոչ: Դա ավելի շատ դրված շրջանակների խնդիր է. ԵՄ-ն չի կարողանում իր ներկայացուցչի համար ապահովել այդ տարածաշրջան այցելելու հնարավորությունը: Սակայն ԵՄ-ն ունի շատ հետաքրքիր մեխանիզմներ, որով կարող է նպաստել քաղաքացիական հասարակության զարգացմանը, դեմոկրատական ինստիտուտներին: Սակայն չունի այն գործիքները, որով կկարողանա խորը ներգրավվածություն ունենալ կոնֆլիկտի լուծման մեջ:

- Իսկ ի՞նչ կարող է անել ԵՄ-ն՝ իր այսօրվա հնարավորություններով:

- ԵՄ-ն կարող է այնպիսի իրավիճակ ստեղծել, որում կողմերը կցանկանան գնալ դեպի խաղաղություն, գտնել այդ խաղաղության մեխանիզմները: Շատ հետաքրքիր է, օրինակ, Կոսովոյի շուրջ ստեղծված իրավիճակը, երբ դրա չորս կողմերից ուզում են դառնալ ԵՄ անդամ և դրա շնորհիվ ապահովել իրենց անվտանգությունը, բարեկեցությունը և խաղաղությունը: Այդ իմաստով ԵՄ-ն շատ գրավիչ է և ունի «գաղտնի պոտենցիալ»՝ եվրոպականացման շրջանակներում խաղաղություն հաստատելու գործում: Բայց այսօր, ցավոք սրտի, չի կարող դա անել, քանի որ չի մշակել այն մեխանիզմները, որոնցով ինքը կարող է ներգրավված լինել ԼՂ-ում:

- Իսկ որքանո՞վ է ռուսական ազդեցությունը մեր տարածաշրջանում խոչընդոտում ԵՄ ներգրավվածության մեծացմանը:

- Մեր տարածաշրջանը այնպիսին է, որ և՛ Ռուսաստանը, և՛ ԱՄՆ-ը ունեն հզոր շահեր այստեղ: Դրա հետ մեկտեղ՝ իրենք ավելի հեշտ, այսինքն՝ մեկ երկրի որոշմամբ իրենց մեխանիզմներն ու մանևրի հնարավորություններն ունենալով, ավելի ճկուն և հանգիստ են այս տարածաշրջանում: Այդ

իրավիճակի փոփոխությունը պայմանավորված է, թե որքանով մենք կզարգացնենք և կխորացնենք մեր հարաբերությունները ԵՄ-ի հետ: Այդուհանդերձ, և՛ Հայաստանի, և՛ Ադրբեջանի իրավական, ներքին կարգավորումը՝ նախագահական, պառլամենտական ինստիտուտը, ընտրական համակարգը և այլն, եվրոպական մոդելով է: Գաղտնիք չէ նաև, որ ՀՀ երեք նախագահներն էլ միշտ ասել են, որ մենք մեզ տեսնում ենք Եվրոպայում: Ամեն դեպքում, ցանկացած երկիր, այդ թվում՝ ԱՄՆ-ը և Ռուսաստանը, սեփական շահերն է առաջ տանում: Հայաստանն էլ պետք է ի՛ր շահերով առաջ շարժվի: Եվ եթե այդ շահերը պահանջում են, որ ԵՄ-ի հետ ավելի խորացված հարաբերություններ պիտի ունենանք, բնականաբար, այդպես էլ պետք է անենք:

Բ. ԹՈՒՆՅԱՆ

«ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ՝ ԴԵՊԻ ՀԱՇՏԵՑՈՒՄ»

Հարցազրույց Բելգիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Ավետ Ադոնցի հետ

- Պարոն Ադոնց, Ձեր կարծիքով՝ Եվրամիությունը ի՞նչ դերակատարում կարող է ունենալ ԼՂ հակամարտության կարգավորման հարցում:

- Նախ կցանկանամ նշել, որ ԵՄ-ն, աջակցելով հակամարտությունների խաղաղ և միջազգային սկզբունքների հիման վրա կարգավորմանը, ԼՂ հարցում մշտապես հավասարակշռված դիրքորոշում է ունեցել: Հայաստան-ԵՄ համատեղ ընդունված բոլոր փաստաթղթերում հակամարտությունների կարգավորման հարցում կարևորվում է ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը: Եվրոպական խորհրդարանի ընդունած մի շարք բանաձևերում անդրադարձ կա ԼՂ հիմնախնդրին: Եվրոպական հարևանության քաղաքականության ուժեղացման մասին և Հարավային Կովկասի մասին բանաձևերում առաջարկվում է քննարկել ԵՄ-ի կողմից ԼՂՀ-ում որոշակի ծրագրերի իրականացման հնարավորությունը:

ԵՄ-ն ներգրավված չէ ԵԱՀԿ Մինսկի խմբում, սակայն այն բազմիցս հայտնել է իր աջակցությունը հակամարտության կարգավորման այս ձևաչափին: ԵՄ-ն սատարում է նաև 2007թ. նոյեմբերին Մադրիդում հակամարտության կարգավորման հիմնարար սկզբունքների մասին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա բանակցությունների շարունակմանը: ԵՄ-ն ողջունել է 2008թ. նոյեմբերի 2-ին ստորագրած Մոսկովյան հռչակագիրը, ինչպես նաև՝ 2008թ. դեկտեմբերի 5-ի Հելսինկիի ԵԱՀԿ նախարարական հայտարարությունը: Բացի այդ, ԵՄ-ն պատրաստակամություն է հայտնել մեծ ներգրավվածություն ունենալ հետհակամարտային վերականգնողական ծրագրերի իրականացման հարցում՝ կողմերի միջև համաձայնագրի կնքումից հետո:

- Ձեր կարծիքով, որո՞նք են այն գործիքները, որ ԵՄ-ի կողմից կիրառվելու դեպքում ավելի արդյունավետ կդարձնեն ղարաբաղյան հակամարտության բանակցությունները:

- Եվրոպական հարևանության քաղաքականության Հայաստան-ԵՄ Գործողությունների ծրագրի առաջնային ոլորտներից մեկն է՝ նպաստել

ԼՂ-ի հակամարտության խաղաղ կարգավորմանը: ԵՄ-ն կարող է լուրջ դերակատարություն ունենալ կողմերի միջև վստահության մթնոլորտի ձևավորման հարցում: Մեր մոտեցումն այս համատեքստում հստակ է՝ համագործակցության միջոցով դեպի հաշտեցում: ԵՄ հովանու ներքո իրականացվող ծրագրերը, մասնավորապես՝ ԵՄ Եվրոպական հարևանության քաղաքականությունը և «Արևելյան գործընկերությամբ» նախատեսված բազմակողմ համագործակցության ձևաչափը կարող են ապահովել այն հարթակը, որտեղ ոչ խնդրահարույց ոլորտներում համագործակցությունը կնպաստի փոխադարձ վստահության ամրապնդմանը և կստեղծի հակամարտության կարգավորման համար բարենպաստ միջավայր:

- Պարոն Ադոնց, ի՞նչ եք կարծում՝ արդյոք ԵՄ-ն կապ տեսնո՞ւմ է ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի և Հայաստան-ԵՄ հարաբերությունների միջև: Այս փուլում ինչպե՞ս եք գնահատում Նոր հարևանության քաղաքականության ծրագրի իրագործումը Հայաստանում:

- Նշեմ, որ ԵՄ-ի հետ քաղաքական մերձեցումը և տնտեսական ինտեգրացիան ՀՀ արտաքին քաղաքական գերակա ուղղություններից է: Այս ուղղությամբ բավականին մեծ աշխատանք տարվել է, և առաջիկայում սպասվում են որակական նոր զարգացումներ: Ներկայումս օրակարգային հարցեր են Հայաստան-ԵՄ ասոցիացման պայմանագրի և խորը ու համընդգրկուն ազատ առևտրի համաձայնագրի կնքումը, մուտքի արտոնագրերի ռեժիմի պարզեցումը, հումանիտար շփումների ակտիվացումը, ենթակառուցվածքային ծրագրերի իրականացումը, և այլն: Նշված գործընթացների համար հիմք են հանդիսանում Եվրոպական հարևանության քաղաքականությունը և Արևելյան գործընկերությունը: ՀՀ-ն ակտիվորեն ներգրավված է այդ երկու նախաձեռնությունների իրականացման գործում: ԵՀՔ Գործողությունների ծրագրի իրականացման 2008թ. և 2009թ. առաջընթացի զեկույցներում ԵՄ-ն գոհունակություն է հայտնում իրականացման տեմպերից: Ինչ վերաբերում է հարցի մյուս մասին, ապա պետք է ընդգծել, որ ՀՀ-ի եվրաինտեգրման քաղաքականության և ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացի միջև կապ չկա: Բնականաբար, հակամարտության հանգուցալուծումը դրականորեն կազդի ողջ տարածաշրջանի քաղաքական գործընթացների վրա: Ավելին, տարածաշրջանի երկրների կողմից եվրոպական արժեքների որդեգրումը և դրանց հիման վրա քաղաքականության ձևավորումը կնպաստի գոյություն ունեցող հակամարտությունների խաղաղ կարգավորման գործընթացին:

Լ.ՍԵՅՐԱՆՅԱՆ

Հարավային Տիրոլ

ԵՂԱՆԱԿԸ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Պատմություն Եվրոպայի կենտրոնում ծագած հակամարտության մասին

Գնացքով Ավստրիայից Իտալիա մեկնելիս սահմանն անցնում է Հարավային Տիրոլով՝ Իտալիայի հյուսիսում գտնվող լեռնային մի հրաշալի երկրամասով: Սահմանագծին ուղեկցողը հայտարարում է. «Հարգելի ուղևորներ, եկեք այժմ հրաժեշտ տանք ավստրիական երկաթուղիներին, ձեզ ողջունում է իտալական երկաթուղային ընկերությունը, բարի գալուստ Իտալիա»: Եթե հարգելի ուղևորները պատուհանից դուրս նայեն, լսածն ու տեսածն իրար կհակասեն, որովհետև սահմանի վրա գրված է. ՀԱՐԱՎԱՅԻՆ ՏԻՐՈԼՆ ԻՏԱԼԻԱ ՉԷ:

«Հարավային Տիրոլն Իտալիա չէ» գրությունը՝ Ավստրիա - Իտալիա սահմանին:

Sud Tirol Ist Nicht Italien

Հարավային Տիրոլը, գլխավորապես ավստրիացիներով բնակեցված Եվրոպայի ամենահարուստ շրջաններից մեկը, Առաջին համաշխարհային պատերազմից հետո միացվել է Իտալիային՝ պատմական «սովորական դեպքերի» արդյունքում: Հարավային Տիրոլի հակամարտությունը, սակայն, եզակի է այն առումով, որ այն սկսվեց Եվրոպայի պառակտումով և կանխվեց Եվրոպայի միավորմամբ: Իհարկե, այս երկրամասում այսօր էլ անկախության համար պայքարող ուժեր կան, օրինակ՝ «Ազատություն Հարավային Տիրոլին» շարժումը: Այդ շարժման ղեկավար Եվա Կլոցը նշում է, որ ճիշտ է, իրենք ունեն ինքնավարություն, բայց ունեն նաև իրավունք՝ ազատորեն ընտրելու սեփական ապագան բոլոր ժողովրդավարական լծակներով: Միացյալ Իտալիայի կողմնակից Ալեսսանդրո Ուրձիի տեսակետն էլ այն է, որ բոլոր ազգերն Իտալիայում հրաշալի ապագա ունեն, պետք է աշխատեն, բազմանան և հպարտորեն իրենց եվրոպացի և իտալացի կոչեն:

Այս քաղաքակիրթ բանավեճը վարող երկու կողմերին՝ Կլոցին և Ուրձիին կոչում են... ռադիկալներ: Հարավային Տիրոլում գործող Ազգային փոքրամասնությունների հարցերի Եվրոպական ակադեմիայի փորձագետ Գաբրիել Թոգենբուրգը նշում է, որ երկու ռադիկալ կողմերի դիրքերն էլ թուլացել են ԵՄ գործոնի, իր խոսքերով՝ «Եվրոպական հովանոցի» ազդեցության տակ: «Մարդիկ Հարավային Տիրոլից (Իտալիայից) մեկնում են Ինսբրուկ (Ավստրիա) իրենց բարեկամին տեսնելու: Սահմանին անձնագիր ցույց չեն տալիս, մաքսային հայտարարագիր չեն լրացնում, փող չեն

փոխում, տրանսպորտային միջոց չեն փոխում: Կարճ ասած՝ թվում է, թե սահմանները վերացել են: Բրենները, որն առաջ Ավստրիայի և Իտալիայի սահմանագծի մի քաղաք էր, արդեն երկու պետությունների բաժանարար գիծը չէ: Ահա թե ինչ է արել ԵՄ-ն այս հակամարտության հետ»:

Option

Հարավային Տիրոլի հակամարտությունը խորացել է Մուսոլինիի ժամանակներից, 1920-ականների կեսերից: Երկրամասը ակտիվորեն բնակեցվել է իտալացիներով (ովքեր 1910 թ. բնակչության 2% տոկոսն էին, իսկ հիմա՝ 25 %-ը: Հիմա էլ, Հարավային Տիրոլի քաղաքներն ունեն երկու ճարտարապետական բաժանում. «գերմանական մաս» և «իտալական թաղամաս»: Նացիզմի և Ֆաշիզմի ռեժիմների անկումներից հետո, երբ հիմք դրվեց Եվրոպայի խորհրդին, Հարավային Տիրոլում Ավստրիայի հետ վերամիավորման պայքարը նոր թափ ստացավ: ՄԱԿ-ի և ԵԽ-ի ջանքերով Հարավային Տիրոլի հակամարտությունը հանգեց ինքնավարության կարգավիճակի:

Autonomia Dinamica

Իտալիայի սահմանադրության մեջ հստակորեն ամրագրվեց այս երկրամասի կարգավիճակը, որը փոփոխման ենթակա չէ: Նույնիսկ Ավստրիան իրավունք ստացավ միջամտել, եթե ազգային ինքնորոշման իրավունքը Իտալիայի այս հատվածում ոտնձգության ենթարկվի: Երկու երկրների՝ Ավստրիայի և Իտալիայի ԵՄ անդամ դառնալուց հետո հարթվեցին հակամարտության գրեթե բոլոր սուր կողմերը: Ստեղծվեց autonomia dinamica-ն՝ ճկուն ինքնավարությունը: Ինքնավարության կողմնակիցները Հարավային Տիրոլը համարում են «գրեթե անկախ պետություն» և ունեն զորավոր փաստարկներ: Օրինակ, Բավարիան, լինելով Գերմանիայի Դաշնության սուբյեկտ, հարկեր է վճարում դաշնային կառավարությանը, իսկ Հարավային Տիրոլը Իտալիային՝ ոչ: Տեղական խորհրդարանում, որը երկրամասի կառավարման մարմինն է, մեծամասնություն է կազմում Հարավային Տիրոլի ժողովրդի կուսակցությունը: Պատմաբան Ջերալդ Շտայնախերը սա անվանում է «քնած հակամարտություն», որին օրոր է ասում Եվրոպան: Եվրոպա ասելով, պարոն Շտայնախերը նկատի ունի երկրամասի բարեկեցությունը՝ ԵՄ առևտրային համագործակցությունը, մարդու և քաղաքացիական իրավունքների պաշտպանվածությունը, մի խոսքով, Եվրոպան՝ լայն ըմբռնմամբ: Իսկ քաղաքագետ Գյունտեր Փալովերը կառավարման այս տարբերակն անվանում է «աննորմալ դեմոկրատիա», երբ իրար հակասող ուժերը ներքևում (հասարակության մեջ) բաժանված են, բայց վերևում՝ խորհրդարանում, միասին են, վերևում միավորված են, բայց ներքևում բաժանում են ամեն ինչ՝ ռեսուրսները, դպրոցները, աշխատատեղերը:

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՁԵՎՈՎ

Հայաստանում գնալով պակասում է այն մարդկանց թիվը, ովքեր չեն լսել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) մասին: Իհարկե, տոկոսային առումով դեռ քչերն են, որ հստակ պատկերացնում են՝ ինչ է այդ դատարանը, ինչպես կարող են դիմել և որ դեպքերում: Այդուհանդերձ, թեկուզ սահմանափակ իրազեկվածությունը մի կողմից՝ բարձրացնում է քաղաքացու ինքնավստահությունը՝ իր իրավունքների պաշտպանության հարցում, մյուս կողմից՝ զսպաշապիկի դեր է կատարում արդարադատության՝ հայաստանյան կառույցների համար՝ այս կամ այն չափով կանխարգելելով սխալ և կողմնակալ վճիռների կայացումը: Սակայն մինչ ՄԻԵԴ-ին անդրադառնալը, թերևս, արժե պատկերացում կազմել Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների եվրոպական կոնվենցիայի մասին: Այն պարզ պատճառով, որ դատարանը հենց այդ կոնվենցիայով երաշխավորված իրավունքները պաշտպանելու համար ստեղծված մեխանիզմ է:

Եվրոպական կոնվենցիան

Մարդու իրավունքների հիմքերը՝ հարգանքը յուրաքանչյուր անհատի կյանքի և արժանապատվության նկատմամբ, տեղ են գտել աշխարհի գրեթե բոլոր կրոնական և փիլիսոփայական ուսմունքներում: Մարդու իրավունքները հնարավոր չէ գնել, վաստակել կամ ժառանգել: Նրանք ի սկզբանե պատկանում են մարդուն՝ անկախ ռասայից, մաշկի գույնից և այլ հանգամանքներից: Այդ իսկ պատճառով, մարդու իրավունքները անվանում են «անկապտելի»: Այդ իրավունքները շարադրված են միջազգային իրավական փաստաթղթերում, որոնք համաձայնեցվել են տարբեր երկրների կողմից: Ամենալայն ճանաչում ստացել է 1948թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը: Ոգեշնչվելով այդ հռչակագրի դրույթներից՝ Եվրոպայի խորհուրդը 1950թ. ընդունեց Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների կոնվենցիան (ՄԻԵԿ): ՄԻԵԿ-ը երաշխավորում է հետևյալ իրավունքները.

- անհատի կյանքը, ազատությունը և անձեռնմխելիությունը,
- արդար դատավարություն՝ քաղաքացիական և քրեական գործերով,

•մասնակցություն ընտրություններին և թեկնածության առաջադրում,
• խղճի, մտքի և դավանանքի ազատություն,
• կարծիք արտահայտելու ազատություն (ներառյալ ԶԼՄ-ների ազատությունը),
• գույքը և սեփականությունը ազատ տնօրինելու իրավունք,
• հավաքների և միավորումներ կազմելու ազատություն:

ՄԻԵԿ-ը արգելում է՝ կտտանքները և ստորացուցիչ վերաբերմունքը, մահապատիժը, ստրկությունը և հարկադիր աշխատանքը, կոնվենցիայով երաշխավորված իրավունքների իրացման հարցում խտրականությունը, սեփական քաղաքացիների արտաքսումը կամ երկիր մուտք գործելու թույլտվության մերժումը, օտարերկրացիների կոլեկտիվ արտաքսումը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարան

1953թ. սեպտեմբերի 3-ին ուժի մեջ մտած Եվրոպական կոնվենցիան ոչ միայն ազդարարեց մարդու հիմնական իրավունքները, այլև ստեղծեց հատուկ մեխանիզմ դրանց պաշտպանության համար՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ): Դատարանը, որը տեղակայված է Ստրասբուրգի՝ Մարդու իրավունքների պալատում, սկսել է գործել 1959թ.-ից: Այն կոչված է ապահովել Կոնվենցիայի դրույթների կատարումը մասնակից երկրների կողմից: Իր այդ գործառույթը ՄԻԵԴ-ն իրականացնում է՝ անհատական բողոքների հիման վրա ընդունելով և քննելով կոնկրետ գործեր ֆիզիկական անձանց, անձանց խմբի կամ ոչ պետական կազմակերպությունների կողմից: Բողոք կարող է ներկայացնել նաև ԵԽ անդամ երկիրը մյուսի նկատմամբ, եթե գտնում է, որ խախտվել է Կոնվենցիան:

Հայաստանի կողմից Եվրոպական կոնվենցիան վավերացնելու արդյունքում՝ ՄԻԵԴ կարող են դիմել նաև ՀՀ քաղաքացիները: Նշենք, որ ՄԻԵԴ-ը Կոնվենցիայի մասնակից երկրի դատաիրավական համակարգի տեսանկյունից գերագույն ատյան չէ: Հետևաբար՝ այն չի կարող բեկանել պետական իշխանության մարմնի կամ դատարանի վճիռը, չի կարող հրահանգներ տալ օրենսդիրներին, չի իրականացնում ազգային օրենսդրության կամ դատական պրակտիկայի աբստրակտ վերահսկողություն, և իրավունք չունի իրավական հետևանքներ առաջ բերող միջոցառումների ցուցումներ տալ: Այսինքն՝ ՄԻԵԴ-ը կոնկրետ գործեր է քննում՝ եզրակացնելու համար, թե իրո՞ք թույլ են տրվել Կոնվենցիայի նորմերի խախտումներ: Սակայն ՄԻԵԴ-ը իրավունք ունի վճռել «պահանջի արդարացի բավարարում»՝ նյութական կամ բարոյական վնասի ֆինանսական փոխհատուցման տեսքով: Նշենք նաև, որ ԵԴ-ի բազմամյա պրակտիկայի ընթացքում չի եղել մի դեպք, որ ԵԽ անդամ երկիրը չկատարի դատարանի որոշումը: ԵԽ կանոնադրության համաձայն, նման գործելաոճը կարող է հանգեցնել տվյալ երկրի մասնակցության կասեցմանը ԵԽ-ում:

ԲԱԲԿԵՆ ԹՈՒՆՅԱՆ

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՈՐԾԻՔ՝ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ



«Հայաստանի Հելսինկյան կոմիտե» իրավապաշտպան կազմակերպությունը վերջին տարիներին Եվրամիության աջակցությամբ մի շարք ծրագրեր է իրականացրել: Մասնակցել է ԵՄ-ի կողմից մարդու իրավունքների բնագավառում 2004 թ. հայտարարված առաջին մրցույթին և հաղթել է: Դրամական արտահայտությամբ մարդու իրավունքների բնագավառում կոմիտեն ԵՄ աջակցությամբ իրականացրել է մոտ 200 հազար եվրո արժողությամբ ծրագրեր:

«Գիտելիքից մինչև գործողություն» կոչվող առաջին ծրագրի շրջանակներում, ըստ կոմիտեի նախագահ Ավետիք Իշխանյանի, ՀՀ մոտ 10 մարզերում անցկացվել են սեմինարներ, որոնց ընթացքում մասնակիցներին ներկայացվել են մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական փորձը, եվրոպական կառույցների առջև ՀՀ-ի ստանձնած պարտավորությունները, մարդու իրավունքների պաշտպանության ներպետական և միջազգային մեխանիզմները: «2006 թ. ԵՄ-ի հետ մենք մեկ այլ ծրագիր իրականացրինք, որը կոչվում էր «Քայլ առ քայլ»: Այն նախատեսում էր մարզային երիտասարդության գիտելիքների բարձրացում մարդու իրավունքների բնագավառում: Շատ հետաքրքիր ծրագիր էր և ներառում էր մրցույթով ընտրված 25 երիտասարդների: Դա սեմինարների շարք էր, որի արդյունքում նրանք տիրապետեցին մարդու իրավունքների փիլիսոփայությանը, եվրոպական կառույցների գործունեությանը, ինչպես նաև մարդու իրավունքների ոլորտում մոնիտորինգների անցկացման հմտություններին: Նրանք ինքնուրույն իրենց մարզերում անցկացրեցին մոնիտորինգային ծրագրեր, հետագայում նրանց միջև ստեղծվեց նաև ցանց, և նրանց համագործակցությունը շարունակվեց»,- պատում է Ա. Իշխանյանը: Նշված ծրագրերի տրամաբանական շարունակությունն է «Քայլ առաջ» կոչվող ծրագիրը, որը կրկին ԵՄ-ի աջակցությամբ «Հայաստանի Հելսինկյան կոմիտեն» իրականացնում է այս տարվա սկզբից: «Քայլ առաջ»-ը ևս սեմինարների շարք է, սակայն ըստ Ա. Իշխանյանի՝ ավելի կատարելագործված, քան նախորդները: Այս ծրագրին մասնակցելու համար հայտ են ներկայացրել շուրջ 200 դիմորդներ, սակայն մրցույթում

հաղթել են միայն 25-ը, որոնք իրենք են դառնալու մարդու իրավունքների դասընթացավարներ, և թրեյնինգներ են իրականացնելու ծրագրից դուրս մնացած մասնակիցների հետ: «Արդեն հիմնական շեշտը դնում ենք ոչ միայն մարդու իրավունքների բնագավառում ԵՄ-ի առջև ստանձնած պարտավորությունների, այլ նաև Հայաստան-ԵՄ հարաբերությունների վրա, այդ թվում՝ անդրադառնում ենք այն հարցերին, թե ինչ քայլեր են ներառված գործողությունների պլաններում, ինչ վիճակում են դրանք, և ինչ ցանկալի կլիներ, որ ընդգրկվեր մասնավորապես Նոր հարևանության ծրագրում»,- ասում է Ա. Իշխանյանը, ում կարծիքով, Նոր հարևանության ծրագիրը լրացուցիչ գործիք կարող է դառնալ ծրագրում ընդգրկված երկրների քաղաքացիական հասարակությունների համար՝ հատկապես մարդու իրավունքների բնագավառում վերահսկողություն իրականացնելու առումով: «Նոր հարևանության քաղաքականության մեջ ԵՄ-ն մի քայլ առաջ է գնացել: Ինքս Բրյուսելում մասնակցել եմ քաղաքացիական հասարակության ֆորումին, որտեղ հրավիրված էին Արևելյան գործընկերության ծրագրում ներգրավված 6 երկրների քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ: Ամենաակտիվ քննարկումները ծավալվեցին ժողովրդավարության, մարդու իրավունքների թեմայի շուրջ: Դրականն այն է, որ ԵՄ-ն մեծ դեր է հատկացնում քաղաքացիական հասարակությանը՝ հատկապես մարդու իրավունքների և ժողովրդավարության հարցերը իրենց երկրներում բարձրաձայնելու առումով: Սա յուրահատուկ դեպք է, որ հետևողը և մոնիտորինգ իրականացնողը պետք է լինի նաև մասնակից երկրի քաղաքացիական հասարակությունը: Եվ այդ առումով հույս ունեմ, որ Նոր Հարևանության և Արևելյան գործընկերության ծրագրերը թերևս ավելի արդյունավետ կլինեն, քան մինչ այս եղած տարբեր ծրագրերը»,- ասում է նա: Խոսելով ընդհանրապես մեր հասարակության կողմից եվրոպական արժեքների ընկալման մասին, Ա. Իշխանյանը նշում է, թե շատերին թվում է, որ եվրոպական կառույցները պետք է ուժային մեթոդներով Հայաստանում կարգուկանոն հաստատեն: «Դա մոլորություն է, քանի որ եվրոպական կառույցները կարող են միայն աջակցող դեր կատարել բարեփոխումների համար»,- ասում է Ա. Իշխանյանը՝ ավելացնելով, որ իրականում Հայաստանում եվրոպական արժեքների վերաբերյալ կա շատ երկակի վերաբերմունք: «Եվրոպական արժեքները կարծես թե բոլորը ընդունում են մի այտով, բայց մյուս այտով մերժում են դրանք: Քանի որ և իշխանական թևի, և ընդդիմադիր թևի և հասարակության մեջ շատ հաճախ բավական մեծ արհամարհանք կա եվրոպական արժեքների նկատմամբ»,- ասում է «Հայաստանի Հելսինկյան կոմիտեի» նախագահը:

ԵՄ-Ի ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՕԳՆՈՒՄ Է

Ասում է ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանը

- Դեկտեմբերի 10-ը նշվում է որպես մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օր: Ինչպե՞ս եք գնահատում այդ բնագավառի իրավիճակը մեր երկրում, մասնավորապես՝ եվրոպական չափանիշների համատեքստում:

- Եվրոպական չափանիշներ ասվածը մի քիչ հարաբերական հասկացություն է, և մեզ մոտ՝ Հայաստանում, հաճախ դրա նկատմամբ թյուրըմբռնում կա: Ինչ վերաբերում է նրան, թե ի՞նչ վիճակում է Հայաստանում այդ բնագավառը, ապա կարծում եմ՝ մեզ մոտ արդեն դրական միտումներ նկատվում են և՛ մենթալիտետի, և՛ մտածողության, և՛ մարդու իրավունքների ընկալման, և՛ նաև, ինչու չէ՝ ՄԻՊ-ի հետ համագործակցության տեսանկյունից:

- Այդ առաջընթացի մեջ կա՞ արդյոք Եվրամիության դերը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դուք համագործակցում եք ԵՄ-ի հետ:

- Դժվար է տոկոսային հարաբերակցությամբ ասել, թե որքանով է այս առաջընթացի մեջ ԵՄ դերը, բայց, իհարկե, Եվրամիությունը որոշիչ դեր ունի այս բնագավառում, որովհետև ինտեգրումը ԵՄ-ի հետ (քանի որ մենք ԵՄ անդամ չենք) մեզ ինչ-որ չափով ինտեգրում է եվրոպական արժեքներին: Այդ տեսակետից չափազանց մեծ է Ստրասբուրգի դատարանի գործունեությունը և բուն ԵՄ-ի Արևելյան գործընկերության ծրագիրը: Եվրոպան ավելի շատ մշակութային և հոգեբանական հասկացություն է և ոչ թե աշխարհագրական. որքան համագործակցում ես, այնքան ավելի ես ինտեգրվում: ՄԻՊ գրասենյակն այսօր ԵՄ-ի հետ երկու մեծ ծրագիր է իրականացնում: Մեկը OPCAT-ի՝ «Խոշտանգումների դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրություն» ծրագրի շրջանակներում է, մյուսը՝ Twinning-ի: OPCAT-ի տևողությունը 1.5 տարի է, որը սկսել ենք անցյալ տարվանից, իսկ Twinning-ը սկսել ենք 1 ամիս առաջ, որն ավարտվելու է 1.5 տարի հետո: Twinning-ը ֆինանսավորվում է ԵՄ-ի կողմից, և այստեղ ԵՄ-ից ժամանած փորձագետների խումբ է լինելու մշտապես, և նրանք անելու են այն գործը, ինչ իմ խորհրդականները: Այսինքն՝ սա օգտակար է նաև մարդկային ռեսուրսի տեսանկյունից, որովհետև մենք միշտ նման ռեսուրսների կարիք ունենում ենք: Եվ ունենալով նմանատիպ փորձագետների դաշտ, ես արդեն հնարավորություն եմ ունենում ավելի ընդգրկուն գործել:

- Ի՞նչ եք կարծում՝ այս ծրագրերը հնարավորություն կտա՞ն իսկապես դրական ձեռքբերումների հասնել մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում, թե՞, այնուամենայնիվ, մինչև ներքին բովանդակային փոփոխություններ չլինեն՝ վիճակը չի փոխվի:

- Մինչև ներքին բովանդակային փոփոխություններ չլինեն՝ վիճակը կմնա նույնը կամ այնքան դանդաղ առաջ կշարժվի, որ 200 տարի կպահանջվի միջին մակարդակի հասնելու համար: Այսինքն, այնուամենայնիվ, որոշիչ դերակատարումը կախված է մեզանից: Բայց մենք էլ ենք ինչ-որ առումով փոխվում՝ այդ ծրագրերի միջոցով շփվելով համապատասխան երկրների հետ: Ի դեպ, եվրոպական արժեքները մեզ բացարձակապես չեն տանում ազգային նկարագրի կորստի: Բոլոր ազգերն էլ իրենց ինքնությունը պահպանելով՝ մեկ ընդհանուր ընտանիքի մաս են դառնում, որտեղ խոսքը շատ էլեմենտար բանի մասին է՝ մարդու իրավունքները բարձր արժեք են և պետք է հարգվեն բոլոր հարցերում, և հենց դա է, որ դառնում է նաև մեր մշակույթի մի մասը: Այսինքն՝ այդ միասնական համագործակցությունը մեզ այդ մշակույթի մի մասն է դարձնում, որը շատ կարևոր է:

- Ասացիք, որ ՄԻ պաշտպանի գրասենյակը երկու ծրագիր է իրականացնում ԵՄ աջակցությամբ, ի՞նչ արդյունքներ են արձանագրվել: Եվ ընդհանրապես՝ արդյո՞ք մեր հասարակությունը կարող է դառնալ իսկական եվրոպացի:

- Շատ լավ էլ կարող ենք դառնալ: Եվ եթե մենք այսօրվա հասկացողությամբ շատ ավելի եվրոպացի էինք Կիլիկիայում, ուրեմն՝ կարող ենք: 700 տարի հակառակ մշակութային դաշտում ենք եղել, դրա համար ենք այսպիսին դարձել, թե չէ՝ ինչո՞ւ չենք կարող: Ինչ վերաբերում է արձանագրված արդյունքներին, ապա եթե OPCAT ծրագիրը չլիներ, մենք չէինք կարողանալու այդ ուղղությամբ արդյունավետ գործել: Մենք այս տարի դեկտեմբերի 10-ին որպես ազգային մեխանիզմ առաջին զեկույցն ենք ներկայացնելու, և եթե ԵՄ-ն մեզ չօգներ, մենք պարզապես դա չէինք կարողանալու անել, որովհետև ռեսուրսներ չունենք: Չունենք այնքան մարդիկ, որոնք մշտապես կգնան կալանավայրեր և կուսումնասիրեն իրավիճակը:

- Կմասնավորեցնե՞ք, թե ի՞նչ են անում նրանք, և ի՞նչ ձևաչափով են աշխատում այստեղ:

- ԵՄ-ն փորձագետներ է վարձում, ֆինանսավորում է նրանց, բայց նրանք մեր կողմից դրված խնդիրներն են լուծում: Նույնը նաև Twinning-ի ծրագիրն է: Օրինակ, մենք այսօր նախատեսում ենք որոշ փոփոխություններ կատարել մեր օրենքում, և ԵՄ փորձագետներն այժմ ուսումնասիրում են միջազգային փորձը, իսկ մեր փորձագետները մեր երկրում եղած օրենսդրական դաշտն են ուսումնասիրում: Այսինքն՝ միջազգային փորձի ուսումնասիրման գործում մենք կարող ենք ազատ թողնել մեր ռեսուրսները և ավելի խորանալ մեր օրենսդրության վրա: Հիմա մեզ մոտ Իսպանիայի և Ֆրանսիայի փորձագիտական խմբերն են մշտապես աշխատում. նրանք միջազգային փորձն են ուսումնասիրում, որպեսզի մենք մեր օրեն-

քում փոփոխություններ մտցնենք: Մեկուկես տարի նրանք մեր գրասենյակում են լինելու, և ընթացիկ ցանկացած հարցի շուրջ ես կարող եմ նրանց հանձնարարություններ տալ: Նրանք իմ խորհրդականների կարգավիճակն ունեն. եթե մեր պետությունն ինձ 3 խորհրդականի հաստիք է տրամադրել, ապա ես հիմա 6-ն ունեմ, քանի որ երեքն էլ ԵՄ-ն է տվել:

- Մարդու իրավունքներին առնչվող կառույցներից Հայաստանում, թերևս, ամենախնդրահարույցը դատական համակարգն է, որը չնայած վերջին տարիներին կատարված մի շարք կառուցվածքային փոփոխություններին, այնուամենայնիվ, շատ հեռու է անկախ լինելուց: Հայաստանի իրական ինտեգրումը Եվրոպային որքանո՞վ կարող է լուծել այդ խնդիրը:

- Ստրասբուրգի դատարանն արդեն իսկ ստիպում է որոշ դեպքերում նույնիսկ չցանկանալով ինչ-որ քայլեր անել, որովհետև ոչ մեկիս համար ցանկալի չէ գնալ այնտեղ պարտվել և՛ բարոյապես, և՛ ֆինանսապես: Մենք դատական համակարգի հետ կապված մեր բոլոր քննադատություններն անում ենք այդ լույսի ներքո, թե որքանով են մեր դատական վճիռներն ու որոշումները համապատասխանում նմանատիպ հարցերին վերաբերող Ստրասբուրգի դատարանի նախադեպային իրավունքին: ՀՀ Վճռաբեկ դատարանն արդեն՝ համագործակցելով մի շարք միջազգային կազմակերպությունների հետ, տպագրում է վճիռների ժողովածու, որոնք պետք է նախադեպ և ուղեցույց լինեն առաջին ատյանի դատարանի և ընդհանրապես դատական համակարգի համար: Սա հենց արդեն ԵՄ-ի կողմից օգնություն է և արդյունք է տալիս: Այնուամենայնիվ, շարժ կա և, իրոք, պետք է ընդունենք, որ ԵՄ-ի հետ համագործակցությունն օգնում է:

ԼԻԼԻԹ ՍԵՅՐԱՆՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐԸ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՍՂՈՒԹՅՈՒՆՆ Է

Հարցազրույց ՀՀ Արդարադատության փոխնախարար Նիկոլայ Առուստամյանի հետ

- Պրն Առուստամյան, Հայաստանի դատաիրավական ոլորտում ի՞նչ ծրագրեր են իրականացվում եվրոպական համայնքի աջակցությամբ:

- Ներկայումս Եվրամիության աջակցությամբ իրականացվում է «Բյուջետային աջակցության» ծրագիրը՝ «Աջակցություն Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումներին» ծրագրի հիման վրա: Ֆինանսական օժանդակությունը ներառվում է ուղղակիորեն պետբյուջեում, որտեղից էլ ուղղվում է տվյալ ոլորտի ռազմավարական ծրագրի իրականացմանը: Այդ կապակցությամբ արդեն հաստատված է 2009-2011թթ. դատաիրավական բարեփոխումների ռազմավարական գործողությունների ծրագիրը և այդ ծրագրից բխող միջոցառումների ցանկը ՀՀ նախագահի կարգադրությամբ:

- Ինչի՞ն է ուղղված այդ ծրագիրը:

- Ուղղված է ՀՀ-ում արդարադատության ոլորտի բարեփոխումներին: Միջոցառումների ցանկում խնդիր է դրվում բարձրացնել արդարադատության արդյունավետությունը, մատչելիությունը, նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը և այլն: Միջոցառումները վերաբերում են թե՛ դատական իշխանությանը, թե՛ դատախազական համակարգին, թե՛ փաստաբանությանը և այլ համակարգերի: Ներկայումս ընթացքի մեջ է նաև երկրորդ՝ արդարադատության մատչելիության ծրագիրը (Access to Justice), որը համատեղ ծրագիր է՝ ֆինանսավորում է ԵՄ-ն, մասամբ էլ՝ Եվրոպայի խորհուրդը, սակայն իրականացվում է ԵԽ-ի կողմից: Ծրագիրն ունի 3 հիմնական բաղադրիչ՝ դատական դպրոցի և փաստաբանական դպրոցների հետագա զարգացում, ինչպես նաև՝ իրավունքի գերակայության կոմպոնենտը, որտեղ նախատեսում է իրավական ակտերի նախագծերի մշակման, փորձաքննության կազմակերպման աջակցություն:

- Գումարային առումով որքա՞ն է տրամադրվել այս երկու ծրագրերի համար:

- Առաջին՝ բյուջետային աջակցության ծրագրին հատկացվելու է 16 միլիոն եվրո, 3 տարվա ընթացքում: Նախատեսվում է, որ 16 միլիոնը պետք է տրամադրվի 8-4-4 չափաբաժիններով: Պետությունը, որոշակի պարտավորություններ ստանձնելով, միայն անելիքները կատարելուց հետո է

հերթական ֆինանսավորումը ստանում: Առաջին նախապայմանն այն է, որ պետք է լինի ծրագիր, միջոցառումների ցանկ, կառավարման խորհուրդ: Այսինքն՝ բուն հանգամանքը, որ կա նախագահի կարգադրությամբ սահմանված միջոցառումների ցանկ և համապատասխան ծրագիր, արդեն իսկ նշանակում է, որ մենք հիմնականում բավարարել ենք առաջին նախապայմանը և ակնկալում ենք առաջին ֆինանսավորումը: Ինչ վերաբերում է հաջորդ տրանշներին, ապա դրանց տրամադրման համար հիմք են ծառայելու արդեն իրականացված կոնկրետ գործողությունները: Դրանք եվրոպական կողմի փորձագետների կողմից գնահատվում են՝ քանի՞ տոկոսով են կատարված, և նոր միայն որոշում է կայացվում ֆինանսավորման շարունակության վերաբերյալ: Երկրորդ ծրագրի ընդհանուր բյուջեն 3.9 միլիոն եվրո է:

- Վերջին տարիներին միշտ ուշադրության կենտրոնում է եղել և աջակցություն ստացել նաև քրեակատարողական ոլորտը: Կարելի՞ է ասել, որ ք/կի-ների ներկայիս վիճակը համապատասխանում է եվրոպական չափանիշներին:

- Ոչ: Դեռևս 2001թ. մարտին կառավարության կողմից հավանության էր արժանացել քրեակատարողական ծառայության բարեփոխումների հայեցակարգը, որտեղ շեշտադրումներ էին կատարվում, թե այս ոլորտում ինչ ուղղությունների վրա ուշադրություն պետք է դարձվի. իրավական բարեփոխումներ, ենթակառուցվածքային, սոցիալ-հոգեբանական աշխատանքների իրականացման, կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսպասարկման որակի բարձրացման կադրերի վերապատրաստման բարեփոխումներ, դատապարտյալների զբաղվածության խնդիրներ, ֆինանսական քաղաքականության ճշգրտումներ: Այս ուղղություններով մենք մեր հիմնական անելիքները գրեթե արել ենք. իրավական բարեփոխումները մյուս տարվա կեսին ամբողջությամբ ավարտած կլինենք: Շատ քիչ հարցեր են մնացել չլուծված, որոնք պահանջում են ֆինանսական ներդրումներ: Մենք ունենք նաև ենթակառուցվածքային բարեփոխումների խնդիր: Մեր շենք-շինությունները այսօր բավարար չեն իրավական լուծումները լիարժեք իրականացնելու համար: Այսինքն՝ ունենք օրենքներով և այլ իրավական ակտերով տրված կարգավորումներ, սակայն դրանք շատ դեպքերում ենթակառուցվածքային անհրաժեշտ ինստիտուտների բացակայության պատճառով չեն կարող լիարժեք իրականացվել:

- Եվրոպական կառույցների հետ ապագայում նախատեսվո՞ւմ են նոր ծրագրեր:

- Իհարկե: Եվրոպական կողմի հետ քննարկումներ են տարվում այն հարցերի շուրջ, թե 2009-2011 թթ., աշխատանքային ծրագրի միջոցառումների իրականացումից հետո ինչ ուղղություններով ենք պատկերացնում ոլորտի զարգացումները, ինչ լուծումներ կարող ենք տեսնել: Օրինակ՝ նույն քրեակատարողական ոլորտի առչությամբ մենք ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացված ենթակառուցվածքային բարեփո-

խումների հայեցակարգով նախանշում ենք առաջիկա 10-15 տարիների մեր անելիքները, ֆիքսում ենք զարգացման միտումները:

Զրուցեց Բ. ԹՈՒՆՅԱՆԸ

«ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ»

Մասնագիտությամբ ճարտարագետ Լիլիթ Մկրտչյանը, ով երկու տարի առաջ մասնակցել է Եվրամիության աջակցությամբ «Հայաստանի Հելսինկյան կոմիտեի» կողմից իրականացված «Քայլ առ քայլ» ծրագրին, այսօր, բացի իր հիմնական աշխատանքից, զբաղվում է նաև մարդու իրավունքներին առնչվող տարբեր հարցերի վերաբերյալ մոնիտորինգների անցկացմամբ: Լիլիթը բնակվում է Սյունիքի մարզի Գորիս քաղաքում, սակայն այսօր համագործակցում է «Քայլ առ քայլ» ծրագրի՝ տարբեր մարզերում գործող մասնակիցների հետ: Վերջիններս՝ յուրաքանչյուրը իր մարզում, իրականացնում են մարդու իրավունքների ոտնահարման տարբեր դեպքերի հետ կապված մոնիտորինգներ, հրապարակում են դրանց արդյունքները և պարբերաբար քննարկումներ են կազմակերպում այդ թեմաներով: Լիլիթն ասում է, որ նշված ծրագրին մասնակցելուց հետո դրա մասնակիցների միջև ստեղծվել է յուրահատուկ ցանց, որի անդամները գտնվում են մշտական շփման մեջ: «Քայլ առ քայլ» ծրագիրն ինձ տվել է մարդու իրավունքների ոլորտում բավականին մեծ իրազեկություն, գիտելիքներ և հմտություններ: Մեզ թվում է, թե մենք շատ բան գիտենք մարդու իրավունքների հետ կապված, բայց իրականում չգիտենք»,- պատմում է Լիլիթը, ում կարծիքով՝ այդ ծրագիրը հաջողված էր այն պատճառով, որ բացի տեսական գիտելիքներից, հագեցած էր նաև գործնական աշխատանքներով: «Ծրագրի վերջում մենք պիլոտային մոնիտորինգ արեցինք Աբովյանի քրեակատարողական հիմնարկում: Մեր խնդիրն էր պարզել, թե որքանով են այդ հիմնարկում ապահովվում նյութատեխնիկական պայմանները, կրթության, արտաքին աշխարհի հետ շփման՝ սահմանված չափանիշները»,- ասում է Լիլիթը՝ ավելացնելով, որ «Քայլ առ քայլ» ծրագրի մասնակիցներն այսօր էլ Հայաստանի տարբեր մարզերում իրենք մի շարք մոնիտորինգային ծրագրեր են իրականացնում և շարունակելու են համագործակցությունը այս ոլորտում:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ, ԱՅՆՈՒԱՄԵՆԱՅՆԻՎ, ՊԱՏՐԱՍՏ Է

Արդյոք մենք եվրոպացի՞ ենք, որքանո՞վ ենք մեր մտածելակերպով, արժեքային համակարգով ու հոգեկերտվածքով համապատասխանում հին աշխարհամասին: Եվ որքանո՞վ մենք մեզ հարմարավետ կզգանք եվրոպական ընտանիքում: Այս հարցերը միշտ էլ հուզել են շատերին, իսկ վերջին շրջանում սկսել են ավելի հաճախ քննարկվել:

Ի տարբերություն Եվրամիության՝ արևելաեվրոպական նոր անդամների, որոնց պատկանելությունը եվրոպական ընտանիքին կասկած չի հարուցում, հայերի հարցում անորոշությունը ավելի մեծ է: Չնայած դա զարմանալի չէ: Պատմականորեն գտնվելով Եվրոպայի և Ասիայի սահմանագծին, Հայաստանը տարբեր ժամանակաշրջաններում կրել է ասորական, բաբելոնյան, իրանական, հելլենիստական, բյուզանդական, արաբական, թուրքական և ռուսական քաղաքակրթությունների ազդեցությունը և փոխառել տարրեր թե՛ ասիական, թե՛ եվրոպական մշակույթից: Արդյունքում՝ մեր արժեհամակարգում, վարքագծում, մշակույթում և կենցաղում միախառնվել են երբեմն հակասական նրբերանգներ: Այդ «խառնուրդն» արտահայտվում է գրեթե բոլոր հարցերում. ինչպես պատկերավոր կերպով նշված է մի քանի տարի առաջ այս թեմայով իրականացված հետազոտություններից մեկի մեջ, «եվրոպական ձևով զարդարված սեղանների վրա մատուցվում են տիպիկ ասիական ուտեստներ, ինչպես խաշը կամ քաբաբը»:

Ի վերջո, մենք ավելի շատ եվրոպացի՞ ենք, թե՞ ասիացի: Հայերի մեծ մասը նախընտրում է առաջին տարբերակը, չնայած օտարները մեզ ավելի շատ շարունակում են ասիացի համարել: «Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի» տնօրեն Թևան Պողոսյանը բավականին ուշագրավ տվյալ հայտնեց: Իրենց անցկացրած հետազոտության արդյունքում պարզվել է, որ իրենց եվրոպացի համարող հայերի թիվը զգալիորեն զիջում է մի քանի տարի առաջ կատարված հարցման ցուցանիշին: Եվ սա՝ եվրոպական կառույցների հետ համագործակցության ակտիվացման ֆոնին: Ի՞նչ է սա նշանակում՝ հիասթափություն Եվրոպայի՞ց, թե՞ եվրոպական արժեքների սխալ ընկալո՞ւմ, դժվար է ասել: Հիասթափվելու պատ-

ճառներ, իհարկե, կան: Օրինակ մեր քաղաքական գործիչներից մեկը կարծիք էր հայտնել, որ իշխանությունները փորձում են միտումնավոր խեղաթյուրել եվրոպական արժեքները, եվրոպական ընտանիքին ինտեգրումը նույնացնելով աղանդավորության, համասեռամոլության, թմրամոլության և անբարոյականության տարածման հետ: Այս երևույթները, իսկապես, մեծ դեր են խաղում Եվրոպայի և եվրոպական արժեքների ընկալման հարցում: Օրինակ, եվրոպական արժեքներին և եվրահինտեգրմանը Հայաստանի երիտասարդների վերաբերմունքի վերաբերյալ Հայաստանում անցկացված հասարակագիտական մի հետազոտության մեջ առանձին գլխում ներկայացված է հանդուրժողականության աստիճանը՝ մարդու իրավունքների հարցում: Պարզվում է՝ հայերն առավել հանդուրժողական են գենդերային հարաբերություններում. 68.6%-ը պատրաստ են եղել ընդունել կանանց և տղամարդկանց հավասարությունը: Մինչդեռ սեռական փոքրամասնությունների հարցում այդպես չէ. 10-ից 7-ը գտնում են, որ համասեռամոլները չպետք է մյուսների հետ հավասար իրավունքներ ունենան:

Անհանդուրժողական է վերաբերմունքը նաև կրոնական փոքրամասնությունների նկատմամբ: Այս առումով՝ բնական է, որ եթե եվրոպական արժեքները նույնացվում են հենց վերը նշված երևույթների հետ, դա ազդում է թե՛ եվրոպացի համարվելու, թե՛ եվրահինտեգրվելու ցանկության վրա: Որոշիչ դեր է խաղում նաև տեղեկացվածության ցածր մակարդակը:

Ինչ գիտենք Եվրոպայի մասին

Ըստ էության՝ շատ քիչ բան: Օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով՝ մենք հետաքրքրվում ենք միայն մեր ներքաղաքական իրադարձություններով: Օրինակ՝ Հայաստանում քչերին հետաքրքրեց, որ Եվրամիությունը առաջին անգամ նախագահ ընտրեց: Անգամ Ազգային ժողովի պատգամավորների մեջ կգտնվեն մարդիկ, ովքեր չգիտեն Եվրամիության, Եվրոխորհրդարանի և Եվրոպայի խորհրդի տարբերությունները: Եվրոպական կառույցները մեզ հետաքրքրում են հիմնականում ընտրությունների ժամանակ և դրանցից հետո իրենց որդեգրած մոտեցումներով, իսկ տնտեսության հետ կապված՝ միայն այնքանով, որքանով մենք առևտուր ենք անում Եվրոպայի հետ: Իսկ Եվրոպայի մշակութային իրադարձությունների մասին ընդհանրապես չենք խոսում. մերոնք ավելի շատ նախընտրում են «Ժողովրդական երգիչ» նախագիծը: Վերը նշված հետազոտության մեջ «Որքանո՞վ եք դուք ծանոթ եվրոպական արժեքներին, մենթալիտետին և կենսակերպին» հարցին ընդամենը 9.5%-ն է պատասխանել՝ շատ լավ: 17.2%-ը նշել է, որ վատ գիտի, իսկ 73.3%-ը՝ միջին մակարդակի տեղեկացվածություն է ունեցել: Բացի այդ, ժամանակակից հայ երիտասարդության ընդամենը 7%-ն է կարծում, որ հայերը՝ իրենց մշակույթով և մտածելակերպով, մոտ են եվրոպականին: Ավելի քան 70%-ը համոզված է, որ մենք ունիկալ ենք և ոչ ոքի նման չենք:

Այնուամենայնիվ՝ եվրահինտեգրում

Սակայն անկախ այս ամենից՝ հայերը ցանկանում են ինտեգրվել Եվրո-

պային: Հետազոտությունները ցույց են տվել, որ, մասնավորապես, երիտասարդության 70%-ից ավելին կողմ է, որպեսզի Հայաստանը դառնա Եվրամիության անդամ: Փաստորեն, եվրաինտեգրման դրական արդյունքները՝ օրենքի գերիշխանությունը, արդար դատաիրավական համակարգը, կոռուպցիայի դեմ պայքարը և տնտեսական օգուտները, մենք ավելի շատ ենք կարևորում, քան մեր մտածելակերպին երբեմն ոչ հարիր եվրոպական այլ արժեքները: Հարցման մասնակիցների շուրջ 60%-ը համաձայն է եղել հետևյալ պնդման հետ. «Իմաստ չեմ գտնում հայկական և եվրոպական մշակույթը հակադրելու մեջ: Մենք կարող ենք ինտեգրվել Եվրոպային՝ պահպանելով մեր ավանդույթներն ու մշակութային արժեքները»: Այսինքն՝ լավատեսության հիմքեր, այնուամենայնիվ, կան:

ԲԱԲԿԵՆ ԹՈՒՆՅԱՆ

ԱՐԺԵՔՆԵՐԸ ՉԿԻՐԱՌՎԵԼՈՎ՝ ԴԱՌՆՈՒՄ ԵՆ ՀԱԿԱԱՐԺԵՔՆԵՐ

Ազգագրագետ Հրանուշ Խառատյանի համոզմամբ, եվրոպական կոչված արժեքները նույն մեր արժեքներն են, սակայն խնդիրն այն է, որ դրանք հասարակության կյանքում գործնականում չեն կիրառվում: «Կարծում եմ, որ առնվազն 2000 տարի մենք այդ նույն արժեքների հետ ենք առնչվում: Այլ խնդիր է, թե արժեքը հիմա մեզ մոտ ինչպես է գնահատվում: Իմ կարծիքով, դրանց կարևորությունը ոչ այնքան և ոչ թե դրանց եվրոպական լինելու մեջ է, այլ ինքնին արժեքի մեջ է: Մեր հասարակությունը, կարծում եմ, այսօր ներքին խնդիր ունի ընդհանրապես արժեքները դասդասելու, կողմնորոշումները հստակեցնելու առումով: Եվրոպական արժեքներն այն արժեքներն են, որոնք այսօր էլ մեր հասարակության համար համարվում են լավագույն արժեքները, բայց ենթադրում եմ, որ դրանք մեր հասարակության մեջ չեն գործում,- ասում է տիկին Խառատյանը՝ ավելացնելով,-Իմ տագնապը տվյալ դեպքում այն է, որ այդ արժեքները ֆորմալ ընդունած Ազգային ժողովն ու մեր իշխանություններն՝ իրենք, չեն ընդունում դրանք: Եվ ֆորմալ ընդունելով, օրենքները համապատասխանեցնելով, բայց դրանք չկիրառելով՝ այդ արժեքները երկրում դառնում են հակաարժեքներ: Եվ այդ արժեքների այսպիսի ներկայացումը հասարակության մեջ առաջացնում է թերահավատություն: Նույնիսկ մեր հասարակության մեջ շատ բոյկոտվող կրոնական ազատությունների խնդիրը հաճախ քննարկվում և ներկայացվում է՝ որպես մեր էթնիկ հավաքականության տրոհման վտանգ: Դրա փոխարեն՝ որպես մեր էթնիկ հավաքականության տրոհման վտանգ, երբեք չի քննարկվում սոցիալական բևեռացումը, այս կազինոյական մշակույթը, որոնք ուղղակի տրոհում են հասարակությունը թշնամի բանակների: Երբևէ լսե՞լ եք, որ այս երևույթը դիտարկվի և քննարկվի մեր էթնիկ քաղաքականության տեսանկյունից»,- հարցնում է տիկին Խառատյանը:

Ազգագրագետը համոզված է, որ ոչ միայն եվրոպական, այլև համամարդկային արժեքների տարածումը, կիրառումն ու պահպանումը պետք է ուղղորդված լինեն պետության ղեկավարների կողմից: «Ես խորապես համոզված եմ, որ դա նաև հասարակագիտական մտքի ձեռքբերումներից, օրենքներից մեկն է, որ արժեքների ձևավորումը լինում է կամ իշխանության, կամ այդ պահին առկա էլիտար, մի խոսքով՝ այն մարդկանց միջավայրում, որոնք տվյալ դեպքում դերակատար են: Եվ նրանց կողմից

դա աստիճանաբար տարածվում է հասարակության այլ խավերի մեջ: Սրա վերաբերյալ բազմաթիվ հետազոտություններ կան: Բավական է թեկուզ հիշատակել, որ գաղութային կամ կախյալ երկրներում հենց իշխող էլիտան է կողմնորոշում դեպի գաղութացնող մշակույթի արժեքները, լեզուն, կրոնը: Էլիտար շերտը հիմա համարենք իշխանությունը: Այո, եթե մինչև իշխանությունն ինքը այդ արժեքների նորմերը չկիրառի իր միջավայրում, այն երբեք չի դառնալու արժեք հասարակության մեջ: Եվ ես խորապես համոզված եմ, որ այս պահին իշխանությունն ինքը բոյկոտում է այդ արժեքները, և այդպիսով հասարակության մեջ առաջանում է անորոշություն, թե որոնք են այդ արժեքները: Մինչդեռ դրանք շատ պարզ արժեքներ են, շատ հեռու գնալ պետք չէ: Կրկնում եմ, դրանք հավասարության, արժանապատվության, իրավունքի, օրինականության, ազնվության, բարոյականության արժեքներ են»,- ասում է Հրանուշ Խառատյանը:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ԵՆ

Հարցազրույց գրող, հրապարակախոս Տիգրան Պասկևիչյանի հետ



- Ինչպե՞ս է իրականում հայ հասարակությունը վերաբերվում Եվրոպային և եվրոպական արժեքներին: Որքանո՞վ են եվրոպացի դառնալու մեր ցանկությունները դեկլարատիվ և իրական՝ արժեքային համակարգի փոփոխության հարթությունում:

- Եվրոպական արժեքներն, ըստ էության, համամարդկային են, դրանով իսկ ընդունելի ցանկացած ազգի կամ մարդու համար: Հասարակությունը, կարծում եմ, այդ արժեքների հետ որևէ խնդիր չունի: Կոնֆլիկտային իրավիճակ Հայաստանում (ինչո՞ւ չէ՝ նաև նախկին ԽՍՀՄ հանրապետություններից շատերում) ստեղծում են իշխանությունները՝ մի կողմից՝ դե յուրե ընդունելով այդ արժեքները, մյուս կողմից՝ դրանք հասարակությանը ներկայացնելով որպես դրսի պարտադրանք: Ըստ իս, ՀՀ-ում ոչ թե արժեքային համակարգի փոփոխությունն է առաջնահերթ խնդիր, այլ՝ ինքնադրսևորման մեխանիզմների ապահովումը: Հասարակական ազատ ինքնադրսևորումը չի կարող առաջ բերել այնպիսի արժեքներ, որոնք էականորեն կհակասեն եվրոպականին:

- Արդյո՞ք քաղաքական ինտեգրումը Եվրոպային կարող է հանգեցնել նաև հասարակական ընկալման մեջ եվրոպական արժեքների իրական արմատավորմանը, թե՞ այդուհանդերձ մեր մտածողության մեջ կա մի շերտ, որը կարող է դիմադրել սոցիալական, մշակութային, արժեքային նորմերի փոփոխությանը:

- Այն օրը, երբ Հայաստանն անդամակցեց Եվրոպայի խորհրդին, ես երջանկության զգացում չունեցա, թեև ինձ համար թանկ են եվրոպական կոչվող արժեքները: Ինչո՞ւ: Որովհետև քաղաքական ինտեգրումից առաջ հասարակությունն այդ արժեքներն ինքնուրույն դրսևորելու հնարավորություն պետք է ունենար: Եվրոպական արժեքները գրավիչ են նրանով, որ դրանցում գործողությունն ու գաղափարը նույնացած են: Եթե մարդուն չեն թողնում ընտրել իր գյուղապետին, քաղաքապետին, նախագահին, ի՞նչ երաշխիք, որ նա ողջամտորեն կընտրի այնպիսի վերացական բաներ, ինչպիսիք են ազատությունը, իրավունքը, հավասարությունը և այլն: Երբ գործողությունն ու գաղափարն առանձնացվում են, կարող է դիմադրության տպավորություն ստեղծվել, բայց դա սոսկ տպավորություն է:

- Մշակույթը, արվեստը կարո՞ղ է դառնալ այն միջոցը, որը կհանգեցնի հասարակական ընկալման մեջ նոր համակարգի ձևավորմանն այն առումով, որ անկախ քաղաքական կողմնորոշումներից, հասարակության մեջ ներքին վերափոխման, եվրոպական արժեքներ կրելու պահանջ առաջանա:

- Արվեստն ընդամենը հասարակական քննարկման մի մասն է: Արվեստն արդյունավետ լինել չի կարող, երբ չկա հաղորդակցություն: Պետք է ապահովել ինտերակտիվ միջավայր, և այդ դեպքում արվեստը գուցե իր չափով նպաստի հասարակության ներքին վերափոխմանն ու եվրոպական արժեքների պահանջարկի մեծացմանը: Մշակութային մեր ավանդույթը, ցավոք, թանգարանն է: Մշակութային արժեքի չափորոշիչը՝ սրբազնությունը: Արվեստը կարող է լինել քննարկումների նախաձեռնող, բայց դրանք դուրս չեն գա նեղ շրջանակներից, քանի դեռ ընտրելու միջոցով փոփոխությունների հասնելու ավանդույթը չի վերացրել սրբազնության գերիշխանությունը:

- Այսօր Հայաստանը ներգրավված է Եվրամիության կողմից իրականացվող մի շարք խոշոր ծրագրերում՝ Նոր հարևանություն, Արևելյան գործընկերություն և այլն: Այս ծրագրերը նախատեսում են բազմաթիվ գործողություններ, տարբեր ոլորտների բարեփոխումներ: Այդ գործողությունները հեռանկարում կարո՞ղ են հանգեցնել նաև մտածողության փոփոխության:

- Ձեր նշած ծրագրերը շատ կարևոր են, իմ կարծիքով, սակայն, վտանգ կա, որ դրանք շատ այլ ծրագրերի նման կարող են արդյունավետ չլինել և դուրս չգալ առանձին ոլորտներից: Հնարավորին չափ պետք է մոտեցնել եվրոպական կառույցների և եվրոպական արժեքների՝ հայ հասարակության ընկալումները: Կառույցների անհետևողականությունն իր չափով նվազեցնում է եվրոպական արժեքների նշանակությունը: Սա էլ իր հերթին՝ հասարակության մեջ արմատավորում է պարտադրանքի զգացումը: Հարևանությունը կամ գործընկերությունը ենթադրում են շահերի ստորադասում արժեքներին և ոչ՝ հակառակը:

ՆԱԵՎ «ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ»

Վերջին 50 տարիների ընթացքում Եվրամիությունը իրականացրել է բնապահպանական լայնածավալ միջոցառումներ, ստեղծվել է օրենսդրական բազա՝ անդամ երկրների բնապահպանական գործունեությունը կառավարելու և կոորդինացնելու համար, մշակվել և ներդրվել են շրջակա միջավայրի պահպանության և բարելավման նոր մոտեցումներ: Ներկայումս ԵՄ-ն հանդիսանում է աշխարհում միջազգային բնապահպանական համագործակցության առաջատարներից մեկը: Միևնույն ժամանակ, այս բնագավառում ԵՄ քաղաքականությունն ու գործողությունները սերտորեն կապված են գլոբալ գործընթացների հետ: Միությունը շրջակա միջավայրի պահպանության ոլորտում ունի մեծ իրավասություններ: Սակայն միշտ չէ, որ այդպես է եղել: 1957թ. ստորագրված Հռոմի հիմնադիր պայմանագիրը Եվրամիությանը իրավասություններ չէր տրամադրում: ԵՄ միջոցառումները այդ շրջանում ընդամենը անուղղակիորեն շոշափում էին շրջակա միջավայրի պահպանության հարցերը և հիմնականում ուղղված էին սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը: Սակայն 1970-ականների սկզբին, կապված Եվրոպայում բնապահպանական ճգնաժամի սրացման հետ, անհրաժեշտություն առաջացավ ԵՄ մակարդակով իրականացնել բնապահպանական միջոցառումներ: Մասնագետները առանձնացնում են ԵՄ բնապահպանական քաղաքականության ձևավորման 5 փուլ.

Առաջին փուլ (1957-1971թթ.) - Այս փուլում ԵՄ-ն շրջակա միջավայրի պահպանության ոլորտում չուներ իրավասություններ: Իրականացվում էին հատուկենտ ֆակուլտատիվ միջոցառումներ: Բնապահպանական խնդիրները երկրորդ պլանում էին:

Երկրորդ փուլ (1972-1985թթ.) - Մշակվեցին տվյալ ոլորտում գործողությունների առաջին ծրագրերը: 1972թ. ԵՄ անդամ երկրների ղեկավարների խորհուրդը որոշեց ընդլայնել ԵՄ իրավասությունները՝ այդ թվում բնապահպանության ոլորտում: ԵՄ-ն միացավ միջազգային մի շարք կարևոր բնապահպանական կոնվենցիաների:

Երրորդ փուլ (1986-1991թթ.) - Այս փուլը կարելի է բնութագրել որպես շրջակա միջավայրի պահպանության բնագավառում լիազորությունների ամրագրման ժամանակաշրջան: 1986թ. Միասնական եվրոպական ակտը փոփոխություններ մտցրեց 1957թ. ստորագրված Հռոմի համաձայնագրում: Դրանով սահմանվեցին ԵՄ քաղաքականության սկզբունքներն ու ուղղությունները՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում: Այս

փուլում ԵՄ բնապահպանական քաղաքականությունը ընդհանուր գծերով ձևավորվեց:

Չորրորդ փուլ (1992-2002թթ.) - Միության էկոլոգիական քաղաքականության կատարելագործման փուլ, որը հատկանշական է հետևյալ ասպեկտներով.

գ ԵՄ բնապահպանական իրավասությունները համատեղ են՝ անդամ երկրների հետ միասին,

գ ԵՄ բնապահպանական գործունեությունը անքակտելիորեն փոխկապակցված է եվրաինտեգրացիայի այլ ուղղությունների հետ:

Այս փուլում վերջնական տեսք ստացան այս բնագավառում ԵՄ նպատակներն ու խնդիրները: 1997թ. ընդունվեց Ամստերդամի պայմանագիրը, որը փոփոխություններ մտցրեց մինչ այդ ընդունված փաստաթղթերում՝ հիմք դնելով բնապահպանական օրենսդրության հետագա զարգացման համար: Ամստերդամի պայմանագիրը հաստատեց «կայուն զարգացման» սկզբունքների կարևորությունը՝ ներառելով շրջակա միջավայրի պահպանության հարցերը: Կանոնակարգվեցին այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են էկոլոգիական ստանդարտիզացիան, շրջակա միջավայրի վրա անթրոպոգեն և տեխնոգեն ազդեցության գնահատումը, բնապահպանական իրավունքների ֆինանսավորման և պաշտպանության մեխանիզմները: Այսպիսով, չորրորդ փուլը բնութագրվում է էկոլոգիական քաղաքականության առանձնացմամբ՝ որպես ԵՄ գործունեության կարևոր ուղղություններից մեկը:

Հինգերորդ փուլ (2003թ.՝ մինչ օրս) - Ներկայիս փուլում ԵՄ-ում իրականացվում է շրջակա միջավայրի պահպանության իրավական կարգավորման կատարելագործում: Մասնավորապես, փոփոխությունների են ենթարկվել էկոլոգիական տեղեկատվության հավաքման և մշակման, էկոլոգիական մոնիտորինգի, սերտիֆիկացման համակարգերը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մեխանիզմները և այլն: Կարևոր բաղադրիչ է նաև շրջակա միջավայրի պահպանության խնդրի ներառումը ԵՄ Սահմանադրության մեջ:

Մասսրիխտի պայմանագրի ստորագրման պահից ի վեր, կարելի է ասել, որ ԵՄ-ն աստիճանաբար վերածվում է նաև «էկոլոգիական միության»: ԵՄ անդամ երկրները պարտավոր են շրջակա միջավայրի պահպանության խնդիրները ինտեգրացնել քաղաքականության բոլոր ոլորտներին վերաբերող նորմատիվ-իրավական ակտերում: ԵՄ բոլոր ինստիտուտների գործառույթները այս կամ այն կերպ առնչվում են էկոլոգիական խնդիրների հետ: Շրջակա միջավայրի պահպանության հարցերով զբաղվում են Եվրահանձնաժողովը, Եվրախորհրդարանը, Եվրոպական խորհուրդը և Շրջակա միջավայրի Եվրոպական գործակալությունը, որը ստեղծվել է 1990թ.:

ԱՄԵՆ ԻՆՉ ԿԱՐԵԼԻ Է ՍԿՍԵԼ ՀԵՆՑ ԷԿՈԼՈԳԻԱՅԻՑ

Բնապահպանական խնդիրները գնալով ավելի մեծ ուշադրության են արժանանում միջազգային հանրության կողմից: Մասնավորապես, Եվրամիությունը լուրջ քաղաքականություն է իրականացնում այս ուղղությամբ, ոչ միայն իր սահմաններում, այլև՝ հարևան երկրների հետ համատեղ:

Շրջակա միջավայրի պաշտպանությունն այսօր հանդիսանում է Եվրամիության գործունեության առաջնային ուղղություններից մեկը՝ ինտեգրացիայի այլ ուղղությունների հետ միասին: Սա նշանակում է, որ բնապահպանության նկատմամբ եվրոպացիների աճող ուշադրությունը կարող է օգտակար լինել նաև Հայաստանի համար, որտեղ շրջակա միջավայրի պաշտպանության հարցերը մի տեսակ հետին պլան են մղվել: Մասնագետները կարծում են, որ Հայաստան-Եվրամիություն Գործընկերության և համագործակցության համաձայնագիրը առավելագույնս կարող է նպաստել բնապահպանական ոլորտում Հայաստանի համագործակցության ընդլայնմանը Եվրամիության և նրա անդամ երկրների հետ:

Հայ բնապահպանների խոսքերով, գործողությունների ծրագրերը (մասնավորապես, «Շրջակա միջավայրի պահպանություն» և «Կայուն զարգացում» բաղադրիչները) կարևոր գործիքներ են այս խնդիրների լուծման համար: Սակայն ծրագրի ընդունումը մի բան է, դրա իրագործումը՝ մեկ այլ բան: «Հիմնական խնդիրն այն է, որ մեր պայմանագրերը, կոնվենցիաները, օրենքները, ամեն ինչը իմիտացիոն բնույթ են կրում»,- ասում է «Հանուն կայուն մարդկային զարգացման ասոցիացիայի» նախագահ, ՀՀ բնապահպանության նախկին նախարար Կարինե Դանիելյանը: Վերջինիս խմբագրությամբ, ի դեպ, կատարվել է «բնապահպանություն» և «կայուն զարգացում» ուղղություններով ԵՄ-Հայաստան Գործողությունների ծրագրի 2006-2008թթ. իրականացման գնահատումը: Միանգամից նշենք, որ, բացառությամբ 10-րդ բաժնի, գնահատականները բավականին բարձր են (տես աղյուսակը): Եվ դա բավական յուրօրինակ բացատրություն ունի, ինչի մասին նշել են հենց գնահատման հեղինակները՝ «իրականացման ճգնաժամը»: Այսինքն՝ այն երևույթը, երբ խոսքը գործ չի դառնում: «Առաջին անգամ, երբ մենք այդ հարցաշարը լրացնում էինք, բարձր, շատ լավ պատկեր ստացվեց: Որովհետև պայմանագրերը կնքվել են, կոնվենցիան ստորագրվել է... Բայց իրականացվե՞լ է ծրագիրը, բնության մեջ փոփոխություն դեպի լավը կամ դեպի վատը եղե՞լ է: Այդ հարցերը համարյա

չկային: Երբ հարցաշարը մի փոքր փոխեցինք, փոխվեցին նաև արդյունքները: Եթե ավելի շատ խորանային, արդյունքները ավելի ուրիշ կլինեին»,- ասում է տիկին Դանիելյանը:

Գնահատման ընդհանրացված արդյունքները

Հարցաշարի բաժինը	Մակարդակը տոկոսներով
1. Եվրամիության հետ համագործակցության ուժեղացում	52.1%
2. Եվրամիության պարտավորությունների մակարդակի գնահատում	40.0%
3. Միջազգային կոնվենցիաների և արձանագրությունների վավերացում	*
4. Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում պլանների ու ծրագրերի մշակում	64.1%
5. Աջակցություն բնապահպանական օրենսդրության ընդունմանը (սեկտորալ մոտեցում՝ ջուր)	75.1%
6. Ադմինիստրատիվ կառույցների ու ընթացակարգերի ուժեղացում	61.5%
7. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակով համակարգերի ու ընթացակարգերի ուժեղացում (բնապահպանական փորձաքննություն)	56.7%
8. Թույլատրվող և իրավակիրառական կառույցների կատարելագործում	55.6%
9. Տեղեկատվական մատչելիության և հասարակության մասնակցության բարելավում	
10. Շրջակա միջավայրի իրավիճակի մասին կանոնավոր զեկույցների պատրաստում	0
11. Աջակցություն քաղաքացիական հասարակությանը և տեղական իշխանության մարմիններին	66.7%
12. Հարևան երկրների հետ համագործակցության ուժեղացում	55.5%
13. Քաղաքականության այլ ոլորտներ բնապահպանական դրույթների ինտեգրման ապահովում (աջակցություն կայուն զարգացմանը)	61.1%
14. Կիոտոյի արձանագրության և կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների իրականացում	80.0%
15. էներգետիկ և տրանսպորտային քաղաքականության կայունության բարելավում	61.5%

* - ՀՀ-ի համար տվյալ բաժինը հնարավոր չէ ադեկվատ գնահատել, քանի որ մեր երկիրը Ուղեցույցում նշված կոնվենցիաների մեծ մասին միացել է Գործողությունների ծրագրի հաստատումից առաջ, ինչն ուղեցույցում հաշվի չի առնվում:

Իմիտացիոն գործելաոճը և իրականացման ճգնաժամը, կարելի է ասել, գլխավոր խոչընդոտներն են, որոնք թույլ չեն տալիս այս ոլորտում օգտագործել Հայաստան-ԵՄ համագործակցության ընձեռած բոլոր հնարավորությունները: «Եվրոպացիների մտքով չի անցնում, որ մի կողմից կարելի է կոնվենցիաները ստորագրել, մյուս կողմից, օրինակ, քաղաքաշինության մեջ բացարձակ հակաէկոլոգիական քաղաքականություն իրականացնել: Մենք, փոխանակ ադապտացվենք կլիմայի փոփոխությանը, այնպես ենք անում, որ ջերմաստիճանը ավելի բարձր լինի ամռանը, որ անապատը վերադառնա Երևան: Ամբողջ Եվրոպան տրամվայների գծերը ընդլայնեց, Փարիզը վերականգնեց տրամվայները, իսկ մենք հակառակն արեցինք»,- ցավով արձանագրում է Կարինե Դանիելյանը:

Իհարկե, ինչպես նշում են գնահատման հեղինակները, ԵՀՔ-ի (ENP) շրջանակներում նվազ կամ առավել հաջող քայլեր իսկապես իրականացվել են: Օրինակ՝ ՀՀ-ում հիմնական անհրաժեշտ ռազմավարական քաղաքական փաստաթղթերն ընդունված են, և մեր երկրում եվրոպական քաղաքականության իրականացման գործընթացի ինստիտուցիոնալ աջակցությունը ապահովված է: Հայաստանը ստորագրել և վավերացրել է շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող եվրոպական կոնվենցիաների մեծ մասը, մշակվել և հաստատվել է Շրջակա միջավայրի պահպանության գործողությունների երկրորդ ազգային ծրագիրը, ՀՀ օրենսդրությունը բավականաչափ համահունչ է ԵՄ իրավունքի սկզբունքներին: Դրական է գնահատվել նաև այն, որ Հայաստանը ներգրավված է մեծ թվով եվրոպական գործընթացներում, ինչպես, օրինակ՝ «Շրջակա միջավայր Եվրոպայի համար», «Շրջակա միջավայրը և անվտանգությունը» և այլն: Մասնակցում ենք նաև տարածաշրջանային ծրագրերի, երկկողմ ծրագրերի Իրանի և Վրաստանի հետ, չնայած այս առնչությամբ որոշակի խնդիրներ կան: «Ադրբեջանի հետ մեր համագործակցությունը շատ դժվար է, Թուրքիայի հետ՝ նույնպես: ՀԿ-ների մակարդակով մենք աշխատում էինք Ադրբեջանի հետ, բայց դա գնալով դժվարացել է, որովհետև իրենց պախարակում են մեզ հետ համագործակցելու համար»,- ասում է տիկին Դանիելյանը: Ընդ որում, եթե այս խնդիրը ունի օբյեկտիվ պատճառներ, ապա այլ բնույթի թերացումներում՝ իրավական նիհիլիզմի, օրենքների թույլ իրագործման և այլ հարցերում, մեղադրել կարող ենք միայն ինքներս մեզ: Թերությունների շարքում՝ գնահատման հեղինակները նշում են նաև, որ բնապահպանական կարևորագույն լուծումների ընդունման գործընթացում հասարակության մասնակցությունը որոշ չափով ապահովվում է, սակայն, միաժամանակ, հասարակության ազդեցությունը խիստ սահմանափակ է: «Վարչապետը հրահանգել է նախարարություններին՝ մաքսիմալ կերպով աշխատել հասարակական կազմակերպությունների հետ: Մենք խոսում ենք, մեզ լսում են: Բայց խնդիրն այն է, թե հետո որքանով է դա իրականանում»,- ասում է Կարինե Դանիելյանը: Ոմանք ասում են՝ խնդիրը զուտ հայկական մտածելակերպի մեջ է. ի տարբերություն եվրոպացիների՝ մենք պահանջատեր չենք, հատկապես բնապահպանական հարցերում: Սակայն Կարինե Դանիելյանն այս դիտարկմանն ի պատասխան՝ հիշեցնում է, որ Ղարաբաղյան շարժումից առաջ Հայաստանում սկսվեց հենց էկոլոգիական շարժումը. «Որքան էլ զարմանալի լինի, ժողովրդական շարժումը հենվեց էկոլոգիական շարժման վրա: Բայց հետո սկսվեց պատերազմը, ծագեցին սոցիալական բազմաթիվ խնդիրներ… Մարդիկ գերադասում են սոցիալ-տնտեսական խնդիրները ավելի շատ առաջ մղել»: Վերջին շրջանում նա հասարակության կողմից որոշակի հետաքրքրություն բնապահպանական հարցերի նկատմամբ տեսնում է, ասում է, որ մարդիկ զանգում են, փողոցում մոտենում, տարբեր հարցեր են բարձրացնում: «Բայց խնդիրն այն է, որ այս վայրի շուկայի մթնոլորտից լավ բան սպասել չի կարելի: Մեզանում ձևավորվել է կիսաֆեոդալ,

վայրի կապիտալիզմի խառը համակարգ, որտեղ պարզ է, որ ժողովրդավարություն լինել չի կարող, էկոլոգիական ժողովրդավարություն լինել չի կարող, իսկ էկոլոգիական խնդիրները իմիտացիոն բնույթ են կրում: Երբ մնացած ոլորտներում տիրի ֆեոդալիզմ, այս ոլորտում զարգացած էկոլոգիական ռազմավարություն չի կարող լինել»,- ասում է նա: Ի դեպ, իրենց եզրակացությունների մեջ գնահատման հեղինակները իշխանություններին խորհուրդ են տալիս. «Ինտենսիվացնել երկրի ժողովրդավարացման գործընթացը՝ ընդհանրապես, և «բնապահպանական ժողովրդավարացման» զարգացումը՝ մասնավորապես»: Կարևորվել է նաև իրավական նիհիլիզմի հաղթահարումը, պետության կարգավորիչ դերի բարձրացումը, տնտեսական քաղաքականության մեջ գերակայությունը լեռնահանքարդյունահանման ոլորտներից այլ բնագավառներին տալը: Իսկ եթե ծրագրերը, միևնույն է, մնում են թղթի վրա, և շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում դրական փոփոխություններ տեղի չեն ունենում, արդյոք այդ բոլոր ծրագրերը չե՞ն կորցնում իրենց նշանակությունը: «Բոլոր դեպքերում պետք է շարժվենք այդ ուղղությամբ: Իհարկե, խնդիրը շատ ավելի խորքային է: Այսինքն, ինքը՝ համակարգը, ընդհանուր առմամբ պիտի մոտենա ժամանակակից կապիտալիստական համակարգին, և միգուցե հենց կողքից հրելով կարելի է այն առաջ տանել: Հենց էկոլոգիայից կարելի է սկսել»,- ասում է Կարինե Դանիելյանը:

ԲԱԲԿԵՆ ԹՈՒՆՅԱՆ

ԲԱՐԵԿԵՑԻԿ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Սոցիալական խնդիրների մասին քննարկումներում, որպես օրինակ, հաճախ է նշվում եվրոպական սոցիալական քաղաքականությունը՝ ԵՍՔ: Ի՞նչ ասել է՝ ԵՍՔ, մեզանում թերևս քչերը կկարողանան կոնկրետ պատասխանել:

Սակայն հենց բառակապակցությունը և եվրոպացի վարձու աշխատողների պայմանների մասին պատկերացումները շատերին հիմք կտան ենթադրելու, որ դա մի քաղաքականություն է, որն ի վերջո նպաստում է մարդկանց կենսամակարդակի բարձրացմանը: Սակայն կենսամակարդակի բարձրացումը ԵՍՔ-ի նպատակներից միայն մեկն է: Եվրամիության երկրներում կիրառվող սոցիալական քաղաքականությունն ուղղված է նաև աշխատանքի պայմանների բարելավմանը, զբաղվածության խթանմանն ու հավասար հնարավորությունների ստեղծմանը, սոցիալական պաշտպանվածության նվազագույն մակարդակի ապահովմանը: Այս նպատակներին հասնելու համար Եվրոպայում օգտագործվում են այնպիսի գործիքներ, ինչպիսիք են Եվրոպական սոցիալական հիմնադրամը, ծրագրերը, օրենսդրությունը, ինչպես նաև՝ առանձին երկրների ներսում գործող նորմերն ու կանոնները: Չնայած այն հանգամանքին, որ սոցիալական ոլորտում եվրոպական քաղաքականությունն արդեն իսկ մեծ առաջընթաց է արձանագրել, իսկ ԵՄ անդամ առանձին երկրների իրավական ակտերը պարբերաբար լրացվում են եվրոպական պահանջներով, մինչև իսկական սոցիալական միության հասնելը դեռ երկար ճանապարհ կա անցնելու: Աշխատանքային և զբաղվածության օրենսդրության ամենակարևոր ասպեկտները դեռ շարունակում են մնալ անդամ երկրների իրավասության ներքո: Սակայն ավելի կարևոր է ոչ թե բոլոր վիճելի հարցերի միասնական լուծումը (սկսած գործազրկությունից՝ մինչև ապագա բարեկեցություն), այլ այն փաստը, որ եվրոպական մակարդակով բաց քննարկման սկիզբ է դրվել՝ եվրոպական հասարակության ապագա մոդելի վերաբերյալ:

1948թ. մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը ներառում է մարդու իրավունքների ընդհանուր սպեկտրը, որտեղ քաղաքացիական և քաղաքական իրավունքների ու ազատությունների հետ միևնույն շարքում տեղ են գտել նաև տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները: Իսկ մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան այդ ամենից «ծածկում» էր միայն քաղաքացիական ու քաղաքական իրավունքները: Որպես կոնվենցիայի լրացում՝ 1961թ. հոկտեմբերի 18-ին Թու-

րինում ստորագրվեց սոցիալական խարտիան, որն ուժի մեջ մտավ 1965թ. փետրվարի 26-ից:

Բանն այն է, որ եվրոպական կոնվենցիայում տեղ գտած իրավունքները, այսպես ասած, նեգատիվ, պաշտպանական բնույթ ունեն. նրանք պետք է պաշտպանեն մարդուն պետության միջամտությունից: Պետությունը չպետք է գործողություններ կատարի, որոնք խախտում են մարդու իրավունքները: Իսկ սոցիալական և տնտեսական իրավունքների իրացման համար, որպես կանոն, պետությունը պետք է որոշակի ծառայություններ մատուցի: Դրանք մեծ մասամբ ձևակերպված են որպես ապագային միտված առաջադրանքներ և ենթադրում են տնտեսական զարգացման որոշակի աստիճան: Խարտիան կանգ է առնում այս խնդիրների վրա. մի կողմից՝ սոցիալական և տնտեսական իրավունքները ձևակերպում է որպես պետության նպատակներ, մյուս կողմից՝ կաղապարում է դրանք պետության կողմից երաշխավորված իրավական նորմերի մեջ, ձևակերպելով որպես պարտականություններ: Առանց մանրամասն ներկայացնելու Խարտիայի և Եվրոպական քաղաքականության բաղադրիչները, մի քանի խոսքով ներկայացնենք, թե եվրոպական այդ քաղաքականությունը ինչպես է անդրադարձել Հայաստանի վրա՝ որպես ԵՄ հարևան և գործընկեր: Միանգամից նշենք, որ Եվրոպական հարևանության քաղաքականության (ENP) Գործողությունների ծրագրում, ի թիվս այլ ոլորտների, խոսք է գնում նաև սոցիալ-տնտեսական դաշտում համագործակցության մասին: Մասնավորապես, առանձին կետով նշվում է, որ զբաղվածության և սոցիալական քաղաքականության ոլորտում Հայաստանը պետք է ավելի մոտենա եվրոպական չափանիշներին և պրակտիկային: Կարևորվում է նաև սոցիալական պաշտպանվածության համակարգի զարգացումը: Առանձին կետով նշվում է այն մասին, որ ԵՄ-ն առավելագույն օգնություն կցուցաբերի Հայաստանին՝ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի իրականացման հարցում: Քանի որ սոցիալական խնդիրները անմիջականորեն կապված են տնտեսական զարգացման և առևտրային հնարավորությունների հետ, կարևորվում է ներդրումային կլիմայի բարելավումը՝ ներառյալ թափանցիկությունը, կանխատեսելիությունը և կարգավորման պարզությունը: Գործողությունների ծրագրում ընդգծվում է նաև համագործակցության դերը. «Հայաստանի համար ENP-ի իրականացման կարևորագույն նպատակներից մեկը Եվրամիության սոցիալ-տնտեսական և առևտրային ոլորտներում որակական նոր մակարդակով ինտեգրման հնարավորությունն է՝ ներքին շուկային՝ ԵՄ դուրս գալու միջոցով, որը նախատեսվում է ԵՀՔ հիմնական փաստաթղթերով»: Իրականում սոցիալական ոլորտում հաջողություններ արձանագրելու համար անհրաժեշտ են լուրջ փոփոխություններ բոլոր ասպարեզներում՝ իրավական, քաղաքական, տնտեսական և այլն: ԵՄ-ն այսօր ընդամենը կարող է մեզ խորհուրդներ տալ և առաջարկություններ անել, չնայած որ, ՀՀ Սահմանադրությունն ի սկզբանե ասում է. «Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, սոցիալական, իրավական, ժողովրդավարական պետություն է»:

ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Երբ 2009թ. մարտին մեկնարկեց Եվրամիության «Արևելյան գործընկերության ծրագիրը», որը նախատեսում է նաև ոչ կառավարական կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների ներգրավում տարբեր գործընթացներում, Տավուշի մարզի բնակիչները նույնիսկ չէին կարող պատկերացնել, որ այն որևէ կերպ կարող է առնչվել նաև իրենց: Տավուշը Գեղարքունիքի մարզից հետո համարվում է գործազրկության բարձր ցուցանիշներ ունեցող Հայաստանի տարածաշրջաններից մեկը: 2009 թվականին Եվրամիության համաֆինանսավորմամբ «Գերմանիայի բարձրագույն ժողովրդական դպրոցների միության միջազգային համագործակցության ինստիտուտի» (DVV-internatioanl) հայաստանյան մասնաճյուղի կողմից Տավուշում մեկնարկել է մի ծրագիր, որի նպատակն է՝ մարզում աղքատության նվազեցումը ակտիվ ուսումնառության միջոցով: 2002 թվականից Հայաստանում գործող DVV-internatioanl-ի հայաստանյան մասնաճյուղը շահել է 2008թ. Եվրամիության կողմից հայտարարված մրցույթը: Նշենք, որ Եվրամիության հետ կազմակերպության առաջին համագործակցությունը եղել է դեռևս 2004թ.-ին՝ Վրաստանում. DVV-internatioanl-ը Ախալքալաքում և Ախալցխայում հիմնել է մեծահասակների կրթության կենտրոններ: Իհարկե, այդ ծրագրի նպատակը եղել է ոչ թե մեծահասակների կրթության միջոցով աղքատության նվազեցումը, այլ ծագումով ոչ վրացի ժողովրդին մարդու իրավունքների մասին հիմնարար գիտելիքների փոխանցումը և ինտեգրացիան վրացական հասարակության հետ: 2009թ. մարտից կազմակերպությունը ծրագիր է իրականացնում Տավուշի մարզում, որի նպատակը մեծահասակների կրթության միջոցով աղքատության նվազեցումն է: Նախագծի բյուջեն կազմում է շուրջ 266.000 եվրո, որից 199.500 եվրոն տրամադրել է Եվրոպական հանձնաժողովը, իսկ 66.000 եվրոն՝ Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման նախարարությունը: «Մեր գործընկերներն են նաև «Մեծահասակների կրթություն և ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում» հասարակական կազմակերպությունը և Տավուշի առևտրաարդյունաբերական պալատը: Ի դեպ, այս պալատի միջոցով մենք կարողանում ենք ապահովել կապ աշխատաշուկայի հետ: Իսկ սոցիալական գործընկերության գաղափարախոսությունը, որը նույնպես Եվրամիության մի շարք ծրագրերում աջակցություն է ստանում, մենք փորձում ենք կիրառել Մեծահասակների կրթության Իջևանի կենտրոնում»,- ասում է «DVV-international» հայաստանյան մասնաճյուղի ղեկավար Նազարեթ Նազարեթյանը:

Ըստ նրա՝ նախագիծը բավական լայնամասշտաբ է և ընդգրկում է տարբեր ուղղություններ, ինչպես, օրինակ, տեղական խորհրդատվական

հանձնաժողովի ստեղծում և կանոնավոր հանդիպումների անցկացում, Մեծահասակների կրթության Իջևանի կենտրոնի հիմնադրում, դրա աշխատակիցների վերապատրաստում, ուսուցողական այցեր Գերմանիա և Վրաստան, համայնքային քննարկումների կազմակերպում և այլն: «Մասնագիտական ուսուցում ապահովելով՝ օգնում ենք մարդկանց նոր մոտեցումներով վերադառնալ աշխատաշուկա: Ծրագրով նախատեսված են բազմաբնույթ մասնագիտական ուսուցման դասընթացներ:

Շուտով մենք սկսելու ենք մեր առաջին դասընթացը, որը շինարարության ոլորտի մասին կլինի: Տվյալ պարագայում Մեծահասակների կրթության Իջևանի կենտրոնի շինարարական աշխատանքները կհամակցենք նաև մեր ուսումնական դասընթացների հետ: Նման պրակտիկայի շնորհիվ դասընթացն ավելի արդյունավետ կլինի»,- նշում է Նազարեթ Նազարեթյանը՝ շեշտելով, որ ծրագրի նպատակը գործազուրկներին, սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցությունն է կրթության միջոցով: Նա նկատում է նաև, որ քիչ չեն լինում նաև այնպիսի դեպքեր, երբ գործազուրկը կրթություն ստանալու փոխարեն՝ իրենցից գումար է խնդրում՝ ասելով, որ ինքը կարող է բանվոր աշխատել: «Երիտասարդներն այսօր միակամ գնում են բանվորություն անելու՝ մոռանալով, որ տարիներ անց իրենք ֆիզիկապես արդեն ներուժ չեն ունենա նման ծանր աշխատանքների համար: Իսկ մեր նպատակը մասնագիտություն սովորեցնելն է: Մասնագիտություն ունենալու դեպքում աշխատանքը միշտ կլինի: Այս գաղափարախոսությունը ակնհայտ է նաև Եվրամիության մի շարք ծրագրերում: Եվրամիությունը մեծ աջակցություն է ցուցաբերում Հայաստանում մասնագիտական կրթության զարգացմամբ սոցիալապես անապահով մարդկանց կյանքի որակը փոխելու գործում»,- ասում է «DVV-internatioanl»-ի հայաստանյան մասնաճյուղի ղեկավարը՝ տեղեկացնելով, որ մեծահասակների կրթության կենտրոն առաջիկայում հիմնվելու է նաև Ադրբեջանում: «Այսօր Հայաստանում քննարկվում է նաև մեծահասակների կրթության մասին օրենքի ընդունման գաղափարը: Մենք ևս փորձում ենք որոշակի աջակցություն ունենալ օրենքի ընդունման հարցում, քանի որ մեր կազմակերպության առաքելությունն է նաև մեծահասակների կրթության ապահովումը»,- ասում է Նազարեթ Նազարեթյանը: Իսկ Եվրամիության և «DVV»-ի կողմից իրականացվող դասընթացների մասին ծրագրի մասնակիցները պատմում են մեծ խանդավառությամբ՝ հավաստիացնելով, որ կրթության միջոցով ավելի իրատեսական է պայքարել աղքատության դեմ: «Այսօր կան մասնագիտություններ, որոնք մեզանում պահանջարկ չունեն: Իմ ընկերուհին, ունենալով հոգեբանի մասնագիտություն, ձեռք է բերել նաև հաշվապահի որակավորում: Նա հիմա աշխատում է որպես հաշվապահ»,- ասում է Իջևանի պետական քոլեջի դասախոս Նունե Գևորգյանը: Ի դեպ, Մեծահասակների կրթության Իջևանի կենտրոնի շենքի տեղն արդեն որոշված է, և առաջիկայում սկսվելու են շինարարական աշխատանքները: Իսկ Եվրամիության համաֆինանսավորմամբ իրականացվող այս ծրագրի վերջնաժամկետը 2011թ.-ի սեպտեմբերն է:

Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԸ ԿՈՏՐՎՈՒՄ ԵՆ

Երբևէ նկատե՞լ եք, թե մեր երկրում մարդիկ ինչպես են նայում հաշմանդամներին:

Ճիշտ է՝ մեծ մասամբ խղճահարությամբ: Այն դեպքում, երբ հաշմանդամին ավելի շատ ճնշում է հենց այդ խղճահարությունը, քան ֆիզիկական արատի հետևանքով շարժման սահմանափակությունը: Հաշմանդամը հասարակության նույնպիսի անդամ է, ինչպես մյուսները, ունի նույն իրավունքներն ու կարող է զբաղվել օրենքով չարգելված ամեն ինչով: Այդ թվում՝ սպորտով: Հաշմանդամային սպորտն այս մարդկանց հնարավորություն է տալիս ինտեգրվել, ինքնահաստատվել, իրենց զգալ հասարակության լիարժեք անդամ: Այդ պատճառով էլ՝ Եվրոպայում հատուկ ուշադրություն է դարձվում հաշմանդամային սպորտի զարգացմանը: Իսկ մեզանում այս երևույթին ոմանք թերահավատությամբ են մոտենում, ոմանք՝ զարմանքով, ոմանք էլ՝ խղճահարությամբ: Սակայն սա դեռ ամենը չէ: Խնդիրը բարդանում է, երբ հաշմանդամների հանդեպ ունեցած վերաբերմունքը կոնկրետ դրսևորումներ է ստանում՝ մերժողական դրսևորումներ: Եթե զարգացած երկրներում սպորտային հաստատությունները հաշմանդամների համար անվճար են, ապա մեզանում ոչ միայն վճարովի են, այլ անգամ՝ վճարելու դեպքում որոշ հաստատություններ հաշմանդամներին թույլ չեն տալիս մուտք գործել: «Երբ մենք առաջին լողավազանն էինք գնում հաշմանդամների հետ, մեզ նույն գումարով չթողեցին մտնել լողավազան»,- ասում է Հաշմանդամային սպորտի հայկական ազգային ֆեդերացիայի նախագահ Սամվել Ռոստոմյանը: Միգուցե շատերը զարմանան՝ իսկ Հայաստանում նման ֆեդերացիա կա՞: Այո, կա, որը գործում է 2009 թվականից: Ֆեդերացիան ստեղծվել է Եվրամիության կողմից ֆինանսավորվող՝ «Սպորտային ցանց՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց համար» ծրագրի շրջանակներում: Ֆեդերացիայի ստեղծումը ծրագրի կոմպոնենտներից մեկն է միայն: Նախատեսվում է ստեղծել նաև հաշմանդամային սպորտային ցանց ողջ Հայաստանով, որը կներառի ակումբները, սպորտդպրոցները, սպորտային կառույցները և այլն: Գաղտնիք չէ, որ Հայաստանում շատ ֆեդերացիաներ գոյություն ունեն միայն թղթի վրա, շատ ծրագրեր էլ գրվում են միայն դրամաշնորհներ շահելու համար: Այս դեպքում բարեբախտաբար պատկերը միանգամայն այլ է. Սամվել Ռոստոմյանի հետ զրուցելու համար գնացինք Ծաղկաձոր, որտեղ նրանք հավաքների էին՝ մարզումներ անցկացնելու համար: Եվ մեր աչքով տեսանք, թե ծրագրի համակարգող Արփի Արամյանն ու բելգիացի փորձագետ Պատրիկ Մոդավը ինչպես են երեխաներին դահուկ քշել սովո-

ռեցնում: Հաշմանդամների մյուս խումբն այդ ժամանակ սարի վրա էր՝ գնացել էին սովորածը կիրառելու, դահուկ քշելու:

Ֆինանսավորումը շատ մեծ չէ. երկու տարվա համար 120 հազար եվրո, որով ձեռք է բերվում հատուկ գույք, կազմակերպվում են հավաքներ ու մրցումներ: Սակայն ծրագրի կազմակերպիչները միայն այդ ֆինանսավորման շրջանակներով չեն սահմանափակվում: «Ծրագիրը միշտ էլ նախատեսվածից ավելի լայնածավալ է լինում: Ընթացքում օգտագործում ենք մարդկային ռեսուրսներ, որոնք չեն վճարվում. մեծ թվով կամավորների ենք ներգրավում»,- ասում է Սամվել Ռոստոմյանը:

Տարիքային սահմանափակում չկա, բոլոր ցանկացողներն էլ կարող են մասնակցել: Իսկ մասնակիցների ստույգ թիվը Սամվել Ռոստոմյանը դժվարացավ ասել. «Ով որ պայմանագիր է կնքել և դե յուրե մասնակցում է ծրագրին, ես այդ թիվը կարող եմ ասել: Բայց իրական թիվը կարող է 5 անգամ ավելի մեծ լինել: Կոնկրետ սպորտային մասով մենք ունենք գրանցված 50 հոգի, բայց այս ընթացքում հաստատ մի 250 հոգի արդեն անցել են այս ծրագրով, կամ, այսպես ասենք, եղել են ծրագրի կողքին»:

Արփին նշում է, որ հետաքրքրվողները հեշտությամբ կարող են ընդգրկվել իրենց ծրագրում: «Մարդիկ զանգում են ֆեդերացիա, ես վերցնում եմ տվյալները, հետաքրքրվում խնդիրներով, և որոշում, թե որ խմբում կարող ենք նրան ընդգրկել, ինչ սպորտաձևում: Հետո արդեն երևում է՝ տվյալ սպորտաձևում նա իրեն ինչպես է կարողանում դրսևորել»: Սամվելը նշում է, որ իրենք այսօր ամեն ինչ պատրաստ են անել հաշմանդամների համար՝ այս ընթացքում շատ բան են սովորել, կարող են տեղավորել, մարզիչներ գտնել: Սակայն ավելի կարևոր է, որ հաշմանդամներն իրենք առաջին քայլը անեն. «Շատ կարևոր է, որ իրենք ցանկանան, իրենք դիմեն, մոտենան: Եթե դա լինի, մեր գործն էլ կհեշտանա՝ պետությանը, մարզիչներին համոզելու հարցում»: Պարզվում է՝ ֆինանսներից, պետական թերի քաղաքականությունից և այլ խնդիրներից բացի, մեկ այլ կարևոր խոչընդոտ էլ կա հաշմանդամային սպորտի զարգացման հարցում: Մերժողական վերաբերմունքը հաշմանդամների նկատմամբ: Ինչպես արդեն նշեցինք, որոշ սպորտային կառույցներ հրաժարվում են հաշմանդամների հետ աշխատել, ընդ որում՝ ոչ անվճար: Տարբեր պատճառաբանություններ են բերում, ասում են՝ պատրաստ չեն, համապատասխան մարզիչներ չունեն: Սակայն դրա լուծումն էլ է գտնվել: Արփիի խոսքերով, իրենք հիմնականում աշխատում են երիտասարդ մարզիչների հետ, որոնք կարծրատիպերով չեն առաջնորդվում: Իհարկե, նրանց մոտ պակասում է հաշմանդամների հետ աշխատելու փորձը, բայց ֆեդերացիայում սովորեցնում են: Բացի այդ, արտերկրից պարբերաբար կամավորներ, փորձագետներ են գալիս: Օրինակ՝ Պատրիկ Մոդավը որպես փորձագետ՝ մասնակցում է լեռնադահուկային սպորտի ուսուցման պրոցեսին: «Մեր հիմնական նպատակը պրոֆեսիոնալ սպորտսմեններ ունենալն է: Մեր առջև շատ բարձր նիշ ենք դրել՝ պրոֆեսիոնալ սպորտսմեններ դաստիարակել այս ծրագրով: Իսկ այդ ընթացքում շատ բան ենք անում, գնում ենք շրջաններ, հանդիպումներ ենք ունենում, խո-

սում ենք մարդկանց հետ, ապացուցում, որ հաշմանդամներն էլ մեր նման մարդիկ են, պարզապես իրենց հետ պետք է աշխատել»,- ասում է Արփին:

Սամվելը, սակայն, նշում է, որ դրանից հուսահատվել պետք չէ: 100 հոգուց 90-ը դեռ չեն ուզում աշխատել հաշմանդամների հետ, բայց 10-ը պատրաստ են: «Մեր սկսելուց առաջ այդ 10%-ի տեղն էլ չգիտեինք: Բայց հիմա գիտենք, ու նրանց հետ կարող ենք աշխատել: Հետո այդ թիվը կարող է դառնալ 20, 30»,- ասում է նա: Սամվելը լավատես է, ասում է՝ աստիճանաբար նաև այդ վերաբերմունքն էլ է փոխվում: Արդեն կոնկրետ օրինակներ էլ կան: «Սպորտի նախարարությունում էլ տեղյակ են ծրագրի մասին: Իրենք այլևս չեն ասում՝ հաշմանդամը չի կարողանա այսինչ բանն անել: Իրենց կողմից էլ փոխվել է թե՛ մոտեցումը, թե խոսելու ձևը»,- ասում է Ֆեդերացիայի նախագահը: Իսկ Ծաղկաձորում, մասնավորապես, ճոպանուղում հաշմանդամներն իրենց շատ լավ են զգում: «Մի քանի օր առաջ սարի վրա միայն հաշմանդամներն էին: Մեր նվաճումներից մեկն այն է, որ մարդիկ նրանց շատ լավ են վերաբերվում, մանավանդ ճոպանուղու անձնակազմը: Մարդիկ այսօր գիտեն, թե ոնց աշխատեն հաշմանդամի հետ: Այս սարի վրա մենք ոչ մի խնդիր չունենք, մեզ համար ամեն ինչ անում են: Թեկուզ եթե ոչ մի բան էլ չեն անում, միշտ պատրաստ են, որ պետք եղած դեպքում օգնեն: Դա մեծ արդյունք է ոչ միայն կոնկրետ մեր, այլև հասարակության համար»,- ասում է Սամվելը:

Արփին էլ է այս առումով գոհ, սակայն նշում է. «Պետական քաղաքականություն, որոշակի ֆինանսավորում պիտի լինի: Այս ամենը անձերից չպետք է կախված լինի՝ ճոպանուղու տնօրենի կամ մարզիչի անձնական որակներից: Անկախ նրանից՝ ով կլինի այսինչ կամ այնինչ պաշտոնում, հաշմանդամները պետք է կարողանան իրացնել իրենց իրավունքները»:

ՀՍՀԱՖ-ում, այդուհանդերձ, նորմալ են տանում այս ամենը: Գտնում են, որ սա է մեր իրականությունը, ու շատ քայլեր անում են զուտ հայկական ձևերով՝ ասենք, համոզելով: Ու կարծես ստացվում է: Օրինակ՝ պրոֆեսիոնալ հաշմանդամ լողորդների հարցում խնդիրը շատ բարդ է, որովհետև նույն ծնողները երեխային ուղարկում են լողավազան ոչ թե նրա համար, որ լողալ սովորի, այլ՝ որ բուժվի: «Բայց մենք բժիշկներ չենք, մենք մարզիչներ ենք ու փորձում ենք հաշմանդամներին սովորեցնել այն, ինչը իրենք կարող են անել»,- ասում է Արփին՝ ավելացնելով, որ 2009-ին երկու մրցումների են մասնակցել: Իհարկե, մրցակցությունը ուժեղ չի եղել, քանի որ մասնակիցները շատ չեն: Բայց կարևորն այն է, որ սկիզբը դրված է:

ՇԵՆԳԵՆՅԱՆ ՎԻԶԱ

Այսպես է կոչվում այն փաստաթուղթը, որն ունենալու համար մեր քաղաքացիներից շատերն այսօր պատրաստ են ամեն ինչ տալ: Ուշագրավն այն է, որ նրանցից շատերը չգիտեն անգամ՝ ինչ է նշանակում՝ շենգենյան վիզա, որտեղից է ծագել այդ անունը, և կոնկրետ որ երկրներն են տրամադրում այդ փաստաթուղթը:

Այդուհանդերձ, Եվրախորհրդարանը և ԵՄ Արտաքին գործերի խորհուրդը 2010 թվականի մարտին Շենգենյան վիզայի տրամադրման հետ կապված փոփոխություններ ընդունեցին, որոնք սերտորեն առնչվում են նաև Եվրոպա մեկնել ցանկացող կամ շենգենյան վիզայով արդեն Եվրոպայում գտնվող մեր հայրենակիցներին: Այսպես, եվրոպացի պաշտոնյաները որոշել են լրացումներ կատարել Շենգենյան համաձայնագրում, որոնք թույլ են տալիս երկարաժամկետ վիզա ունեցողներին ազատ տեղաշարժվել եվրոպական երկրներում: Ընդ որում, «երկարաժամկետ» համարվում են այն վիզաները, որոնք երրորդ երկրների քաղաքացիներին իրավունք են տալիս ԵՄ երկրներում գտնվել 3 ամսից ավելի:

Նոր իրավական դրույթները հիմնականում առնչվում են երեք գլխավոր ասպեկտների՝ տեղաշարժի ազատություն, վիզայի գործողության առավելագույն ժամկետ և անվտանգության հարցեր:

Երրորդ երկրների այն քաղաքացիները, որոնք ունեն երկարաժամկետ շենգենյան վիզա, այսուհետ կօգտվեն նույն իրավունքներից, որոնցից օգտվում են «կեցության թույլտվություն» ունեցողները: Այսինքն՝ յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում նրանք կկարողանան ազատ տեղաշարժվել ԵՄ երկրների տարածքում մինչև երեք ամիս ժամանակով: Մինչ այժմ գործող կարգի համաձայն, վիզայի տերը իրավունք ուներ գտնվել միայն այն երկրի տարածքում, որի համար տվյալ վիզան տրվել է: Եվրոպական մյուս երկրների տարածքով շենգենյան վիզայի սեփականատերն ուներ միայն, այսպես ասած, «տրանզիտային տեղաշարժի» իրավունք. այսինքն՝ այլ երկրների տարածքով կարող էր անցնել՝ միայն վիզայում նշված երկիրը հասնելու համար:

Նոր կանոնները սահմանում են նաև շենգենյան վիզայի գործողության առավելագույն ժամկետը՝ 1 տարի: Եթե շենգենյան համաձայնագրի անդամ երկիրը երրորդ երկրի քաղաքացուն թույլատրում է գտնվել իր տարածքում մեկ տարուց ավելի երկար, ապա պարտավոր է վիզան փոխա-

րինել կեցության իրավունքով: Ընդ որում, դա պետք է արվի մինչև վիզայի ժամկետի լրանալը:

Եթե տեղաշարժի և ժամկետի առումով ընդունված փոփոխությունները կարելի է մեղմացում համարել, ապա անվտանգության առումով եվրոպացիներն ավելի են խստացրել իրենց պահանջները: Կարգավորող նոր օրենսդրությունը համաձայնագրի անդամ-երկրներին պարտավորեցնում է երկարաժամկետ վիզա տրամադրելիս ուսումնասիրել Շենգենյան տեղեկատվական բազայի տվյալները: Նախկինում դա արվում էր միայն կեցության իրավունք տրամադրելու ժամանակ: Իսկ այժմ վիզա տրամադրող երկիրը պետք է «խիստ քննության» ենթարկի յուրաքանչյուրին: Եթե ԵՄ ցանկացած երկիր մուտքի սահմանափակում է կիրառել որևէ կոնկրետ անձի նկատմամբ, ապա մյուս երկիրը պետք է վիզա տրամադրելուց առաջ խորհրդակցի մերժած երկրի համապատասխան ծառայությունների հետ՝ հաշվի առնելով նրա շահերը: Ինչ վերաբերում է կեցության իրավունքին, ապա այն տրամադրվելու է բացառիկ դեպքերում, հումանիտար հիմունքներով կամ միջազգային պարտավորությունների կատարման շրջանակներում: Մյուս կողմից, եթե ԵՄ երկիրը որոշում է թույլ չտալ իր տարածք մուտք գործել կոնկրետ անձի, որն այդ պահին երկարատև վիզա կամ կեցության իրավունք ունի մեկ այլ երկրում, պարտավոր է հյուրընկալած երկրին տեղեկացնել իր որոշման պատճառների մասին: Պարտավոր է նաև մանրամասն հիմնավորել իր մերժումը, քանի որ նույն այդ հիմքերով՝ հյուրընկալած երկիրը կարող է ետ կանչել իր տրամադրած վիզան կամ կեցության իրավունքը:

Եվրոպական փորձագետների գնահատմամբ, նոր օրենսդրությունը մեծ ազատություն է տալիս երկարաժամկետ շենգենյան վիզա ունեցողներին, և մյուս կողմից՝ թույլ է տալիս խուսափել ռիսկի ավելորդ գործոններից (անվտանգության տեսանկյունից):

Մեր հայրենակիցներին հիշեցնենք նաև, որ Եվրախորհրդարանի և Եվրոպական խորհրդի Եվրոպական հանրության վիզաների նոր օրենսգրքի (Visa Code) մասին 2009թ. հուլիսի 13-ին ընդունած թիվ (EG/810/2009) որոշման ուժի մեջ մտնելուց հետո 2010թ. ապրիլի 5-ից սկսած Շենգենյան համաձայնագրի երկրների մուտքի վիզա ստանալու համար ՀՀ քաղաքացիները պետք է ապահովեն հետևյալ անհրաժեշտ նախապայմանները.

- անձնագրի ընդհանուր գործածության ժամկետը չպետք է գերազանցի տասը տարին՝ տրման ամսաթվից (այսինքն, ընդհանուր ժամկետի երկարաձգումով անձնագրերը չեն ընդունվելու),
- դիմելու պահին անձնագիրը պետք է ունենա առնվազն երկու ազատ էջ՝ նախատեսված մուտքի վիզայի համար,
- անձնագիրը պետք է վավերական լինի ճամփորդության նախատեսված ավարտից հետո առնվազն երեք ամիս:

Նշված պահանջը վերաբերում է բոլոր օտարերկրացիներին:

ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ՝ ԴԵՊԻ ՎԻԶԱՅԻՆ ՌԵԺԻՄԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՈՒՄ

«Եվրամիության «Նոր Հարևանության քաղաքականության» և «Արևելյան գործընկերության» ծրագրերում նախատեսված գործողությունների արդյունքում նախատեսվում է Հայաստանից դեպի ԵՄ երկրներ մարդկանց տեղաշարժի պայմանների, մասնավորապես՝ վիզային ռեժիմի մեղմացում: Ի՞նչ են ենթադրում այդ փոփոխությունները գործնականում, և կա՞ն արդյոք դրանց ընդունման մոտավոր ժամկետներ»: Մեր այս հարցին ի պատասխան՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության Հյուպատոսական վարչության պետ Տիգրան Սեյրանյանն ասել է. «Վիզային հարաբերությունների փոփոխումը «Նոր Հարևանության քաղաքականության» ծրագրի բաղկացուցիչներից է: Սա բազում տարրեր պարունակող գործընթաց է, որոնցից մեկը ենթադրում է Եվրամիության պետությունների, մասնավորապես՝ Շենգենի համաձայնագրի երկրների, մուտքի վիզաների տրամադրման գործընթացի դյուրացում որոշ կատեգորիաների ՀՀ քաղաքացիների՝ պետական պաշտոնյաների, գործարարների, գիտնականների, ուսանողների, մշակույթի գործիչների և այլոց համար: Նախատեսված է, որ գործընթացի հետ կապված հարցերը պետք է քննարկվեն ՀՀ-ԵՄ համագործակցության՝ Արդարադատության, ազատության և անվտանգության հարցերով ենթակոմիտեի շրջանակներում: Հավանաբար ենթակոմիտեի աշխատանքները կմեկնարկեն այս տարվա ամռանը, զուգահեռ պետք է սկսվեն նաև բանակցությունները վիզաների տրամադրման դյուրացման համաձայնագրի նախագծի շուրջ: Մյուս կարևոր բաղկացուցիչը հետ ընդունման (ռեադմիսիայի) մասին ընդհանուր համաձայնագիրն է: Թեպետ Հայաստանն ունի նման համաձայնագրեր եվրոպական մի շարք պետությունների հետ (Լիտվա, Դանիա, Շվեյցարիա, Գերմանիա, Բուլղարիա, Շվեդիա, Բենիլյուքսի երկրներ, Նորվեգիա), մենք պատրաստ ենք բանակցել նաև ԵՄ-ՀՀ համանման ընդհանուր համաձայնագրի շուրջ և ակնկալում ենք, որ դա տեղի կունենա հնարավորինս շուտ: Հայաստանի արտաքին գերատեսչությունն այժմ բանակցություններ է վարում Շենգենի անդամ պետությունների գործընկերների հետ՝ դիվանագիտական անձնագիր կրող անձանց փոխադարձության սկզբունքով մուտքի վիզա ստանալու պահանջից ազատելու մասին: Հայաստանը նման համաձայնագրեր ունի Լատվիայի, Լիտվայի, Լեհաստանի, Հունգարիայի, Սլովակիայի, Շվեյցարիայի հետ: Սույն թվականի ապրիլի 1-ից այն կգործի նաև

Ֆրանսիայի Հանրապետության հետ: Վստահ ենք, որ ԵՄ մեր գործընկերների հետ համատեղ աշխատանքի շնորհիվ մենք քայլ առ քայլ կմոտենանք Արևելյան գործընկերության Պրահայի համատեղ հռչակագրում ամրագրված նպատակին՝ «աջակցել անվտանգ միջավայրում քաղաքացիների տեղաշարժին և վիզային ռեժիմի ազատականացմանը»:

ԲԻԶՆԵՍՆ ՈՒ ՎԻԶԱՆ

Եվրոպայի հետ Հայաստանի հարաբերությունների զարգացման մասին խոսելիս՝ որպես ապացույց, հաճախ է նշվում այն փաստը, որ Եվրամիությունը Հայաստանի թիվ մեկ առևտրային գործընկերն է: Այսինքն՝ մեր արտաքին առևտրաշրջանառության մեջ ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Եվրամիության երկրները:

Դա իրոք այդպես է: Չնայած համաշխարհային ճգնաժամի պատճառով առևտրաշրջանառության տեմպերը նախորդ տարի անկում ապրեցին, այդուհանդերձ, պաշտոնական վիճակագրության համաձայն, 2009 թվականի ընթացքում Հայաստան-ԵՄ երկրներ առևտրաշրջանառությունը գերազանցել է 1.2 միլիարդ դոլարը՝ կազմելով ընդհանուր առևտրաշրջանառության 30%-ը: Ընդ որում, ՀՀ-ԵՄ արտաքին առևտրաշրջանառությունը աճել է նախանձելի տեմպերով. եթե 2003թ. առևտրաշրջանառության ծավալը կազմում էր ընդամենը 687.4 միլիոն դոլար, ապա 2008-ին այդ ցուցանիշը կազմել է 1.7 միլիարդ: Այսինքն՝ 5 տարվա ընթացքում ՀՀ-ԵՄ առևտրաշրջանառությունը աճել է 2.5 անգամ: Այս տեսանկյունից՝ շատ կարևոր էր GSP+ ռեժիմի ընդունումը: Մինչև 2009թ. Հայաստանն օգտվում էր ԵՄ-ի «Արտոնությունների Ընդհանրացված Համակարգ» (GSP) առևտրային ռեժիմից: 2009թ. հունվարի 1-ից GSP-ն փոխարինվեց GSP+ առևտրային ռեժիմով, որը հնարավորություն է տալիս համակարգից օգտ-



վող երկրներին շուրջ 6400 ապրանքատեսակներ ԵՄ շուկաներ արտահանել զրոյական կամ զգալիորեն նվազեցված մաքսատուրքերով: Ռեժիմը, որը գործելու է մինչև 2011թ. ավարտը, պետք է որ նպաստի ՀՀ-ԵՄ առևտրի ծավալների աճին և հայկական արտադրանքի՝ ԵՄ երկրներում ճանաչում ձեռք բերելուն: Այժմ առևտրի ոլորտում նոր բանակցություններ են ընթանում ազատ առևտրի ռեժիմի անցնելու վերաբերյալ: Նման բանակցությունները սովորաբար տևում են 1-2 տարի, և բանակցային գործընթացի բարեհաջող ավարտից հետո ՀՀ-ն կարող է ընդգրկվել ԵՄ երկրների հետ առևտրի զրոյական մաքսատուրքի համակարգում:

Սակայն տնտեսական համագործակցությունը չի նշանակում միայն առևտուր: Առավել ուրախալի կլիներ, եթե իրականացվեին համատեղ բիզնես ծրագրեր, ներդրումներ կատարվեին եվրոպական ընկերությունների կողմից և այլն: Այս տեսանկյունից, ինչպես ասում են, դեռ կաղում ենք: Պատճառները տարբեր են: Օրինակ՝ եվրոպացիների համար շատ կարևոր խոչընդոտ է տեղեկացվածության ցածր մակարդակը և մտածելակերպի տարբերությունը: «Որպես կանոն, հայ բիզնեսմենները շատ նեղ հորիզոն ունեն բիզնես պլանավորման առումով: Նրանք չեն պլանավորում 3-5 տարիներով, ուստի, որպեսզի հետագայում կարողանան ավելի բարձր մակարդակի հասնել ԵՄ-ի հետ հարաբերություններում, պետք է արդեն հիմա սկսեն այդպես մտածել»,- մի առիթով ասել էր Քաղաքական և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնի (AEPLAC) ղեկավար Ալեքսեյ Սեկարևը: Կոնկրետ այդ խնդիրը AEPLAC-ը փորձել էր լուծել սեմինարի միջոցով, որտեղ հայ բիզնեսմեններին ծանոթացնում էին Հայաստան-ԵՄ առևտրային հարաբերությունների ներկա վիճակին և ապագա հնարավորություններին:

Սակայն կա նաև ոչ պակաս կարևոր մի խոչընդոտ, որն, ըստ էության, արգելակում է Հայաստան-ԵՄ տնտեսական հարաբերությունների դինամիկ զարգացումը: Խոսքը վերաբերում է մարդկանց ազատ տեղաշարժի հնարավորությանը, մասնավորապես՝ վիզային ռեժիմին: Հայաստան-Եվրոպա տնտեսական համագործակցությունը չի կարող արագ զարգանալ, եթե բիզնեսմենը հնարավորություն չունի առանց որևէ խոչընդոտի այցելել իր ուզած եվրոպական երկիր, տեղում հանդիպումներ ունենալ և պայմանավորվածություններ ձեռք բերել: Այստեղ անգամ մի տեսակ հակասություն է նկատվում: Օրինակ, AEPLAC-ի սեմինարներից մեկի ժամանակ մի շարք եվրոպացի փորձագետներ հավաքված հայ բիզնեսմեններին ներկայացնում էին եվրոպական շուկայի ստանդարտները, աշխատաոճը, առևտրային ռեժիմը, խոսում համագործակցության և հեռանկարների մասին: Սակայն, մյուս կողմից, ոչ մի վստահություն չկա, որ եթե սեմինարին ներկա մարդկանցից որևէ մեկը վաղը ցանկանա մեկնել Եվրոպա և տեղում ծանոթանալ տեղի շուկայի առանձնահատկություններին, նրան չեն մերժի շենգենյան վիզա տրամադրելու հարցում:

Բերենք մի օրինակ, որը թեև անմիջականորեն կապված չէ բիզնեսի հետ, սակայն պարզորոշ ցույց է տալիս, թե ինչ բացասական ազդեցու-

թյուն ունի ներկայիս խիստ ռեժիմը: Ստրասբուրգում կազմակերպվել էր հանդիպում՝ եվրոպական երկրների առաջատար գիտահետազոտական կենտրոնների մասնագետների հետ, որին մասնակցության հրավեր էր ստացել նաև ՀՀ բժշկական գենետիկայի առողջության առաջնային պահպանման կենտրոնի բժիշկ Գ. Շահսուվարյանը: Սակայն Հայաստանում Ֆրանսիայի դեսպանությունը մերժել էր Գ. Շահսուվարյանին Ֆրանսիայի մուտքի արտոնագիրը: Բավարար երաշխիք չի հանդիսացել անգամ կազմակերպիչների կողմից ուղարկված հրավերը՝ առանց որևէ պատճառաբանման: Թերթերից մեկին բժիշկը վրդովմունքով հայտնել էր, որ դեսպանատանն ու հյուպատոսին հղած բոլոր նամակները մնացել են անպատասխան: Սա, իհարկե, վիրավորական է: Սակայն զուտ անձնական մոտեցումից բացի՝ նման վերաբերմունքը նաև կոնկրետ, առարկայական վնաս է հասցնում: Սա միակ օրինակը չէ, որի պատճառով ձախողվել են գիտահետազոտական միգուցե շատ լուրջ նախաձեռնություններ: Նման օրինակներ կան բոլոր ասպարեզներում՝ կրթության, զբոսաշրջության, մշակույթի, բիզնեսի:

Մյուս կողմից՝ ուրախալի է, որ եվրոպացիներն իրենք էլ հասկանում են վիզային խիստ ռեժիմի բացասական ազդեցությունը տնտեսական համագործակցության վրա: Օրինակ, ԵԽ ԽՎ ղեկավար Ռենե վան դեր Լինդենը Ռուսաստան կատարած իր այցելության ժամանակ ԵՄ-Ռուսաստան վիզային ռեժիմը անվանել էր ոչ լիբերալ՝ կարծիք հայտնելով, որ այն պետք է փոխվի, քանի որ չի նպաստում ուսանողների, գիտնականների ակտիվ փոխանակմանը և բիզնեսի զարգացմանը: Ճիշտ է, վան դեր Լինդենը խոսել էր կոնկրետ ԵՄ-Ռուսաստան վիզային ռեժիմի մասին, սակայն հանգիստ խղճով կարող ենք նրա տեսակետը տարածել նաև մեր օրինակի վրա, քանի որ ՀՀ քաղաքացիների համար «շենգեն վիզա» ստանալը ավելի դժվար է, քան ռուսների: Ուրախալի է նաև այն, որ ԵՄ ղեկավարները կարծես որոշել են կոնկրետ քայլեր ձեռնարկել այս ուղղությամբ: Մասնավորապես, խոսքը գնում է ՀՀ-ԵՄ վիզային ռեժիմի հնարավոր մեղմացման մասին: 2009 թվականի մարտի սկզբին Հայաստանում գտնվող՝ Իսպանիայի Արտաքին գործերի նախարար Միգել Անխել Մորատինոսը կրկին անգամ հաստատել էր, որ «Եվրոպական Նոր Հարևանության քաղաքականության» և «Արևելյան գործընկերության» ծրագրերի շրջանակներում շարունակվում է ԵՄ-Հայաստան համագործակցությունը՝ հայերի և եվրոպացիների շփումների ընդլայնմանը նպաստելու ուղղությամբ: Այս տեսանկյունից, Մորատինոսը շեշտել է վիզային ռեժիմի մեղմացման անհրաժեշտությունը և ասել. «Ես իմ հայաստանցի գործընկերներին հավաստիացրել եմ, որ մտադիր ենք լուրջ հետևողականորեն աշխատել՝ վիզային ռեժիմի պարզեցման համար անհրաժեշտ անվտանգության միջոցառումներն ու գործնական քայլերը ապահովելու ուղղությամբ: Եվ դա կիրականացնենք որքան հնարավոր է շուտ»:

ԲԱԲԿԵՆ ԹՈՒՆՅԱՆ

ԴԵՊԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Պետական կառավարման համակարգի արդյունավետության խնդիրը միշտ եղել է եվրոպական հասարակությունների ուշադրության կենտրոնում: Դա համարվում է նաև Եվրամիության հետ համագործակցող պետությունների հետ հարաբերություններում ԵՄ-ի հիմնական ուղղություններից մեկը:

Արդյունավետ կառավարումը՝ որպես գերակայություն, ամրագրված է թե՛ Եվրոպական հարևանության քաղաքականության, թե՛ Արևելյան գործընկերության ծրագրերում: Եվրոպական համայնքի աջակցությունը այս հարցում տարաբնույթ է՝ ֆինանսական, տեխնիկական, ուսուցողական և այլն:

Անկախության հռչակումից ի վեր Հայաստանում իրականացվել են պետական կառավարման համակարգի բազմաթիվ բարեփոխումներ, որոնք առավել ակտիվացել են հատկապես եվրոպական կառույցներին ինտեգրվելուց հետո: Սակայն Հայաստանում կա որոշակի թերահավատություն դրանց արդյունավետության առնչությամբ: Խնդիրը ոչ միայն այն է, որ Հայաստանում շատ բարեփոխումներ կատարվում են ընդամենը «թղթի վրա», այլ նաև այն պատճառով, որ եվրոպական երկրները՝ իրենց պետական կառավարման համակարգով, նույնպես անընդհատ փոփոխությունների մեջ են:

Նշենք, որ այսպես կոչված, ադմինիստրատիվ բարեփոխումները Եվրոպայում շարունակական ընթացք են ունեցել: Ռեֆորմատորական գաղափարներն ու պրակտիկ նախագծերը քիչ չեն եղել XIX դարում և XX դարի ընթացքում: Այս առնչությամբ ֆրանսիացի պրոֆեսոր Ռոլան Դրագոն նկատել է. «Որոշ իմաստով, ադմինիստրատիվ ռեֆորմը միֆ է: Ադմինիստրացիան գտնվում է մշտական բարեփոխման մեջ, ինչը խոսում է նրա առողջության մասին»:

Արտասահմանյան (այդ թվում՝ եվրոպական) պետական կառավարման համակարգերը մշտապես ադապտացվել են անկայուն զարգացմանը, ընթացող տնտեսական և սոցիալական զարգացումներին: Արդյունքում՝ յու-

ռաքանչյուր երկիր կուտակել է իր սեփական փորձը: Այսինքն՝ այդ առումով Հայաստանի համար բավականին լավ բազա կա՝ վերցնելու եվրոպական փորձի լավագույն օրինակները: Եթե հավատանք պաշտոնական հաղորդագրություններին, մեզ մոտ հենց դա էլ տեղի է ունենում: Ընդ որում, դա կատարվում է տարիներ շարունակ: Սակայն միամտություն կլիներ ասելը, որ պետական կառավարման համակարգի արդյունավետության ցուցանիշներով մենք մոտեցել ենք Եվրոպային:

Ինչպես նշեցինք, զուտ հռչակագրային առումով, Հայաստանը եվրոպական երկիր է: Օրենքները եվրոպական են, պետական կառույցները՝ նույնպես: Դե, իսկ պետական գերատեսչությունների տեխնիկական հագեցվածության, ավտոպարկի ու պետական պաշտոնյաների հագուկապի առումով՝ մի բան էլ երևի առաջ ենք անցել:

Հետաքրքիրն այն է, որ Եվրոպայում եղած հայաստանցիների մոտ տպավորում է լրիվ հակառակ պատկերը: Օրինակ՝ Ֆինլանդիա այցելած իմ ծանոթներից մեկը ամեն հարմար առիթով պատմում է, թե ինչպես է փողոցում տեսել հեծանվով ինչ-որ տեղ գնացող մի մարդու, և հետո իմացել, որ նա նախարար է: Կամ՝ Անգլիայում եղած հայաստանցուն տպավորում է ոչ թե պառլամենտ մտնող պատգամավորի շքեղ ավտոմեքենան ու նրան ուղեկցող ջիպերի քանակը, այլ մաքսիմալ չափավորությունը. նրանց մեծ մասը աշխատանքի է գալիս ոտքով: Առավել հետաքրքիրն այն է, որ այդ երևույթից տպավորվում ու հիացած պատմում են նաև մե՛ր պատգամավորները՝ շարունակելով Աժ նիստերի օրերին Դեմիրճյան փողոցը փակել մի քանի շարքով կանգնած իրենց ավտոմեքենաներով: Շարունակելով զուգահեռներ անցկացնել մեր ու Անգլիայի միջև, նշենք, որ որքան էլ զարմանալի է, կան բաներ, որ մենք ունենք, անգլիացիները՝ ոչ: Օրինակ՝ Սահմանադրություն: Անգլիացիները չունեն գրավոր Սահմանադրություն: Ավելին՝ չկա նաև փաստաթղթերի հստակ ցանկ, որոնք կարելի է պայմանականորեն համարել սահմանադրություն: Ժողովրդի և իշխանության հարաբերությունները կարգավորվում են գրված և չգրված օրենքներով: Սակայն կարելի՞ է ասել, որ Սահմանադրության առկայությունը պետական կառավարման համակարգի արդյունավետության տեսանկյունից մեզ որևէ առավելություն տալիս է: Հազիվ թե:

Դժվար է խոսել Անգլիայի վերաբերյալ և չնշել այդ երկրի պառլամենտի մասին: Կարծում ենք՝ ընթերցողներին հետաքրքիր կլինի իմանալ, որ անգլիական պառլամենտի արմատները ձգվում են մինչև 13-րդ դարի սկիզբը: 1215թ. խոշոր հողատերերը հասան նրան, որ Հովհաննես Անհողը ստորագրեց Ազատությունների մեծ խարտիան: Դրա համաձայն, թագավորն իրավունք չուներ նոր հարկատեսակներ նշանակել՝ առանց թագավորական խորհրդի համաձայնության: Հենց թագավորական խորհուրդն էլ ժամանակի ընթացքում էվոլյուցիայի ենթարկվեց՝ վերածվելով պառլամենտի: 1265թ. Լեսթերի 6-րդ կոմսը՝ Սիմոն դե Մոնֆորը, հավաքեց առաջին պառլամենտը ընտրությունների միջոցով: Հետաքրքիր մի նրբերանգ. ընտրությունների մասնակիցների համար գործում էր, այսպես

ասած, նյութական ցենզ. մասնակցելու իրավունք ունեին միայն այն մարդիկ, ովքեր ունեին տարեկան 40 շիլինգ վարձավճար բերող հող: Անգլիայի պառլամենտը ի վերջո վերածվեց նրան, ինչ կա այսօր՝ ներկայացնելով հասարակության բոլոր խավերին: Իսկ մենք, չնայած օրենքներին ու արդեն իսկ եղած փորձին, հետ գնացինք մինչև 13-րդ դարի Անգլիա. պատգամավոր դառնալու համար մեզ մոտ նույնպես գործում է թեկուզ չգրված, բայց շատ դժվարանցանելի նյութական ցենզ: Շարունակելով թեման՝ նշենք, որ բավականին ուշագրավ է նաև քվեարկության պրոցեսը: Պառլամենտի երկու պալատներում էլ քվեարկությունը բանավոր է. անդամները գոռում են՝ «Aye» (այո) կամ «Nay» (ոչ): Նիստը վարողը ըստ այդմ հայտարարում է քվեարկության արդյունքը: Եթե պատգամավորները համաձայն չեն, անցկացվում է ձայների հաշվարկ, կամ, ինչպես ասում են, «ձայների բաժանում»: Դա տեղի է ունենում այսպես. նիստի մասնակիցները դուրս են գալիս դահլիճից և մտնում կողքի երկու սրահները: Նեղլիկ դռների արանքով անցնելու ընթացքում այդտեղ նստած գրագիրը նշում է նրանց անունները, իսկ դահլիճ վերադառնալիս հաշվում ձայները: Բավականին երկար պրոցես է, այնպես չէ՞: Մարդիկ չեն օգտագործում տեխնիկայի նվաճումները՝ կոճակներով չեն քվեարկում: Դժվարացնում են իրենց գործը, բայց փոխարենը թե՛ իրենք, թե՛ ընտրողները երբեք չեն տեսնի, որ, ենթադրենք, սըր Ալեքսը ձեռքը երկարացրած քվեարկի սըր Ջոնսի փոխարեն: Բաներ կան, որ մեզ էլ վիճակված չէ տեսնել: Օրինակ՝ մենք երբեք չենք տեսնի, որ իշխող կուսակցության շարքային անդամը խիստ քննադատության ենթարկի նախագահին: Իսկ անգլիական պառլամենտում՝ նման երևույթները սովորական են:

Նշենք նաև, որ մեր և եվրոպական պետական կառավարման համակարգը՝ մասնավորապես խորհրդարանական համակարգը, մի մեծ ընդհանրություն ունեն: Եվրոպացիները դժգոհում են, որ իրենց երկրներում նվազում է հետաքրքրությունը ընտրությունների նկատմամբ: Ստացվում է, որ ոչ թե ժողովուրդն է ձևավորում իշխանությունը, այլ ժողովրդի մի մասը, առավել շահագրգիռ հատվածը: Շատերը դա անվանում են անգամ կառավարման ճգնաժամ: Պատճառները տարբեր են: Մեծ մասամբ նշում են, որ եվրոպացիները անտարբեր են դարձել քաղաքական պրոցեսների նկատմամբ, կամ դժգոհ են տարվող քաղաքականությունից: Մյուսները հարցին այլ տեսանկյունից են նայում. մարդիկ անտարբեր են դարձել, բայց այն պատճառով, որ իշխանությունը նորմալ է աշխատում, և իրենք անհանգստանալու պատճառ չունեն: Մեզանում նույնպես ընտրություններին քիչ են մասնակցում (մանավանդ՝ տեղական նշանակության): Սակայն պատճառն է ուրիշ՝ ընտրությունը կեղծվում է ու անիմաստ դարձնում տեղամաս գնալը:

Եվրոպական չափանիշներին համապատասխանող պետական կառավարման համակարգ ունենալու համար միայն փաստաթղթերը, պայմանագրերը, ծրագրերն ու բարեփոխումները բավարար են: Հարկավոր են եվրոպական մտածելակերպ ունեցող մարդիկ, առաջին հերթին՝ պետա-

կան կառավարման համակարգում: Եվ Եվրոպայի հետ աստիճանաբար ակտիվացող համագործակցությունը այս առումով լավատեսության հիմքեր ստեղծում է, քանի որ աշխուժանում են շփումները Եվրոպայի հետ: Իսկ մեկ անգամ տեսնելը, ինչպես ասում են, հարյուր անգամ լսելուց կամ կարդալուց լավ է:

ԲԱԲԿԵՆ ԹՈՒՆՅԱՆ

ԱՌԱՅԺՄ՝ ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

2009 թվականից ՀՀ Մարդու իրավունքների գրասենյակում աշխատում է Եվրամիության «Twinning» ծրագրի ավագ խորհրդական Անտոնիո Մորան: Նա խորհրդատվություն է իրականացնում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում: Ա. Մորան ասում է, որ իր հիմնական առաքելությունն է՝ աջակցել, որպեսզի ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը համապատասխանի եվրոպական չափանիշներին:

- Ինչպե՞ս եք գնահատում մարդու իրավունքների ոլորտում ներկայիս վիճակը և Մարդու իրավունքների պաշտպանի դերը Հայաստանում:

- Միայն Պաշտպանի ինստիտուտի գոյությունն արդեն իսկ նշան է այն փաստի, որ Հայաստանում ինչ-որ բան արվում է մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում: Վստահ կարելի է ասել, որ Պաշտպանը շատ կարևոր դեր ունի ոչ միայն մարդու իրավունքների պաշտպանության մեջ, այլև երկրի ժողովրդավարացման գործընթացում:

- Ո՞րն է Եվրամիության փորձագետների դերն այս ոլորտում:

- Առաջին հերթին՝ առաջարկել իրենց փորձն այս տիպի հաստատությունը եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու համար: Ֆրանսիայում՝ մոտ 40, իսկ Իսպանիայում՝ 25 տարուց ավելի գոյություն ունի Պաշտպանի ինստիտուտ: Մենք փորձում ենք կիսել մեր ունեցած փորձը հայ գործընկերների հետ՝ հայկական իրականությունում օգտակար լինելու և կիրառելու նպատակով:

- Արդեն կարելի՞ է խոսել արդյունքների մասին:

- Այս պահին իրականացրել ենք ծրագրի մեկ երրորդ մասը: Հետևաբար, դեռ վաղ է ճշգրիտ արդյունքներ սպասելու համար: Սակայն արդեն ձեռք բերած արդյունք կարելի է համարել այս վեց ամիսների ընթացքում փոխանակված փորձի պարզ փաստը: Մոտ ապագայում ակնկալում ենք ունենալ Պաշտպանի գործունեության և ՀՀ օրենսդրական ակտերի փոփոխությունների առաջարկներ:

«ԱՐԴԵՆ ԻՍԿ ՊՏՈՒՂՆԵՐ ՏՎԵԼ Է»

Ասում է ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահ Մանվել Բաղալյանը

- Պարոն Բաղալյան, Հայաստան-Եվրամիություն հարաբերություններում կարևոր ուղղություններից մեկը պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված համագործակցությունն է: Վերջին տարիներին ի՞նչ ծրագրեր են իրականացվում այդ ուղղությամբ:

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության բարեփոխումների գործընթացն իր կայուն տեղն է զբաղեցրել ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրում, համաձայն որի՝ 2009-2011 թվականների ընթացքում մենք պետք է ընդգրկվենք Եվրոպական երկրների համանման կառույցների համագործակցության ցանցին, համագործակցություն սկզբնավորենք ԵՄ անդամ երկրների քաղաքացիական ծառայության ոլորտում հարաբերություններ կարգավորող կառույցների հետ, ուսումնասիրենք ԵՄ անդամ երկրների փորձը՝ կառավարման համակարգի համալրման, ուսուցման, ատեստավորման, կատարողականի գնահատման, էթիկայի կանոնների մշակման և կիրառման բնագավառներում: Նշված ուղղություններով արդեն իսկ արձանագրվել են հաջողություններ: Մասնավորապես՝ Փոխադարձ համագործակցության հուշագրեր են կնքվել Բուլղարիայի Հանրապետության, Կիպրոսի, Իտալիայի, Ուկրաինայի համապատասխան կառույցների հետ, բանակցություններ են տարվում նաև Իռլանդիայի Հանրապետության գործընկեր կառույցի հետ համագործակցություն սկզբնավորելու ուղղությամբ: Վերջին տարիների սերտ համագործակցության արդյունքում ուսումնասիրվել են նաև մի շարք եվրոպական երկրների քաղաքացիական ծառայության համակարգերը, որոնց արդյունքում ձեռնարկել և ձեռնարկելու ենք մի շարք փոփոխություններ՝ ՀՀ քաղաքացիական ծառայության համակարգը եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու ուղղությամբ: Այդ նպատակով բավականին արդյունավետ համագործակցություն է ծավալվել ԵՄ ծրագրերի, մասնավորապես՝ SIGMA-ի հետ, որի մասնակցությամբ և Եվրահանձնաժողովի աջակցությամբ կազմակերպել ենք սեմինար «ՀՀ քաղաքացիական ծառայության արդի հիմնախնդիրները և զարգացման միտումները» թեմայով: Նույն ծրագրի կողմից անցյալ տարվա ավարտին իրականացվել է ՀՀ քաղաքացիական ծառայության համակարգի կարիքների գնահատում, որի արդյունքները և երաշխավորությունները պատրաստ կլինեն մոտ ժամանակներս: Պլանավորում ենք նաև

SIGMA ծրագրի աջակցությամբ իրականացնել «Քաղաքացիական ծառայության քաղաքական չեզոքությունը: Տեսությունից իրականություն» գիտագործնական սեմինարը: ԵՄ չափանիշներին քաղաքացիական ծառայության համակարգը համապատասխանեցնելու նպատակով՝ եռամյա համագործակցություն է սկզբնավորվել նաև Բրիտանական խորհրդի հայաստանյան գրասենյակի հետ, որի արդյունքում արդեն իսկ իրականացվել են մի շարք վերապատրաստումներ և պլանավորվել համատեղ ծրագրեր:

- Այսօր Հայաստանի պետական կառավարման որոշ օղակներում խորհրդատվություն են իրականացնում Եվրամիության փորձագետները: Ի՞նչ հիմնական ուղղություններով է կատարվում նրանց աշխատանքը, և կարելի՞ է արդեն խոսել արդյունքների մասին:

- Բավականին սերտ և արդյունավետ համագործակցություն է ծավալվել ԵՄ խորհրդատվական խմբի հետ, ուր ընդգրկված են փորձառու և բանիմաց փորձագետներ: ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի հետ ԵՄ խորհրդատվական խումբն իր հիմնական գործունեությունը ծավալում է քաղաքացիական ծառայողների էթիկայի կանոնների, շահերի բախման և կանխարգելման կանոնակարգումների, հակակոռուպցիոն ներածական վերապատրաստումների դասընթացների մշակման և իրականացման ուղղությամբ: Նրանց գործուն աջակցությամբ, AEPLAC-ի կողմից իրականացվել են սեմինարներ, վերապատրաստողների վերապատրաստումներ՝ քաղաքացիական ծառայողների համար հակակոռուպցիոն ներածություն պարտադիր դասընթացի մշակման և իրականացման համար: Ընթացքի մեջ են նաև մի քանի այլ համատեղ ծրագրեր, որոնց արդյունքների մասին կխոսենք առաջիկայում:

- Ձեր կարծիքով, եվրոպական կառույցների հետ համագործակցությունը, եվրոպական փորձի փոխանակումը և համապատասխան մեխանիզմների ներդրումը կարո՞ղ է շոշափելի արդյունքներ ապահովել Հայաստանի պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման գործում, թե՞, այնուամենայնիվ, այս հարցում էական նշանակություն ունեն ազգային առանձնահատկությունները, որոնց մասին հաճախ խոսում են նաև մեր պաշտոնյաները:

- Անվիճելի է, որ ազգային առանձնահատկություններն ունեն էական նշանակություն, սակայն դա չի նշանակում, որ վկայակոչելով կամ թմբկահարելով դա, մենք պետք է զերծ մնանք մարդկության ձեռքբերումներից: Մենք մեր համագործակցությամբ փորձում ենք ԵՄ կառույցներից, ԵՄ անդամ երկրներից վերցնել արդեն իսկ փորձարկված և քննություն բռնած լուծումները: Եթե նրանց մոտ առկա է այս կամ այն գործընթացի ավելի արդյունավետ լուծումը, ինչո՞ւ անցնել սխալվելու ճանապարհով: Կարծում եմ, որ ՀՀ-ԵՄ համագործակցությունն արդեն իսկ տվել է իր պտուղները, որի ցայտուն օրինակը հենց Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական ծառայության ինստիտուտի առկայությունն է:

L. U.

ԵՄ-Ն ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ՈՒՆԵՆԱԼ ՀԱՎԱՍԱՐ ԳՈՐԾԸՆԿԵՐ

Եվրամիության հետ հարաբերությունների համատեքստում Հայաստանի հասարակությանը թերևս ամենից շատ հետաքրքրում է դրա տնտեսական բաղադրիչը: Եվրամիության հետ GSP, հետագայում՝ նաև GSP+ ռեժիմով առևտուր իրականացնելու հնարավորությունը բավականին մեծ քայլ էր: Սակայն պարզվեց, որ մեզ հարկավոր է շատ ավելին՝ ազատ առևտուր Եվրոպայի հետ: Ինչպես նշում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության Եվրամիության և միջազգային տնտեսական համագործակցության վարչության պետ Վարոս Սիմոնյանը, 2007թ. Եվրոպական հանձնաժողովը ուսումնասիրություն կատարեց, որի արդյունքում Հայաստանի հետ համատեղ որոշվեց, որ մեզ պետք չի միայն ազատ առևտրի համաձայնագիր, այլ պետք է խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագիր: Այսինքն՝ համաձայնագիրը պետք է ներառի բոլոր ոլորտները (ապրանքների և ծառայությունների առևտուր, ներդրումներ, մրցակցություն, գնումներ), դրան գումարած՝ պարունակի նաև ինստիտուցիոնալ բարեփոխումներ: 2009թ. Եվրոպական հանձնաժողովի փաստահավաք առաքելությունը Հայաստանում ուսումնասիրեց բոլոր այն մարմինները, որոնք ներառված կլինեն ապագա համաձայնագրի մեջ, և ներկայացրեց իր առաջարկները, որոնց ուղղությամբ Հայաստանը պետք է քայլեր կատարի: Հակառակ տարածված այն կարծիքի, որ Հայաստան-ԵՄ համագործակցությունը սահմանափակվում է միայն ինստիտուցիոնալ բնույթի բարեփոխումներով, օրենսդրական փոփոխություններով և տարատեսակ համաձայնագրերի ստորագրման արարողություններով, Վ. Սիմոնյանը հավաստիացնում է, որ Եվրամիությունը կոնկրետ, առարկայական աջակցություն է ցուցաբերում ՀՀ-ին՝ եվրոպական չափանիշներին մոտենալու հարցում: Այսինքն՝ մի կողմից ներկայացնում է պայմաններ, մյուս կողմից՝ օգնում, որ բավարարենք այդ պայմանները: «Եվրամիությունը նույնպես ցանկանում է ունենալ այնպիսի գործընկեր, որ գրեթե նույն մակարդակի վրա է գտնվում տնտեսական առումով, ինստիտուցիոնալ զարգացվածության աստիճանով: Սա Հայաստանի համար բարեփոխումներ իրականացնելու խթան է հանդիսանում»,- ասում է Վ. Սիմոնյանը: Այդ համատեքստում կարևորվում է հատկապես Եվրոպական Միության խորհրդատվական խմբերի գաղափարը, որը կյանքի կոչվեց 2008թ. Հայաստանի և Եվրոպական հանձնաժողովի միջև կնքված հուշագրի արդյունքում:

- ԵՄ խորհրդատվական խումբը ՀՀ-ում իր աշխատանքը սկսեց 2009թ-ից, տարբեր ոլորտներում: Խորհրդատուները կցված են տարբեր նախարարությունների՝ կոնկրետ խնդիրների լուծմանը աջակցելու, կարողություններ ձևավորելու համար: Դրա հետ զուգահեռ՝ գործում է նաև AEPLAC-ը, որը նույնպես այդ խմբի հետ համատեղ աջակցում է ՀՀ պետական կառավարման մարմիններին՝ թե՛ ԵՀՔ գործողությունների ծրագիրն ավելի արդյունավետ իրականացնելու, թե՛ խոր և համապարփակ առևտրի համաձայնագրի նախապատրաստական աշխատանքներն իրականացնելու համար: Մենք հիմա ունենք կոնկրետ խորհրդականներ՝ առևտրի գծով, բուսասանիտարական և մտավոր սեփականության խնդիրների հարցով: Նրանք լուրջ պրոֆեսիոնալներ են՝ ԵՄ անդամ տարբեր երկրներից: Ունեն պրակտիկ աշխատանքի փորձ. աշխատել են թե՛ իրենց երկրների անդամակցության նախապատրաստման ժամանակ, բարեփոխումների շրջանակներում, թե՛ եվրոպական հանձնաժողովում:

- Իսկ այդ խմբերի գործունեությունը որքանո՞վ է արդյունավետ:

- Մեր մասով կարող եմ ասել, որ շատ նորմալ, ակտիվ աշխատում ենք: Ունենք շաբաթական հանդիպումներ նախարարի հետ, և անհատական հանդիպումներ: Նրանք հենց մեր նախարարությունում են, ոչ մի խոչընդոտ չկա՝ հեռավորության մասով, ասենք: Այսինքն՝ մենք գրեթե ամեն օր աշխատում ենք իրար հետ:

- Բացի խորհրդատվական աջակցությունից, ուրիշ ի՞նչ բնույթի աջակցություն է ցուցաբերում Եվրոպական Միությունը:

- Կա նաև տեխնիկական-ֆինանսական աջակցություն: Համաձայն վարչապետի որոշման, ՀՀ էկոնոմիկայի նախարարը նշանակված է Հայաստանում Եվրոպական Միության տեխնիկական աջակցության համակարգող: Աջակցությունը իրականացվում է մի քանի ձևով: Եվրոպական հանձնաժողովի հետ համատեղ աշխատանքներ են տարվել երկրի ռազմավարությունը մշակելու հարցում: Իսկ այդ ռազմավարությունը ավելի պրակտիկ բաժանվում է ազգային ինդիկատիվ ծրագրերի՝ NIP-երի (national indicative program): Առաջին ինդիկատիվ ծրագիրը վերաբերում էր 2007-2010 թվականներին և նախատեսում էր 98 միլիոն եվրոյի աջակցություն: Յուրաքանչյուր տարվա համար աջակցությունը ստացվում է 1 տարի ավելի ուշ, 2008-ի վերջին նոր ստացվել է: Եվրամիության հետ կնքվում է տարեկան ֆինանսական համաձայնագիր և որոշվում է կոնկրետ ուղղություն ազգային ինդիկատիվ ծրագրի միջից: Այսինքն՝ Եվրամիությունը ցուցաբերում է ուղղակի բյուջետային աջակցություն: Ոչ թե կոնկրետ ծրագիր են տալիս իրականացման համար, այլ գումարը տրամադրում են բյուջեին, սակայն մոնիտորինգ են անում, թե որքանո՞վ է արդյունավետ եղել Հայաստանում այդ ոլորտի զարգացումը: Օրինակ՝ առաջին ոլորտը եղել է միջին մասնագիտական կրթությունը, երկրորդը՝ 2008թ. համար, աջակցությունը ուղղվել է արդարադատության ոլորտի բարեփոխումներին: Այս տարի, երբ եվրոպական հանձնաժողովի հանձնակատարը Հայաստանում էր, ստորագրվեց նաև NIP 2011-2013-ը:

- Որո՞նք են այդ 2011-2013 ծրագրի առաջնային ոլորտները:

- Ժողովրդավարական կառույցներ և արդյունավետ կառավարում, առևտուր և ներդրումներ, սոցիալ-տնտեսական բարեփոխումներ և կայուն զարգացում: Այս երեք առաջնայնությունների համար՝ 2011-2013 թվականների աջակցությունը կլինի 157 միլիոն եվրոյի չափով, որից 32 միլիոնը նոր գործիք է՝ CIB-comprehensive institutional building՝ պետական կառավարման մարմինների կարողությունների զարգացման նոր ծրագիր: Բացի այս ամենից, կան այլ գործիքներ ևս: Օրինակ՝ TWINNING-ը՝ նախատեսված կոնկրետ գերատեսչություններում կարողությունների զարգացման համար: Կա նաև կարճաժամկետ TAEX ծրագիրը, որի շրջանակներում էքսպերտներ են գործուղվում Հայաստան, սեմինարներ են կազմակերպվում, ինչպես նաև՝ Հայաստանից study visit-ներ՝ եվրոպական հաստատություններ: Եվ կա SIGMA ծրագիրը, որն ավելի օպերատիվ է. սահմանափակ ոլորտներ է ներառում, բայց շատ արդյունավետ գործիք է, ուսումնասիրություններ են կատարվում, օրենսդրության համեմատություններ են անում, առաջարկներ են ներկայացվում և այլն:

ԲԱԲԿԵՆ ԹՈՒՆՅԱՆ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿԱՐԵՎՈՐ ԴԵՐԱԿԱՏԱՐ

Անկախության հռչակումից ի վեր՝ մեզանում միշտ խոսվել է քաղաքացիական հասարակության դերի, կարևորության մասին, սակայն կայացած քաղաքացիական հասարակություն մենք այսօր չունենք: Իսկ ի՞նչ է նշանակում՝ «քաղաքացիական հասարակություն»:

Եթե ընդհանրացնենք, ապա՝ քաղաքացիական հասարակությունը սոցիալական միավորումների (խմբեր, կոլեկտիվներ) ամբողջություն է, որոնց միավորում են տնտեսական, էթնիկ, մշակութային և այլ շահերը, և որոնք գործում են պետական կառավարման համակարգից դուրս՝ միևնույն ժամանակ հնարավորություն տալով վերահսկել պետական մեքենայի գործողությունները: Կարելի է նաև մի քանի պոստուլատների միջոցով բնորոշել քաղաքացիական հասարակություն կոչվածը.

- ՔՀ-ն սոցիալական, մշակութային, բարոյական, տնտեսական բարձր կարգավիճակ ունեցող մարդկանց հասարակություն է:
- Քաղաքացիական հասարակության ձևավորման համար կարևոր նախապայման է հասարակության բոլոր անդամների համար տնտեսական ինքնուրույնության առկայությունը՝ մասնավոր սեփականության հիմքի վրա:
- Քաղաքացիական հասարակության կարևոր բնորոշիչներից մեկն այն է, որ հասարակության ներսում առկա է ինքնակազմակերպման և ինքնակարգավորման բարձր մակարդակ:

Որպեսզի ասվածը շատ դասագրքային չհնչի, մի պարզ օրինակ բերենք: Սրանից մոտ 2-3 տարի առաջ մամուլում մի լուր հայտնվեց, որ եվրոպական երկրներից մեկում ավտոտեսուչը խախտել է ճանապարհային երթևեկության կանոններն ու… տուգանել ինքն իրեն: Սա կարելի է համարել քաղաքացիական հասարակության ամենավառ դրսևորում՝ պատասխանատվության, ինքնակարգավորման և կարգապահության բոլոր նրբերանգներով: Հայաստանում բոլոր նրանք, ովքեր լսել էին այդ մասին՝ ոստիկանին համարում էին պարզապես հոգեկան հիվանդ: Սա էլ հակառակ

երևույթի մասին է խոսում՝ քաղաքացիական մտածելակերպի բացակայության: Իսկ եթե չկա քաղաքացիական գիտակցում, ապա անիմաստ է խոսել Հայաստանում քաղաքացիական հասարակության մասին: Քաղաքացիական հասարակություն ձևավորելու համար, առաջին հայացքից, լավ հիմքեր կան. ունենք համապատասխան օրենքներ, տարբեր միջազգային կառույցների աջակցությամբ իրականացվում են տարբեր ծրագրեր և այլն: Սակայն, ինչպես մի առիթով նշել է Հայաստանի ՄԻՊ Արմեն Հարությունյանը, դա բավարար չէ. «Յուրաքանչյուրիցս է կախված քաղաքացիական հասարակության ձևավորումը, մեր մտածելակերպից ու վարվելաձևից: Ազատություն կա այնտեղ, որտեղ կա կազմակերպվածություն ու պատասխանատվություն»: Քաղաքացիական հասարակության ձևավորման գործում չափազանց մեծ կարևորություն է տրվում հասարակական կազմակերպություններին: Հայաստանի պարագայում, սակայն, այստեղ ամեն ինչ շատ ավելի բարդ է: Արդարադատության նախարարության տվյալներով, մայիսի 1-ի դրությամբ Հայաստանում գրանցված են 3450 հասարակական միավորումներ: Սա շատ բարձր ցուցանիշ է: Սակայն բոլորն էլ գիտեն, որ նրանց մեծ մասը գոյություն ունի ընդամենը թղթի վրա: Նշենք, որ քաղաքացիական հասարակության ձևավորման հարցում բավականին պասիվ է նաև ամենակարևոր օղակը՝ երիտասարդությունը: Այսօր Հայաստանում երիտասարդների թիվը կազմում է շուրջ 800 հազար, բնակչության մեկ քառորդը: Սակայն հայ երիտասարդների ընդամենը 5%-ն է հասարակական կյանքում ակտիվություն ցուցաբերում: Համեմատության համար նշենք, որ Արևելյան Եվրոպայի երկրներում այդ ցուցանիշը տատանվում է 20-25%-ի սահմաններում, իսկ Արևմտյան երկրներում՝ հասնում է մինչև 85%-ի:

Այս ֆոնին առավել հասկանալի է դառնում, թե եվրոպական համայնքը և, մասնավորապես՝ Եվրամիությունը, ինչու է կարևորում քաղաքացիական հասարակության դերը իր հարևան և գործընկեր երկրներում: «Արևելյան գործընկերությանը» նվիրված իր հաղորդագրության մեջ Եվրոպական հանձնաժողովը մատնանշել է. «Եվրոպական հարևանության քաղաքականության արևելյան գործընկեր երկրներում ընթացող բարեփոխումները պահանջում են քաղաքացիական հասարակության ավելի ակտիվ մասնակցություն՝ հանրային ծառայությունների վերահսկումը խթանելու և նրանց հանդեպ հասարակության վստահությունն ամրապնդելու նպատակով: Այդ իսկ պատճառով «Արևելյան գործընկերության» նախաձեռնությունում քաղաքացիական հասարակության ներգրավման խնդիրը հատուկ ուշադրության պետք է արժանանա»:

Չի կարելի չնշել, որ անգամ Եվրամիության շահագրգռվածության պարագայում, հասարակության մեջ մի տեսակ անվստահություն կա այս տեսակ ձեռնարկների հաջողության հարցում: Պատճառը շատ պարզ է. մարդիկ իրավացիորեն կարծում են, որ եթե Հայաստանի հասարակությունը ինքը շահագրգռված չեղավ ամենատարբեր ոլորտներում իրական բարեփոխումներ իրականացնելու հարցում, ապա չեն օգնի ոչ ԵՄ ծրագրերն ու

առաջարկությունները, ոչ էլ տարբեր օրենքներն ու ինստիտուտները: Ավելացնենք, որ «Արևելյան գործընկերության» ծրագրում քաղաքացիական կազմակերպությունների ներգրավվածությունը՝ որպես համակարգ, ձևավորվել է Քաղաքացիական հասարակության համաժողովի տեսքով, որն առաջին անգամ տեղի է ունեցել 2009 թ. նոյեմբերի 16-17-ին՝ Բրյուսելում կայացած քաղաքացիական հասարակության համաժողովում: Այդ համաժողովին Հայաստանից մասնակցում են շուրջ 20 կազմակերպություններ, որոնցից մի քանիսը բավականին ակտիվ են:

ԲԱԲԿԵՆ ԹՈՒՆՅԱՆ

ԵՎՐՈՊԱՅԻՆ ՄՈՏԵՆԱԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Հարցազրույց ՀՀ-ում ԵՄ պատվիրակության ղեկավար Ռաուլ դե Լուցենբերգերի հետ

- Պարոն դեսպան, մայիսի 9-ին նշվեց «Եվրոպայի օրը»: Այդ տոնը շատ խորհրդանշական է հատկապես Եվրոպայի ընդլայնման ներկայիս միտումների համատեքստում: Մյուս կողմից՝ վերջին շրջանում ոչ միանշանակ կարծիքներ են հնչում Եվրամիության կենսունակության մասին: Ձեր կարծիքով, այսօր միավորված Եվրոպան իրականում նման մարտահրավերի առաջ է կանգնած:

- «Եվրոպայի օրը» խորհրդանշում է այն ճանապարհը, որի միջոցով Եվրամիությունն օգնում է հաղթահարել անջրպետները Եվրոպայի ներսում: Եվրամիության ընդլայնումը մեր ամենահաջող քաղաքականություններից մեկն է: Եվրոպական Միությունը 1957թվականին ուներ ընդամենը 6 անդամ, այժմ անդամների թիվն ավելացել է՝ հասնելով 27-ի: Վերջին 50 տարիների ընթացքում Եվրամիությունը ցույց է տվել միասնականության և համագործակցության մշտապես աճող մակարդակ: Մեր ընդհանուր արժույթի՝ եվրոյի ներդրումը դրա ամենավառ օրինակն է: Իհարկե, համաշխարհային ֆինանսական ճգնաժամը ազդեց նաև Եվրոպայի վրա, սակայն Եվրամիությունն այսօր աշխատում է վերահաստատել ֆինանսական կարգապահությունը և քայլեր է ձեռնարկում եվրոն պաշտպանելու համար:

- Այս տարի «Եվրոպայի օրը» նշանավորվեց մեկ այլ իրադարձությամբ ևս: Մեկ տարի առաջ՝ մայիսի 7-ին Պրահայում պաշտոնապես մեկնարկեց «Արևելյան գործընկերության» ծրագիրը: Ամփոփելով անցած մեկ տարին՝ ինչպե՞ս եք գնահատում այդ ծրագրի արդյունավետությունը, մասնավորապես՝ Հայաստանի առնչությամբ:

- «Արևելյան գործընկերության» ծրագիրը կառուցվում է Հարևանության քաղաքականության հիմքի վրա և հնարավորություն է ընձեռում գործընկեր երկրների համար, ինչպիսին Հայաստանն է, այնքան մոտենալ Եվրամիությանը, որքան իրենք ցանկանում են: Անցած մեկ տարվա ընթացքում բազմաթիվ հանդիպումներ են տեղի ունեցել: Ընդ որում, շփումների պլատֆորմը բավականին ընդարձակ է. այն ապահովում է հանդիպումների վայր՝ քաղաքացիական հասարակության անդամներից սկսած՝ մինչև մաքսային ոլորտի պաշտոնյաների համար: Հայաստանում Եվրամիության խորհրդատվական խումբն այս ընթացքում օգնել է Հայաստանին

նախապատրաստվել հաջորդ քայլերն իրականացնելու համար՝ ԵՄ-ի հետ ասոցիացված համաձայնագրի հետ կապված բանակցությունների, ինչպես նաև՝ խորը և համապարփակ ազատ առևտրային համաձայնագրի կնքման ուղղություններով: Այս շրջանակներում Հայաստանի համար նախատեսվել են ավելի մեծ ծավալի ֆինանսական միջոցներ:

- «Արևելյան գործընկերության» ծրագրի հաջող ընթացքը, ըստ էության, ենթադրում է նաև Եվրամիության հետ ասոցիացված անդամության համաձայնագրի ստորագրում, ինչի մասին տարբեր առիթներով խոսել են Եվրամիության բարձրաստիճան պաշտոնյաները: Ձեր կարծիքով, ե՞րբ նման հնարավորություն կունենա Հայաստանը:

- Մայիսի սկզբին Եվրամիության Նախարարների խորհուրդը համաձայնության եկավ Եվրոպական հանձնաժողովի համար նախատեսված հանձնարարականների մասով, որոնք վերաբերում են Կովկասյան երեք երկրներից յուրաքանչյուրի հետ ասոցիացված համաձայնագրի շուրջ բանակցություններին: Ասոցիացված համաձայնագրի ու Խորը և համապարփակ ազատ առևտրային համաձայնագրի կնքման շուրջ բանակցությունները կսկսվեն անմիջապես այն բանից հետո, երբ Հայաստանը կավարտի նախապատրաստական աշխատանքները: Հայաստանն արդեն իսկ իր կողմից բանակցելու համար ձևավորել է կոորդինացնող մարմիններ: Դրանք վերաբերելու են Եվրամիության կանոնների որդեգրմանը տարբեր ոլորտներում, այդ թվում՝ սննդի և ապրանքների անվտանգությանը: Ինչպես ցույց է տվել մյուս գործընկեր երկրների փորձը, բանակցությունները որոշակի ժամանակ կտևեն:

ՀԱՅԱՍՏԱՆՆ ԱՌԱՋԻՆՆ Է ԼԻՆԵԼՈՒ

Հարցազրույց Հայաստանում «Արևելյան գործընկերության» ծրագրի Քաղաքացիական հասարակության ֆորումի հայաստանյան համակարգող Բորիս Նավասարդյանի հետ

- Պարոն Նավասարդյան, անցած տարեվերջին «Արևելյան գործընկերության» ծրագրի շրջանակներում Բրյուսելում կայացած քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ որոշվեց ստեղծել «ազգային պատֆորմներ», որի շրջանակներում համագործակցելու են Հայաստանն ու Եվրամիությունը: Ի՞նչ փուլում են այդ աշխատանքները:

- Այդ ֆորումին մասնակցած հայաստանյան պատվիրակները ձևավորեցին նախաձեռնող խումբ, որն էլ սկսեց ձևավորել Հայաստանի քաղաքացիական ֆորումի «ազգային պլատֆորմը»: Մարտի վերջին տարածվեց հայտարարություն, որով հրավիրվում էին Հայաստանի քաղաքացիական հասարակության ինստիտուտները՝ ընդգրկվելու այդ պլատֆորմի մեջ: Եվ այս, և հաջորդ տարի դեռևս ընդգրկվելու հնարավորություններ կլինեն, բայց որոշվեց, որ 1-ին փուլում լինեն այն կազմակերպությունները, որոնք ունեն 3 տարվա գործունեության փորձ, և որոնց գործունեությունը համապատասխանում է «Արևելյան գործընկերության» առաջնահերթություններին: Ստացվեց մոտ 170 դիմում: Բացի տեխնիկական անհամապատասխանություն ունեցողներից, մնացած բոլորը՝ մոտ 140-ը, կընդգրկվեն «ազգային պլատֆորմի» մեջ: Հունիսի 7-ին կանցկացվի հիմնադիր ժողով, որտեղ կձևավորվեն աշխատանքի սկզբունքները, կքննարկենք մեր առաքելությունը և աշխատանքի ուղղվածությունը: Ցանկալի կլիներ, որ բոլոր երկրներում «ազգային պլատֆորմների» ձևավորման գործընթացն ընթանար նույն արագությամբ: Բայց այլ երկրներում, թերևս, այդքան ակտիվություն չկա, որքան Հայաստանում, և մեր երկիրը այս առումով առաջինն է լինելու:

- Ո՞րն է լինելու ծրագրում ընդգրկված կազմակերպությունների գործառույթը: Նրանք պետք է միասնաբա՞ր աշխատեն «Արևելյան գործընկերության» 4 թեմատիկ ուղղություններով, թե՞ կկազմվեն տարբեր խմբեր:

- Կարծում եմ, որ որոշ ժամանակ անց կստեղծվեն առնվազն 4 աշխատանքային խմբեր, որոնք կհամապատասխանեն «Արևելյան գործընկերության» 4 թեմատիկ պլատֆորմներին: Նախաձեռնողների պատկերացմամբ, գործունեության հիմնական ուղղվածությունը պետք է լինի լուսավորչական աշխատանքը: Քաղաքացիական հասարակության այն ինստի-

տուտները, որոնք ներգրավվել են «ազգային պլատֆորմում», պետք է տարածեն «Արևելյան գործընկերության» բովանդակությունը, իմաստն ու հեռանկարները հանրության շրջանում: Ընթացքում կարող են ձևավորվել նաև հստակ թիրախ ու գործունեության ոլորտ ունեցող այլ խմբեր: Հաջորդ կարևոր գործունեության ոլորտը կլինի՝ առաջարկություններով ձևավորել այն ուղղությունները, որոնք պետք է հիմնականը լինեն Հայաստան-Եվրամիություն հարաբերություններում: Կարևոր է նաև այն, որ «ազգային պլատֆորմը» կունենա գործընկերներ՝ ի դեմս Եվրամիության այն երկրների հ/կ-ների, որոնք ներառված են ֆորումում: Խոսքը գնում է երկկողմանի պարտավորությունների կատարման և արդյունավետ համագործակցության մասին, և մենք կարող ենք երկկողմանի վերահսկողություն իրականացնել: Նման փորձ չենք ունեցել:

- Ծրագրի շրջանակում նախատեսվո՞ւմ է Հայաստանի հետ ԵՄ-ի կողմից ասոցիացված համաձայնագրի ստորագրում: Հայտնի է, որ Վրաստանի և Ուկրաինայի հետ նման գործընթաց արդեն սկսվել է:

- Հունիսին այդ ուղղությամբ կսկսվեն բանակցությունները: Արդեն Եվրամիության կողմից եղել է հայտարարություն, որ նրանք մեր կառավարության հետ սկսում են աշխատանքներն այդ համաձայնագրի շուրջ:

- «Արևելյան գործընկերության» ծրագիրը թերևս միակն է իր ձևաչափով, որտեղ քաղաքացիական հասարակության մասնակցությունը պարտադիր է: Ծրագրի մեկնարկից անցել է մոտ մեկ տարի. քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովման առումով կա՞ն ցանկալի արդյունքներ:

- Քաղաքացիական հասարակության ներգրավման առումով առաջընթացը ակնհայտ է: Նման բան երբևիցե չի եղել, որ Հայաստան-Եվրամիություն հարաբերություններում քաղաքացիական հասարակությունն ունենար որևէ ինստիտուցիոնալ դեր: Մենք տեսնում ենք, որ կան լուրջ հեռանկարներ, իսկ երբ սկսվի պրակտիկ համագործակցություն Եվրամիության կառույցների և Հայաստանի միջև, քաղաքացիական հասարակությունը միշտ կունենա իր ասելիքն ու անելիքը:

- Անցած շաբաթ Եվրահանձնաժողովը և Եվրոպական պառլամենտը Հայաստանին վերաբերող բավական կոշտ բանաձևեր ընդունեցին: Ձեր կարծիքով, այդ զարգացումները կարո՞ղ են ազդել Հայաստան-ԵՄ հարաբերությունների, մասնավորապես՝ «Արևելյան գործընկերության» ծրագրի վրա:

- Ինձ այդպես չի թվում: Երբ քաղաքական շահեր ունեցող ինստիտուտները փորձում են մտնել այնպիսի հարցերի մեջ, որոնցից բացարձակապես տեղեկություն չունեն, ապա այդպիսի պատահական և կասկածելի որոշումներ են ի հայտ գալիս: Որպեսզի դա բացառվի, կարևոր է, որ ինչքան հնարավոր է՝ շատ կարծիքների փոխանակում և շփումներ լինեն: Օրինակ, Եվրախորհրդարանում լինելու է Հայաստանի օր, որին հրավիրված են քաղաքացիական հասարակության ֆորումում ակտիվ հ/կ-ները: Կքննարկվեն մի շարք հարցեր, և, բնականաբար, մենք այնտեղ կփորձենք

խորհրդարանականներին ներկայացնել մեր մտահոգությունները՝ այդ բանաձևի հետ կապված, նպատակ ունենալով թույլ չտալ, որ կրկնվեն այդ կարգի ոչ կոմպետենտ որոշումները:

Զրուցեց ԳԱՅԱՆԵ ՍԱՀԱԿՅԱՆԸ

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՃՈՒՄ Է

Ասում է Հայաստանում Եվրոպական Միության պատվիրակության քաղաքական, տնտեսական, մամուլի և տեղեկատվության բաժնի ղեկավար Օննո Սիմոնսը



- Պարոն Սիմոնս, 2009թ. մայիսի 9-ին մեկնարկեց «Արևելյան գործընկերության» ծրագիրը: Ինչպե՞ս եք գնահատում անցած ավելի քան մեկ տարվա ընթացքը, ծրագրի շրջանակներում կատարված ո՞ր քայլերը կարծանագրեք որպես առաջընթաց, և Ձեր կարծիքով՝ ի՞նչ բացթողումներ են եղել այս ժամանակահատվածում:

- Հայաստանի պարագայում, «Արևելյան գործընկերության» ծրագրի գխավոր ձեռքբերումն այն է, որ Եվրամիությունը մայիսի սկզբին որոշում ընդունեց հուլիսի 19-ին բանակցություններ սկսել Հայաստանի հետ՝ երկու կողմերի միջև Ասոցիացված համաձայնագիր կնքելու ուղղությամբ: Նման համաձայնագրի կնքումն է՛լ ավելի կսերտացնի Հայաստան-ԵՄ հարաբերությունները: Այս շրջանակներում արդեն հնարավոր կլինի սկսել բանակցությունները Խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի շուրջ, անմիջապես այն բանից հետո, երբ Հայաստանը կիրականացնի նախապայմանները: Ազատ առևտրի համաձայնագիրը հայկական ապրանքների արտահանման առջև կբացի Եվրամիության շուկաները: Համաձայնագրով նախատեսվող մյուս կարևոր բաղադրիչը մարդկանց համար ավելի ազատ տեղաշարժի հնարավորությունն է՝ մուտքի արտոնագրերի ազատականացման ճանապարհով: Հայաստանը մասնակցել է Արևելյան գործընկերության շրջանակներում կազմակերպված բազմաթիվ փորձագիտական հանդիպումների: Դա իր հերթին նպաստել է, որպեսզի մասնակից երկրները հարստացնեն իրենց փորձը, նաև ակտիվացրել է շփումները նրանց միջև: Արևելյան գործընկերությունը ուղղված է նաև տարածաշրջանային համագործակցության ակտիվացմանը: Սակայն պետք է նշենք, որ հաշվի առնելով Կովկասյան տարածաշրջանի բարդ իրավիճակը, այս հարցում առաջընթացը դեռ այնքան մեծ չէ, որքան մենք կցանկանայինք տեսնել:

- Թեև վերջին շրջանում ավելի հաճախ խոսվում է «Արևելյան գործընկերության» ծրագրի մասին, այդուհանդերձ, Հայաստանի հետ հարաբերություններում ավելի ընդգրկուն ծրագիր է «Նոր հարևանությունը»: Ինչպե՞ս եք գնահատում վերջինիս հաջողությունը, և Ձեր կարծիքով՝ որքանո՞վ է

Հայաստանը մոտեցել Եվրոպային ԵՀՔ-ի արդյունքում:

- Արևելյան գործընկերությունը լրացնում և զարգացնում է Եվրոպական հարևանության քաղաքականությունը՝ Եվրամիությունից արևելք ընկած տարածաշրջանի ուղղությամբ: ԵՀՔ-ի իրագործումը 5 տարիների ընթացքում նշանակել է, որ ԵՄ-ն ավելի մեծ ծավալի առևտուր է իրականացրել իր հարևանների հետ, ավելի շատ օգնություն է ցույց տվել, զարգացրել մարդկային շփումները և նպաստել ավելի խոր համագործակցության հաստատմանը ԵՄ-ի և հարևան երկրների միջև՝ նրանց քաղաքական, տնտեսական և կառուցվածքային բարեփոխումների ողջ ընթացքում: Մեր գործընկերությունը նշանակալի չափով զարգացել է այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են տրանսպորտը, էներգետիկան, շրջակա միջավայրի պաշտպանությունը և կլիմայի փոփոխությունը, գիտական հետազոտությունները, առողջապահությունն ու կրթությունը: Այս զարգացումներն ուղեկցվել են ԵՀՔ բոլոր երկրներին մեր կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության աճով, որը կազմել է 32%: Օրինակ, Եվրամիությունը՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հետ համատեղ, միջոցներ է հատկացրել Երևանի մետրոպոլիտենի վերանորոգման համար: ԵՄ-ն ֆինանսավորել է նաև Երևան-Թբիլիսի երկաթգծի բարելավման նպատակով կատարված հետազոտությունը:

- Մայիս ամսվա ընթացքում Եվրոպական հանձնաժողովը և Եվրոպական խորհրդարանը ընդունեցին բանաձև և զեկույց, որը վերաբերում էր Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմանը: Այդ փաստաթղթերը Հայաստանում բացասական գնահատականի արժանացան: Ձեր կարծիքով՝ իրադարձությունների նման ընթացքը կարո՞ղ է որևէ կերպ ազդել «Նոր հարևանության» և «Արևելյան գործընկերության» ծրագրերի վրա:

- Եվրախորհրդարանը վերջերս ընդունեց բանաձև և զեկույց՝ Հարավային Կովկասում ԵՄ ռազմավարության անհրաժեշտության մասին: Այդ զեկույցը հայտնի է որպես Կիրիլովի զեկույց: Այս արձանագրությունը պարտավորեցնող չէ Եվրոպական հանձնաժողովի և Եվրոպական խորհրդի համար. այն ավելի շուտ պետք է ընկալել որպես խորհուրդ՝ այս եվրոպական ինստիտուտներին: Իսկապես, Լեռնային Ղարաբաղի մասով այդ բանաձևը Հայաստանում քննարկման առարկա դարձավ, սակայն ես այն չէի անվանի բացասական: Այնուամենայնիվ, Եվրախորհրդարանը անկախ մարմին է: Այն ինֆորմացիա է հավաքում լսումների, հետազոտությունների, փաստաթղթերի միջոցով, ինչպես նաև՝ լոբբիիների կողմից: Կարծում եմ՝ շատ հայաստանցիների համար պարզ դարձավ, որ շատ կարևոր է Բրյուսելում հայկական տեսակետը արդյունավետ ներկայացնել, ինչպես անում են մյուս շահագրգիռ կողմերը: Նշեմ նաև, որ բանաձևն ու զեկույցը վկայում են Հարավային Կովկասի նկատմամբ Եվրախորհրդարանի աճող հետաքրքրության մասին: Իսկ դա դրական զարգացում է, ինչը կարող է միայն նպաստել Արևելյան գործընկերությանը և Եվրոպական հարևանության քաղաքականությանը:

«ՄԵՐ ԵՎ ԵՎՐՈՊԱՑԻՆԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԸՆԿՆՈՒՄ ԵՆ»

Ասում է ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Կարինե Ղազինյանը

- 2009թ. մայիսի 7-ին մեկնարկեց «Արևելյան գործընկերության» ծրագիրը: Ինչպե՞ս եք գնահատում անցած ժամանակահատվածում ծրագրի ընթացքը: Ի՞նչ կարևոր քայլեր կառանձնացնեք, որոնք հիմք են դրել հետագա համագործակցության ընդլայնման համար:

- Հայաստանը բազմիցս հաստատել է Արևելյան գործընկերության Պրահայի հռչակագրին համահունչ Եվրոպական Միության հետ հետագա համագործակցությունը զարգացնելու իր հանձնառությունը, որն ամրագրվում է կոնկրետ քայլերով: Հաջողությամբ ընթանում է բարձր մակարդակի քաղաքական երկխոսությունը, որի շրջանակներում կառանձնացնեի մայիսին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի այցը Բրյուսել, որտեղ նա արդյունավետ հանդիպումներ ունեցավ ԵՄ ղեկավարության հետ՝ Հայաստան-ԵՄ համագործակցության օրակարգային հարցերի շուրջ: Մարտին և ապրիլին տեղի ունեցան ԵՄ նախագահող երկրի՝ Իսպանիայի ԱԳ նախարար Միգել Մորատինոսի ու Ընդլայնման ու Եվրոպական հարևանության քաղաքականության հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեի այցերը Հայաստան: Արևելյան գործընկերության շրջանակներում տեղի է ունեցել ԱԳ նախարարների երկու ոչ պաշտոնական հանդիպում, որի ժամանակ Հայաստանը ներկայացրել է իր մոտեցումները համագործակցության հետագա ընթացքի շուրջ: Գործընկերությանն առնչվող հարցերը պարբերաբար քննարկվում են ԵՄ երկրների ղեկավարների հետ երկկողմ շփումների ընթացքում: «Արևելյան գործընկերություն» նախաձեռնության հիմնական աշխատանքներն իրականացվում են թեմատիկ չորս, այսպես կոչված, պլատֆորմների՝ հարթակների շրջանակներում՝ որոնք ընդգրկում են ժողովրդավարությունն ու արդյունավետ կառավարումը, տնտեսությունը, հումանիտար ոլորտը/մարդկային շփումները և էներգետիկան: Հայաստանը ամենաակտիվ և արդյունավետ կերպով ընդգրկված է նշված պլատֆորմների աշխատանքներին, ինչը, գոհունակությամբ պետք է նշեմ, ոչ միայն մեր, այլև մեր եվրոպական գործընկերների գնահատականն է, որն, ի դեպ, վերաբերում է նաև Հայաստանում մեկ տարուց ավելի գործող ԵՄ խորհրդատուների խմբի գործունեությանը: Մայիսին ԵՄ-ն որոշում ընդունեց, և դա երկկողմ համագործակցության արդյունք էր, բանակցություններ սկսել Հա-

յաստանի հետ Ասոցիացման համաձայնագրի շուրջ: Նախատեսվում է, որ դրանք կմեկնարկեն արդեն այս տարվա հուլիսին: Նախապատրաստական աշխատանքներ են տարվում Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու ստեղծման ուղղությամբ: Հուլիսի 6-ին իր առաջին նիստը կգումարի արդարադատության և անվտանգության հարցերով ՀՀ-ԵՄ համագործակցության ենթակոմիտեն, որի աշխատանքների արդյունքում աստիճանաբար կազատականացվի վիզային ռեժիմը ԵՄ անդամ երկրների հետ: Ամփոփելով, գոհունակությամբ կցանկանայի նշել, որ մեր եվրոպական գործընկերների հետ բոլոր շփումները վկայում են, որ ապագա համագործակցության օրակարգի, ձևի և բովանդակության շուրջ մեր ընկալումները համընկնում են:

- Թեև ներկայումս ավելի շատ քննարկվում է «Արևելյան գործընկերության» ծրագիրը, սակայն Հայաստան-Եվրամիություն հարաբերությունների խորացման հիմքերը դրվել են «Նոր հարևանության քաղաքականության» ծրագրով: Ինչպե՞ս եք գնահատում «Նոր հարևանության» ծրագրի ընթացքը, և Ձեր կարծիքով՝ որքանո՞վ է Հայաստանն ավելի մոտեցել Եվրոպային:

- Արևելյան գործընկերությունը պետք չէ տարանջատել Հարևանության քաղաքականությունից, քանի որ այն կոչված է խթանել Հարևանության քաղաքականության իրականացումը՝ նոր հեռանկարներ բացելով հետագա համագործակցության համար: Վերջերս հրապարակվեց «Եվրոպական հարևանության քաղաքականության» գործողությունների ծրագրի կենսագործման Հայաստանի առաջընթացի զեկույցը, որն, ընդհանուր առմամբ, դրական է գնահատում մեր երկրի կողմից իրականացրած աշխատանքները բոլոր ուղղություններով: Դրա հետ մեկտեղ՝ մենք չենք կարող կանգ առնել մեր ձեռքբերումների վրա. ընդհակառակը, արձանագրված հաջողությունները նոր լիցք են հաղորդում նախատեսված բարեփոխումները և միջոցառումները հնարավորինս արագ ու արդյունավետորեն կյանքի կոչելու համար: Այս հարցում կարևոր է նաև մեր եվրոպական գործընկերների աջակցությունը:

- Հունիսի 14-ին ԵՄ անդամ երկրների արտգործնախարարները ընդունեցին մի փաստաթուղթ, ըստ որի՝ «Եվրամիությունը սպասում է Հարավային Կովկասի երեք երկրների հետ Ընկերակցային համաձայնագրեր կնքելու շուրջ բանակցություններին, որոնք պետք է մեկնարկեն արդեն մեկ ամիս անց՝ այս տարվա հուլիսին»: Նույն փաստաթղթում միաժամանակ նշված է, որ հարաբերությունների այդ՝ առավել սերտ աստիճանին հասնելու համար հարավկովկասյան երկրները պետք է բարեփոխումներ իրականացնեն ժողովրդավարության, օրենքի գերակայության, մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի ու լավ կառավարման ոլորտներում: Ձեր գնահատմամբ, որքանո՞վ է Հայաստանը պատրաստ այդ բանակցություններին և հաշվի առնելով ՀՀ-ի ներկայիս իրողությունները, ի՞նչ ժամկետներում հնարավոր կլինի ընկերակցային համաձայնագրի ստորագրումը:

- Քաղաքական տեսանկյունից Հայաստանը պատրաստ է բանակցություններին: Հաջորդ շաբաթ Բրյուսելում տեղի կունենա նախապատրաստական խորհրդակցությունների փուլը: Բուն բանակցային գործընթացը կրելու է տևական բնույթ՝ առանց ժամկետային սահմանափակումների: Բայց կարևորը դա չէ. մենք մտադիր ենք կենտրոնանալ բանակցվող փաստաթղթի որակի վրա, որպեսզի այն արտացոլի ինչպես Հայաստանի ու ԵՄ համագործակցության խորացման իրական հեռանկարը, այնպես էլ այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ բարեփոխումները:

«ԵՎՐՈՊԱԿԱՆ ՎԵԿՏՈՐԸ ՃԻՇՏ Է ԸՆՏՐՎԱԾ»

Հարցազրույց ՀՀ ԱԺ Եվրոինտեգրման հարցերով մշտական հանձնաժողովի նախագահ Նաիրա Զոհրաբյանի հետ

- 2009 թվականի մայիսի 7-ին մեկնարկեց «Արևելյան գործընկերության» ծրագիրը: Ինչպե՞ս եք գնահատում անցած ժամանակահատվածում ծրագրի ընթացքը: Արդյո՞ք հնարավոր էր ավելին անել, քան արձանագրվել է մինչ այժմ:

- «Արևելյան գործընկերության» մեկնարկով Հայաստան-ԵՄ հարաբերությունները անցան որակական նոր փուլ, որը ենթադրում է ԵՄ-ի հետ առավել սերտ քաղաքական, տնտեսական ինտեգրում: Գործընկերության այս նոր ֆորմատը ենթադրում է, այսպես կոչված, «ազատ ձիավարման» սկզբունք, որը նշանակում է, որ արևելյան գործընկերներից յուրաքանչյուրի կատարած քայլերի արդյունավետությունից է կախված լինելու ԵՄ-արևելյան կոնկրետ գործընկեր հարաբերությունների ընթացքը: ԵՄ-ի հետ հաստատված բոլոր գործիքներում՝ թե՛ հարևանության քաղաքականության և թե՛ այժմ արդեն Արևելյան գործընկերության քաղաքականությամբ Հայաստանը հանդես է եկել առավել ակտիվ շահագրգռությամբ՝ առաջ մղելու եվրոպական ինտեգրման մեր առաջնահերթությունը: Ասել, որ բոլոր ոլորտներում մենք հաջողել ենք և պատրաստ ենք լիարժեք տնտեսական-քաղաքական ասոցիացման, իհարկե, լուրջ չի լինի: Մեկ բան, սակայն, հստակ է. եվրոպական մեր ներգրավվածության հարցում մենք երկրի ներսում՝ իշխանություն-ընդդիմություն հարթությունում, ունենք քաղաքական կոնսենսուս, այսինքն՝ եվրոպական մեր վեկտորը ընտրված է ճշգրիտ, ուստի մնում է իրապես կոնկրետ քայլեր ձեռնարկել «Արևելյան գործընկերությամբ» հաստատված չորս հիմնարար պլատֆորմներով: Օրերս ես մասնակցում էի «Արևելյան գործընկերության» քաղաքացիական հասարակության ազգային պլատֆորմի մեկնարկին և սա իրապես կարևոր եմ համարում, քանզի քաղաքացիական հասարակությունն իր լուրջ դերակատարությունն ունի գործընկերության առաջնահերթությունների առաջ մղման գործում:

Ինչ վերաբերում է «Արևելյան գործընկերության» ընթացքին, ապա կա մեկ մտահոգիչ խնդիր՝ դա «Արևելյան գործընկերության» խորհրդարանական ձևաչափի՝ «Եվրանեսթի» աշխատանքների մեկնարկի ձգձգումն է: Նշեմ, որ արևելյան գործընկերներից Հայաստանն առաջինն է կազմավորել «Եվրանեսթում» իր ազգային պատվիրակությունը և առաջինն է ուղարկել իր դիտողություններն ու առաջարկները «Եվրանեսթի» կանո-

նադրության վերաբերյալ: Սակայն գործընկերության խորհրդարանական ձևաչափը, բոլորիս հայտնի պատճառներով, ձգձգվում է: Մինչդեռ, այդ ֆորմատը, օգտագործելով խորհրդարանական դիվանագիտության առավել ճկուն մեխանիզմները, կարծում եմ, խիստ արդյունավետ աշխատանք կտանի թե՛ երկկողմ, թե՛ բազմակողմ ձևաչափով, ինչը «Արևելյան գործընկերության» կարևոր բաղադրիչներից է:

- Վերջին շրջանում հաճախակի են դարձել խոսակցությունները ԵՄ-ի հետ ասոցիացման համաձայնագիր ստորագրելու հավանականության մասին: Ինչպե՞ս եք գնահատում այդ հեռանկարը, և արդյո՞ք Հայաստանը կարող է ապահովել այն չափանիշները, որոնք անհրաժեշտ են այդ գործընթացի համար:

- Արդեն իսկ Եվրահանձնաժողովին տրված է մանդատ՝ Հայաստանի հետ ասոցիացման համաձայնագրի կնքման բանակցություններ սկսելու շուրջ, և առաջիկայում այդ բանակցությունները կմեկնարկեն: Թե ինչքա՞ն կտևեն բանակցությունները, դժվար է ասել, քանզի այն կախված է Հայաստանին առաջադրված խնդիրների լուծման արդյունավետությունից: Իսկ խնդիրները բազմաթիվ են՝ սկսած կառավարման համակարգի բարելավումից, մինչև կոռուպցիոն խնդիրներ, մաքսային, արդարադատության համակարգերի լրջագույն ռեֆորմներ, մարդու իրավունքի պաշտպանություն և այլն: Այո, մենք լրջագույն խնդիրներ ունենք լուծելու, և եթե եվրոպական մեր ձգտումը ինքնանպատակ չէ, իսկ ես վստահ եմ, որ ինքնանպատակ չէ, ապա ասոցիացման համաձայնագրի բանակցությունները արդյունավետ ավարտ կունենան:

- «Արևելյան գործընկերության» ծրագիրն ինչ-որ իմաստով Եվրամիության «Նոր հարևանության քաղաքականության» շարունակությունն ու բաղադրիչն է: Ինչպե՞ս եք գնահատում «Նոր հարևանության քաղաքականության» ծրագրի արդյունավետությունը և որպես եվրաինտեգրման հարցերով հանձնաժողովի նախագահ, Ձեր կարծիքով, այսօր Հայաստանը՝ որպես հարևան, որքանո՞վ է մոտեցել Եվրոպային:

- Ինչպես արդեն նշեցի՝ «Արևելյան գործընկերությունը», ի տարբերություն «Հարևանության քաղաքականության», ենթադրում է հարաբերությունների որակական նոր փուլ, որի արդյունավետությունը կախված է լինելու բացառապես մեր երկրի քաղաքական կամքից: «Հարևանության քաղաքականությունն» իր բոլոր գործիքներով աշխատել է բավականին արդյունավետ, սակայն, եթե նախկինում ԵՄ-ի համար մեր տարածաշրջանը դիտվում էր որպես մեկ միասնական միավոր, որի հանդեպ պետք էր ցուցաբերել մեկ միասնական մոտեցում, «Արևելյան գործընկերության» ծրագիրը ենթադրում է ԵՄ-ի հետ երկկողմ առավել սերտ հարաբերություններ, որտեղ շարժիչ ուժը լինելու է Հայաստանի պատրաստակամությունը՝ հաստատված պլատֆորմների առաջ մղման գործում: Ինչ վերաբերում է հարցին, թե որքանո՞վ ենք մենք մոտեցել Եվրոպային, ապա մենք մշտապես եղել ենք հե՛նց այդ՝ եվրոպական արժեհամակարգի կրող:

Լ. ՍԵՅՐԱՆՅԱՆ

ԵՎՐՈՊԱՆ ԼԱՎ ՕՐԻՆԱԿ Է ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ

Հայաստան-Եվրամիություն հարաբերությունների վերաբերյալ մեր հարցերին են պատասխանում «Գրանդ Թորնթոն Ինթերնեյշնլ» (Grand Tornton International) աուդիտորական և խորհրդատվական ընկերության ԱՊՀ ներկայացուցչության տնօրեն Արմեն Փինարբասին և արվեստների քննադատ Նազարեթ Կարոյանը:

- Վերջին տարիներին բավական ակտիվացել են Հայաստանի՝ եվրոինտեգրմանն ուղղված ծրագրերը, քննարկումները: Գործողության մեջ են Եվրամիության «Նոր հարևանության քաղաքականության» և «Արևելյան գործընկերության» ծրագրերը: Ինչպե՞ս եք գնահատում այս գործընթացը:

Արմեն Փինարբասի- Թույլ տվեք հարցը դիտարկել ԱՊՀ երկրների հարթությամբ: Ի տարբերություն ԱՊՀ մի շարք երկրների, ինչպես, օրինակ, Ղազախստանը, Ուկրաինան, Վրաստանը, Հայաստանը մեկ քայլ առաջ է: Կարծում եմ՝ Հայաստանի առավելություններից մեկն այն է, որ Հայաստանը Սփյուռք ունի: Հայաստանի զարգացման կարևորագույն ազդակներից մեկն էլ Եվրամիության, Համաշխարհային բանկի աջակցությունն է: Հենց Եվրամիության զանազան ծրագրերը մեծ նպաստ բերեցին Հայաստանին: Ուրախալի է այն, որ այդ ծրագրերը դեռևս շարունակվում են: Պետք է նկատել նաև, որ Հայաստանը կարողանում է ճիշտ կազմակերպել նոր փոփոխությունների ներդրումը:

- Նման ծրագրերի արդյունքում Եվրոպան ցանկանում է ունենալ ավելի ժողովրդավար, եվրոպական արժեքներ կրող հարևաններ: Ըստ Ձեզ՝ որքանո՞վ և ե՞րբ Հայաստանը կարող է հասնել նման կարգավիճակի:

Արմեն Փինարբասի - Դժվար է միանշանակ պատասխանել, բայց, կարծում եմ, որ նման ծրագրերի շարունակելիությունը կարևոր է մեր հասարակության համար: Աշխարհում Եվրոպայի ապրելակերպը, մտածելակերպը, արժեհամակարգը հրաշալի օրինակ է բոլորի համար: Այդ պատճառով, որքանով Հայաստանը շատ ստանա Եվրամիության կողմից աջակցություն, այդքան այն մեր օգտին կաշխատի: Ես, արդեն 25 տարի է, Ֆրանսիայում եմ ապրում և համոզված եմ, որ եվրոպական երկրները մեզ փոխանցելու դեռ շատ բան ունեն:

Նազարեթ Կարոյան- Բնականաբար, Եվրոպան կուզենա ունենալ հարևաններ, որոնք կանգնած են իրենց արժեհամակարգին մոտ՝ իրենց մտածելակերպով, հասարակության կառուցվածքով, այսինքն՝ Եվրոպան ցանկանում է ունենալ անվտանգ, գոնե չեզոք, եթե ոչ՝ լավ հարևաններ: Ինձ համար դժվար է ասել, թե Հայաստանը երբ կարող է հասնել նման

կարգավիճակի, թեպետև Հայաստանում մշակութային, քաղաքական առանձին միջավայրեր փորձ են անում, որ այդ ժամկետը հնարավորինս շուտ մոտենա: Այդ հաշվով մեր հասարակության, իշխանությունների մեջ ձգտումը կարծես թե արտահայտված է, բայց այն շատ ավելի մակերեսային է, չեն մշակվում ծրագրային, մշակութային քայլեր, որպեսզի այդ օրը շուտ մոտենա:

- *Իրականում որքանո՞վ է հասարակությունն իրեն ներգրավված զգում դրանում:*

Նազարեթ Կարոյան - Ընդհանրապես մեր հասարակությունն օտարված է իր ճակատագիրը որոշելու հարցում, ինչ-որ առումով անտարբեր է այն գործընթացների նկատմամբ, որոնց մեջ Հայաստանը ներգրավված է՝ թե՛ միջազգային, թե՛ ներքին կյանքի կերտման տեսակետից: Վերջին ժամանակներս տեսանելի է հասարակական կյանքի ակտիվացում, նոր միջավայրերի ձևավորում, որոնք հասկանում են, որ իրենց բարեկեցությունը, արժանապատիվ միջավայրում ապրելու հնարավորությունը կախված է իրենց ակտիվությունից: Եվ հույս ունենք, որ հասարակական կյանքի անդրադարձմամբ այս նոր բողբոջները կդառնան ռեսուրսներ մեր երկրում իրավիճակի փոփոխությանը՝ մշակութային, քաղաքական, ստեղծագործական և բոլոր առումներով:

Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

• ԵՄ հիմնական մարմիններն են՝ Եվրոպական խորհրդարանը (ընտրվում է ԵՄ անդամ երկրների քաղաքացիների կողմից), ԵՄ խորհուրդը (ներկայացնում է ԵՄ անդամ-երկրների ազգային կառավարությունները), Եվրահանձնաժողովը (գործադիր մարմին, ներկայացնում է ԵՄ ընդհանուր շահերը), Եվրոպական դատարանը և Աուդիտորների միությունը (վերահսկում է ԵՄ բյուջեն):

• Եվրոպական միության դրոշի վրա պատկերված 12 աստղերը որևէ կապ չունեն անդամ երկրների թվի հետ: Դրանց թիվը 12 է, քանի որ 12-ը ավանդաբար համարվել է կատարելության, լիարժեքության և միասնության խորհրդանիշ:

• ԵՄ պաշտոնական կարգախոսն է՝ Միասնություն՝ բազմազանության մեջ (In varietate concordia), իսկ ԵՄ-ի՝ հիմնը՝ «Ջոն ցնծությանը» (հատված Բեթհովենի 9-րդ սիմֆոնիայից): ԵՄ տարածքը կազմում է՝ 4.89 մլն ք/կմ: Քաղաքական կենտրոններ են հանդիսանում՝ Բրյուսելը, Ստրասբուրգը, Լյուքսեմբուրգը, Հաագան, Մայնի Ֆրանկֆուրտը: ԵՄ բնակչությունը կազմում է 499.6 մլն մարդ:

• ԵՄ-ի աջակցությամբ ՀՀ-ում իրականացվել և ներկայումս իրականացման փուլում են մի շարք ծրագրեր՝ ամենատարբեր ոլորտներում: Տնտեսական, քաղաքական և սոցիալական բարեփոխումներին աջակցելու նպատակով հիմնադրվել և գործում է Քաղաքական և իրավական աջակցության հայ-եվրոպական կենտրոնը (AEPLAC): Ընթացքի մեջ է 10 տարի տևողությամբ և 100 մլն եվրո ընդհանուր արժեքով Սննդի անվտանգության ծրագիրը: Իսկ Եվրոպական հարևանության ծրագրի շրջանակներում 2007-2010թթ. ՀՀ- ի համար նախատեսված է 98.4 մլն եվրո:

• Շենգենյան համաձայնագիրը՝ ԵՄ որոշ անդամ երկրների քաղաքացիների անձնագրային մաքսային վերահսկողությունը վերացնելու մասին, ստորագրվել է 1985թ. հունիսի 14-ին, Լյուքսեմբուրգի Շենգեն քաղաքում, սակայն ուժի մեջ է մտել 1995թ. մարտի 26-ից: Մեծ Բրիտանիան և Իռլանդիան համաձայնագիրը ստորագրել են՝ սահմանափակ մասնակցության պայմանով: Նորվեգիան, Իսլանդիան և Շվեյցարիան մտնում են շենգենյան գոտու մեջ՝ չլինելով ԵՄ անդամներ:

• Եվրոպական հարևանության ծրագրով նախատեսված Գործողությունների ծրագրի ընդունումից ի վեր, 2006թ. համեմատությամբ ԵՄ-Հայաստան ապրանքաշրջանառությունն աճել է մոտ 18 տոկոսով: Այժմ ԵՄ-ն Հայաստանի թիվ 1 առևտրային գործընկերն է: Հայաստանի արտաքին առևտրաշրջանառության մոտ 40 տոկոսը բաժին է ընկնում ԵՄ-ին:

• ԵԽ ԽՎ-ն ԵԽ 2 հիմնարար մարմիններից մեկն է: Այն խորհրդատվական մարմին է և կազմված է բոլոր անդամ երկրների ներկայացուցիչներից: ԵԽ ԽՎ-ն Եվրոպայի՝ միջխորհրդարանական համագործակցության ամենահին (առաջին) կառույցն է: ԵԽ ԽՎ-ն իր առաջին նիստը գումարել է 1949թ. օգոստոսի 10-ին:

• Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսը ֆորում է, որտեղ քննարկումներ և հանդիպումներ են ունենում տեղական և տարածքային ընտրովի իշխանությունները: Կոնգրեսը պաշտոնապես հիմնադրվել է 1994թ. և հանդիսանում է ԵԽ-ի անբաժանելի մասը: Կոնգրեսը կազմված է երկու պալատներից՝ Տեղական իշխանությունների պալատ և Ռեգիոնների պա-

լատ: Գործունեությունն իրականացվում է Քարտուղարության միջոցով, որի աշխատավայրը Եվրոպայի պալատն է (Ստրասբուրգ):

• Եվրախորհրդարանի ընտրություններում ԵՄ քաղաքացիներն ընտրում են կուսակցություններին, որոշ երկրներում՝ նաև անկախ պատգամավորների: Եվրախորհրդարանի կազմում կան խմբակցություններ, որոնց մեջ էլ այդ կուսակցությունները մտնում են: Ներկայումս ամենամեծ ներկայությունը խորհրդարանում ունի աջ ցենտրիստական Եվրոպական ժողովրդական կուսակցությունը, կամ, ինչպես նրանց ընդունված է անվանել՝ եվրոպական դեմոկրատները՝ 264 մանդատ: Երկրորդ տեղում սոցիալիստներն են՝ 161 մանդատներով, որոնց հաջորդում են լիբերալները՝ 80 մանդատ, «կանաչները»՝ 53, Միավորված ձախերը՝ 32, Եվրոպայի ազգերի միությունը՝ 35, և անկախ պատգամավորները՝ 18 տեղ: Այսպես կոչված, «մյուսները», որոնց թվին են դասվում ծայրահեղ աջ ուղղվածության կուսակցությունները, վերջին ընտրություններում ստացել են 93 մանդատ:

• Եվրոպական խորհրդարանը ստեղծվել է 1957թ.: Սկզբնական շրջանում անդամները նշանակվում էին ԵՄ անդամ երկրների կողմից: 1979 թվականից Եվրախորհրդարանի անդամներն ընտրվում են ԵՄ անդամ երկրների քաղաքացիների կողմից: Նշենք, որ ընտրողների ամենաբարձր մասնակցությունն արձանագրվել է հենց առաջին ընտրությունների ժամանակ՝ 69%: Եվրախորհրդարանն ունի 736 պատգամավոր: Յուրաքանչյուր երկիր կարող է ունենալ ֆիքսված թվով մանդատներ՝ կախված բնակչության թվից: Ամենից շատ՝ 99 պատգամավոր ունի Գերմանիան, ամենից քիչ՝ 9՝ Մալթան:

• Եվրոպական խորհրդարանն ունի 3 կարևոր գործառույթներ՝ օրենսդրություն, բյուջետային քաղաքականություն և վերահսկողություն: Օրենսդրական մասով հարկ է նշել, որ Եվրախորհրդարանը կիսում է օրենսդիր գործառույթները ԵՄ խորհրդի հետ, որը նույնպես ընդունում է օրենքներ: Նիցցայի պայմանագրի ստորագրումից հետո գործում է, այսպես կոչված, համատեղ որոշումների սկզբունքը, որի համաձայն՝ Եվրախորհրդարանն ու ԵՄ խորհուրդն ունեն հավասար լիազորություններ, և հանձնաժողովի ներկայացրած ցանկացած օրինագիծ պետք է քննարկվի 2 ընթերցմամբ: Եվրախորհրդարանը և ԵՄ խորհուրդը համատեղ ձևավորում են բյուջետային հանձնաժողով, որն էլ մշակում է ԵՄ բյուջեն: Եվ վերջապես՝ Եվրախորհրդարանն իրականացնում է վերահսկողություն՝ Եվրահանձնաժողովի գործունեության նկատմամբ:

• ԵՄ-ում բնակվում է աշխարհի բնակչության ընդամենը 7%-ը, սակայն արտահանման ծավալներով Եվրամիությունն աշխարհում առաջինն է, իսկ ներմուծման ծավալներով՝ երկրորդը: Եվրամիության ամենամեծ առևտրային գործընկերը ԱՄՆ-ն է, նրան հաջորդում է Չինաստանը: Եվրամիությունը կարևոր առևտրային գործընկեր է նաև զարգացած ոչ բարձր մակարդակ ունեցող երկրների համար, որոնցից շատերին ԵՄ-ն տվել է եվրոպական շուկա մուտք գործելու արտոնություններ (օրինակ՝ մաքսատուրքերից ազատում): Իր այս քայլերով ԵՄ-ն նպատակ ունի խթանել զարգացող երկրների տնտեսական աճը՝ ողջ աշխարհում:

• Միասնական շուկան Եվրամիության գլխավոր ձեռքբերումներից մեկն է: Վերջին 50 տարիների ընթացքում, և հատկապես՝ 1980-ականներից սկսած, շատ բան է արվել ԵՄ անդամ ազգային տնտեսությունների միջև եղած խոչընդոտները

վերացնելու և միասնական շուկա ստեղծելու ուղղությամբ: Արդյունքում՝ թեժացել է մրցակցությունը՝ իր հետ բերելով ապրանքների ու ծառայությունների ավելի լավ որակ ու ցածր գներ: Գնանկման միտումները առավել ակնառու են ավիափոխադրումների և հեռահաղորդակցության ոլորտներում: Օրինակ՝ Հոլանդիայից ԱՄՆ զանգահարելը 1997-2006թթ. ընթացքում էժանացել է մոտ 10 անգամ:

• Բոլոնիայի համալսարանը աշխարհի ամենահին համալսարաններից մեկն է: Հիմնադրվել է 11-րդ դարում, տարբեր վայրերից ժամանած իրավագիտություն ուսանողների միավորման արդյունքում: Համալսարանին վերաբերող առաջին խարտիան հրապարակվել է 1158թ. Ֆրիդրիխ I Բարբոսա կայսեր կողմից: 13-րդ դարում այն ուներ մոտ 10.000 ուսանող: 20-րդ դարում համալսարանն իր առաջատար դիրքերը զիջեց Հռոմի և Նեապոլի համալսարաններին, սակայն մինչ այժմ հանդիսանում է Իտալիայի կարևորագույն գիտակրթական կենտրոններից մեկը:

• ERASMUS MUNDUS-ը բարձրագույն կրթության բնագավառում համագործակցության և զարգացման ծրագիր է, որը ներկայացնում է Եվրամիությունը՝ որպես աշխարհի մասշտաբով կրթական կենտրոն: Եվրոպական խորհրդարանի կողմից հաստատվել է 2001թ.: 2003թ. դեկտեմբերի 5-ին ծրագրի նախապատրաստման գործընթացն ավարտվեց և որոշում կայացվեց այն ընդունելու մասին: Ուժի մեջ է մտել 2004թ. հունվարի 20-ից: ERASMUS MUNDUS ծրագիրը նախևառաջ ուղղված է եվրոպական բարձրագույն կրթության համակարգի որակի և գրավչության բարձրացմանը և լիովին համահունչ է Բոլոնյան գործընթացի գաղափարին: Մինչև վերջերս ERASMUS MUNDUS-ն իրականացնում էր հիմնականում մագիստրոսական ծրագրեր, իսկ այս տարվանից կրթաթոշակներ են հատկացվում նաև դոկտորանտուրայի համար: Նշենք, որ այս ծրագրով 2004թ.-ից ի վեր Հայաստանից կրթաթոշակներ են ստացել 15 հոգի:

• «Եվրոպական Հարևանության քաղաքականությունը մեզ հնարավորություն է տալիս ի մի բերել ներքին և արտաքին գործիքները՝ հակամարտությունների լուծման գործում ներդրում ունենալու համար և մեր հարևանների հետ աշխատելով պայքարել այնպիսի սպառնալիքների դեմ, ինչպիսիք են ահաբեկչությունը, ծայրահեղականությունը և կազմակերպված հանցավորությունը»,- իր «Հարևանությունից դեպի ինտեգրացիա» աշխատությունում գրում է Եվրահանձնաժողովի արտաքին կապերի գլխավոր տնօրինության ղեկավար էնեկո Լանդաբուրուն:

• «Անջատողական հակամարտությունների լուծման և կարգավորման համատեքստում եվրոպականացումը պետք է հասկանալ որպես մի գործընթաց, որը նախաձեռնվում և խթանվում է եվրոպական ինստիտուտների (առաջին հերթին՝ Եվրամիության) կողմից հակամարտության վերջնական հանգուցալուծումը կապելով հակամարտող կողմերի՝ ԵՄ կառույցներին ինտեգրացվածության աստիճանի հետ»,- այսպես է սահմանել «եվրոպականացման» հայեցակարգը ԵՄ-ի Եվրոպական քաղաքական դասընթացների կենտրոնը:

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ